

«Հաստատում եմ»

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար

Ս.Թումանյան



« 05. 2019թ.

Կ.Տ.

ՎԱՆԱԶՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 36

Վանաձոր 2019



Ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի կազմը

Անուն, Ազգանուն	Պաշտոնը հաստատությունում	Պատասխանատվությունը խմբում
Ս.Թումանյան	ՎՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար	Հավատարմագրման գործընթացի պատասխանատու: Ինքնավերլուծության 1-ին, 2-րդ, 7-րդ չափանիշների պատասխանատու
Ա.Սանթրյան	ՎՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Ինքնավերլուծության 6-րդ, 8-րդ չափանիշների պատասխանատու
Մ.Շահվերդյան	ՎՊՀ ՈԱԿ-ի ղեկավար	Ինքնավերլուծության 1-ին, 2-րդ, 10-րդ չափանիշների պատասխանատու
Ա.Գևորգյան	ՎՊՀ ուսումնամեթոդական վարչության պետ	Ինքնավերլուծության 4-րդ չափանիշների պատասխանատու
Ա.Առուստամյան	ՎՊՀ կրթական բարեփոխումների բաժնի վարիչ	Ինքնավերլուծության 3-րդ և 5-րդ չափանիշների պատասխանատու
Մ.Միրադեղյան	ՎՊՀ անվտանգության ինժեներ	Ինքնավերլուծության 7-րդ չափանիշների պատասխանատու
Լ.Սարգսյան	ՎՊՀ լրատվության և տպագրության բաժնի վարիչ	Ինքնավերլուծության 8-րդ չափանիշների պատասխանատու
Գ.Դոխոյան	ՎՊՀ համագործակցության և կապերի բաժնի պետ	Ինքնավերլուծության 9-րդ չափանիշների պատասխանատու



Օգտագործած հասցեավումներ

ՀՀ ԿԳՆ	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն
ՎՊՀ	Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան պետական համալսարան
ԳԱՑ	Գնահատման առանցքային ցուցիչներ
ՄԿԾ	Մասնագիտական կրթական ծրագիր
ՈԱ	Որակի ապահովում
ՈԱԿ	Որակի ապահովման կենտրոն
ՈԱՖԱ	Որակի ապահովման ֆակուլտետային աշխատախումբ
ՈՆԱ	Որակի ներքին ապահովում
ՈԿ	Որակի կառավարման
ՈԱԱԿ	Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամ
ՊԴ	պրոֆեսորադասախոսական անձնակազմ
ՌԾ	Ռազմավարական ծրագիր
ՊԻՄԲ	Պլանավորում, իրականացում, ստուգում, բարելավում
ՈԻԽ	Ուսանողական խորհուրդ
ՈՒԳԸ	Ուսանողական գիտական ընկերություն
ՄՈԻՀ	Մասնագիտական ուսումնական հաստատություն
ՄՌԿ	Մարդկային ռեսուրսների կառավարում
ՖՌԿ	Ֆինանսական ռեսուրսների կառավարում



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	5
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ	5
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	6
ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ	8
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	8
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ	15
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ.....	24
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ.....	37
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ.....	56
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ.....	67
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ	75
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Ը.....	89
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅՆԱՅՈՒՄ Ը.....	96
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ	110
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿ.....	119



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ուսումնական հաստատության կառավարումը, կրթական և հետազոտական գործունեությունը և հասարակությանը մատուցվող ծառայությունները պարբերաբար բարելավվում են և միտված են.

- որակի մշակույթի ձևավորմանը,
- կրթական այնպիսի միջավայրի ստեղծմանը, որը կնպաստի աշխատաշուկայի հարափոփոխ պահանջներին համապատասխան ուսումնառողների գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը,
- մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացմանը և հասարակության առջև հաշվետվողականության ապահովմանը,
- ազգային և միջազգային մակարդակներում ուսումնական հաստատության կողմից մատուցվող ծառայությունների համադրելիության և մրցունակության, ինչպես նաև թափանցիկության ապահովմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Չափանիշներ՝ հատուկ առանձնացված ձևակերպումներ են, որոնք վերստուգելի տերմիններով սահմանում են հաստատության գործունեության կամ իրականացվող կրթական ծրագրերի բնութագրերը:

Չափորոշիչներ՝ ձևակերպումներ են, որոնք սահմանում են յուրաքանչյուր չափանիշին համապատասխանելու չափը և անաչառ գնահատելու համար անհրաժեշտ պայմանները:



ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վանաձորի պետական համալսարանը (այսուհետ՝ Համալսարան) ունի 50 տարվա պատմություն: Այն Կիրովականի (հետագայում՝ Վանաձորի) պետական մանկավարժական ինստիտուտի (այսուհետ՝ Ինստիտուտ) իրավահաջորդն է: Ի սկզբանե բուհի հիմնադրումը նպատակ ուներ ապահովելու Հայաստանի հյուսիսարևելյան տարածաշրջանի կրթօջախները մանկավարժական կադրերով:

Իր գործունեության սկզբնական տարում (1969թ.) Ինստիտուտում կրթությունը իրականացվել է ուսուցման հեռակա ձևով, սակայն արդեն 1970թ-ին ներդրվել է նաև առկա ուսուցման համակարգը:

1989թ-ին կազմակերպվել և շուրջ 3 տարի գործել է Ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղը: Ինստիտուտի գործունեության բնականոն ընթացքը խաթարվեց 1988թ. դեկտեմբերի 7-ի՝ Սպիտակի ավերիչ երկրաշարժի պատճառով: 1988-2000 թթ-ի ընթացքում Ինստիտուտը երկրաշարժի գոտու այլ հիմնարկ-ձեռնարկությունների նման իր գործունեությունը շարունակել է դժվարին պայմաններում:

2001 թվականից կրում է մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի անունը:

2002-2014թթ-ին Ինստիտուտը գործել է որպես պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ):

2014 թ-ին ստացել է Համալսարանի կարգավիճակ, իսկ 2016 թ-ին վերակազմավորվել է «Վանաձորի պետական համալսարանի հիմնադրամ»-ի:

Բուհի զարգացման համար բեկումնային էր Բոլոնիայի գործընթացին Հայաստանի միանալը (Բերգեն, 2005): Համաձայն Բոլոնյան գործընթացի հիմնարար սկզբունքների՝ բուհում ներդրված է բարձրագույն մասնագիտական կրթության եռաստիճան համակարգ՝ 2006թ-ից իրականացվել է ասպիրանտուրայի, 2008-2009 ուստարվանից՝ մագիստրատուրայի ընդունելություն:

Ներկայում Համալսարանն ունի առկա ուսուցման համակարգում՝ 36, հեռակա ուսուցման համակարգում՝ 32, մագիստրատուրայում՝ 23 առկա և 4 հեռակա ՄԿԾ-ներով կրթություն իրականացնելու պետական լիցենզիա:

Համալսարանն իրավունք ունի ասպիրանտական կրթություն իրականացնել 7 մասնագիտություններով:

Բացի ՈԱՇ-ի 6-8-րդ մակարդակներից՝ ներկայումս Համալսարանը կրթություն է իրականացնում նաև ՈԱՇ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներով. 2008 թ-ից ՎՊՄԻ ՊՈԱԿ-ին է միացել 2002 թ-ից ՀՀ կառավարության որոշմամբ գործող Ջորիկ Գևորգյանի անվան վարժարանը (այժմ՝ ՎՊՀ հենակետային վարժարան), իսկ 2011թ-ին կազմավորվել է ՎՊՀ քոլեջը, որը իրականացնում է միջին մասնագիտական կրթություն:

Այսօր տարածաշրջանի ուսուցիչների շուրջ 70%-ը բուհի շրջանավարտներ են, որոնք բարձր վարկանիշ ունեցող մասնագետներ և կրթական գործի կազմակերպիչներ են: ՄՈՒՀ-ի շրջանավարտների թիվը մեծ է նաև համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի մեջ (134 անդամ), որոնցից գիտական աստիճան և կոչում ունեն 77-ը:



ՎՊՀ-ն 2015 թ. հոկտեմբերի 15 –ին անցել է պետական հավատարմագրում 4 տարով, ինչը պարտավորեցնող է և վկայում է, որ ՄՈԻՀ-ը՝ համաձայն իր առաքելությանը, մատուցում է պետության կողմից ճանաչվող և ներքին ու արտաքին շահակիցներին վստահություն ներշնչող ծառայություններ:

2014-2018թթ. ռազմավարական մարտահրավերները ուղղված էին եվրոպական չափանիշների հետ համադրելի կրթական և գիտահետազոտական գործունեության իրականացմանը, ինչը ոչ միայն ներքին խթան է եղել ՎՊՀ-ի զարգացման հեռանկարների տեսանկյունից, այլև բխել է արտաքին շահակիցների պահանջարկից:

Ներկայացվող ինքնավերլուծությունը ևս մեկ հնարավորություն է համակողմանի գնահատելու անցած ճանապարհը, հանդես գալու մասնագիտական հանրության առջև, ներկայացնելու նվաճումները, ցույց տալու բացթողումները և ակնկալելու գործունե աջակցություն ներքին և արտաքին շահակիցներից:



ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Համալսարանի հիմնական հավակնությունները արտահայտված են նրա առաքելությունում և տեսլականում, որը արտահայտված է կանոնադրությամբ: «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը կրթական և գիտական գործունեություն իրականացնող պետական հիմնադրամ է, որտեղ մասնագիտական կրթական ծրագրերը մշակված են վերջնարդյունքների հիման վրա և իրականացվում են որակավորումների ազգային շրջանակի բակալավրիատի, մագիստրոսի և հետազոտողի մակարդակով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱԾ-ին:

- [ՎՊՀ-ի կանոնադրությունը](#)
- [ՎՊՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրները](#)

Հիմքեր Հաստատության որակավորումների շրջանակը (Հավելված [1.1.1](#))
 ՎՊՀ 2014-2018 ռազմավարական ծրագիրը ([Հավելված 1.1.2](#))
 ՎՊՀ Բարելավման ծրագիրը ([Հավելված 1.1.3](#))

Համալսարանի տեսլականում արտացոլված են հավակնությունները՝ ձգտել բավարարել աշխատաշուկայի պահանջները՝ պատրաստելով կոմպետենտ մասնագետներ, և դառնալ ՀՀ հյուսիսային տարածաշրջանի կայուն զարգացում ապահովող, կրթական ծառայություններ մատուցող և գիտական հետազոտություններ իրականացնող առաջատար կենտրոն: Առաքելությունը արտացոլում է Համալսարանի գործունեության երեք հիմնական նպատակները, որոնց իրականացման արդյունավետությունը պայմանավորված է ներքին և արտաքին շահակիցների ակտիվ մասնակցությամբ:

Համալսարանի առաքելությունն է.

1. ձգտելով ապահովել կայուն զարգացում, կրթական և գիտական գործունեության իրականացման հիմքում դնում է շահագրգիռ կողմերի կարիքների բավարարմանն ուղղված քաղաքականություն:
2. ձգտելով պատրաստել հիմնարար և կիրառական գիտելիքներով, գործնական հմտություններով օժտված կոմպետենտ մասնագետներ, ձևավորում է ուսանողակենտրոն միջավայր, որտեղ ուսանողը հանդես է գալիս որպես կրթական գործընթացի սուբյեկտ:
3. ընդունելով հասարակության առջև իր պատասխանատվությունը, նպաստում է անհատի շարունակական զարգացմանը, ստեղծում է նպաստավոր միջավայր համակողմանի զարգացած անձի ձևավորման համար:

2014-2018 թթ. ռազմավարությունը ուղղված էր առաքելության նպատակների



իրականացմանը: Հավատարմագրման գործընթացի արդյունքում փորձագիտական խմբի եզրակացությունների ուղղորդմամբ վերագնահատվեցին ռազմավարական որոշակի խնդիրները և մշակվեց բարելավման ծրագիր, որտեղ հաշվի առնվեցին վեր հանած բացթողումները: Բարելավման ծրագիրը մեծապես նպատակաուղղվեց ռազմավարական խնդիրների լուծմանը:

Վերոնշյալ ժամանակահատվածում Համալսարանի ռազմավարությամբ նախանշված էին հետևյալ նպատակներն ու խնդիրները.

- կառավարման, կրթական և գիտահետազոտական գործընթացների արդյունավետ համակարգում,
- շահակիցների պահանջարկի ապահովմանն ուղղված կրթական ծրագրերի մշակում, ներդրում և իրականացում,
- ուսանողակենտրոն ուսումնառության և դասավանդման մեթոդների արդյունավետության գնահատում, առավելությունների բացահայտում, գործընթացի որակի ապահովում,
- ուսուցման և գիտահետազոտության զուգակցման արդյունավետության գնահատում,
- մտավոր, գիտատեխնիկական, կորպորատիվ մշակութային ներուժ ունեցող միջավայրի զարգացում,
- անհատի շարունակական կատարելագործում, զարգացման պայմանների բարելավում, հանրային վստահության և պատասխանատվության բարձրացում,
- ուսանողների՝ որպես անհատների, ակտիվ քաղաքացիական դիրքորոշման ձևավորման աջակցություն,
- շրջանավարտների կարերիայի կառուցման աջակցություն:

Համալսարանը իր գործունեությունը իրականացնում է ՈԱՇ-ի 4-8-րդ մակարդակներով (4-րդ և 5-րդ մակարդակը ապահովում են միջին մասնագիտական կրթություն, իսկ 6-8-ը՝ բարձրագույն մասնագիտական կրթություն):

ՉԱՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

ՎՊՀ-ի առաքելության, սահմանած նպատակների և խնդիրների վերանայման քաղաքականությունը (առկայության դեպքում) ([Հավելված 1.2.1](#))
Ներքին և արտաքին շահակիցների պահանջները բացահայտող մեխանիզմները (օրինակ՝ հարցումներ և այլն)
 ՎՊՀ-ի առաքելության վերանայումն արտահայտող որոշումներ (փաստաթղթեր) ([Հավելված 1.2.2](#), [1.2.2.ա](#))

Ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը ռազմավարական խնդիրների լուծմանն ուղղված գործողություններում համակարգվում է համապատասխան կանոնադրություններով և ընթացակարգերով: Համալսարանի կառավարման կոլեգիալ մարմիններում ընդգրկված են ուսանողության, գործատուների, դասախոսական կազմի, կառավարության կողմից նշանակված ներկայացուցիչներ: Բացի այդ, ներքին և արտաքին շահակիցները ընդգրկված են կարիքների վերհանման, վերլուծությունների, բարելավմանն ուղղված գործընթացներում:

Կարիքների վերհանումը պարբերաբար կատարվող գործընթաց է, որը իրականացվում է



ՊԻԳԲ շրթայի առաջին՝ պլանավորման փուլում, ինչպես նաև անհամապատասխանությունների հայտնաբերման և լուծված խնդիրների արդյունավետությանը, կրթության որակի բարելավմանն ուղղված որոշումների ընդունման գործընթացներում: Վերոնշյալ գործողությունները իրականացվում են հետևյալ շահակիցների մասնակցությամբ.

- ուսանողների (նպատակ ունենալով ընդլայնելու նրանց ինքնավարության սահմանները, նպաստելու ակտիվ հասարակական դիրքորոշման ձևավորմանը),
- պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի (վերհանելու կարիքները և խթանելու մասնագիտական զարգացումը, կատարելագործելու վարչական կառավարման գործընթացները),
- դիմորդների (վերհանելու ընդունելության հետ կապված խնդիրները և ՎՊՀ ուսանող դառնալու հնարավորությունը):

Ներքին շահակիցների շահերի պաշտպանությունը Համալսարանի կողմից վարվող քաղաքականության առանցքն է:

Արտաքին շահակիցները նույնպես Համալսարանի առաքելության իրականացմանը նպաստող ներուժ են: Արտաքին շահակիցներն են.

- գործատուները (որոնք Համալսարանի ծառայությունների պատվիրատուն են և մասնակցում են Համալսարանի ՄԿԾ-ների պլանավորման, ներդրման և իրականացման գործընթացներին, ներկայացնում են կրթական ծրագրերի վերաբերյալ իրենց կարծիքը և առաջարկները՝ հաշվի առնելով Համալսարանի առաքելությունը և աշխատաշուկայի պահանջները, աջակցում են իրենց հիմնարկ-ձեռնարկություններում, կազմակերպություններում և ուսումնական հաստատություններում պրակտիկաների կազմակերպմանը և անցկացմանը, ներգրավվում են ուսանողների ավարտական որակավորման քննությունների և դիպլոմային աշխատանքների պաշտպանության հանձնաժողովներում, հնարավորության դեպքում նպաստում են շրջանավարտներին աշխատատեղեր տրամադրելու գործին: Արտաքին շահակիցների բավարարվածության աստիճանը Համալսարանի գործունեության յուրահատուկ «բարոմետր» է և կարող է ծառայել որպես իրականացվող աշխատանքների չափման գործիք),
- շրջանավարտները (որոնք Համալսարանի «դեսպաններն» են և հետադարձ կապի ապահովման գործուն մասնակիցներ),
- ամբողջ հանրությունը:

Արտաքին շահակիցների կարիքների վերհանման մոտեցումները.

Արտաքին շահառուների մասնակցությունը Համալսարանի առաքելությանն ուղղված քայլերի և ռազմավարական ծրագրի (այսուհետ՝ ՌԾ) խնդիրների լուծման աշխատանքներում կանոնակարգված է: Տարածաշրջանի երեք քաղաքներում գործում են կենտրոններ, որոնք ապահովում են «Բուև-դպրոց» կապը կրթական, մշակութային, կազմակերպչական ոլորտներում:

Արտաքին շահակիցները մասնակցում են կրթական ծրագրերի մշակման, վերանայման, գնահատման փուլերին, աուդիտի կազմակերպման և իրականացման ընթացքին:

Շահակիցները մասնակցում են նաև Համալսարանի կողմից կազմակերպվող



օլիմպիադաներին, ամբիոններում անցկացվող գիտամեթոդական սեմինարներին, համաժողովներին, մշակութային միջոցառումներին:

Արտաքին շահակիցների ներգրավումը ռազմավարական խնդիրների լուծման գործընթացներում հնարավորություն է տալիս ապահովելու կապը գործատուների հետ, վերանայելու ծրագրերը, ուշադրությունը կենտրոնացնել այն վերջնարդյունքներին, որոնք առաջնային և կարևոր են: Շահակիցների մասնակցությունը օգտակար է նաև Համալսարանի առաքելության իրականացման կարճաժամկետ ծրագրերի մշակման, հաստատման, արդյունքների վերլուծության գործում: Սակայն միշտ չէ, որ այդ համագործակցության արդյունքները բավարարող են: Անկայուն, արագ փոփոխվող աշխատաշուկան հաճախ թույլ չի տալիս գործատուներին հստակ ձևակերպել իրենց պահանջները այս կամ այն կրթական ծրագրի վերջնարդյունքների և հետևաբար՝ շրջանավարտների մասնագիտական որակների մասին:

Կարիքների *ընկալումը և արտահայտումը*, վերհանումը և գնահատումը, դրանց իմաստավորումը տարբեր շահակիցների մոտ տարբեր մակարդակներով է դրրսևորվում, հետևաբար գնահատման եղանակները նույնպես տարբեր են: Այդ պատճառով կարիքների վերհանման գործընթացը իրականացվում է հարցումների, քննարկումների, ֆոկուս խմբերի, փաստաթղթերի ուսումնասիրության և վերլուծության հիման վրա:

Որակի ապահովման բոլոր չափանիշների համար մշակված է և կիրառվում է կարիքների վերհանման գործիքակազմ:

Ռազմավարական ծրագրերի և առաքելության նպատակների իրականացման գործում նկատվող դանդաղկոտության վրա ազդող գործոններն են հասարակությունում առկա կարծրատիպերը, երիտասարդ մասնագետների կարիերայի զարգացման ցածր մոտիվացիան, աշխատաշուկայի անկատարությունը և գործատուների անտարբերությունը Համալսարանում իրականացվող բարեփոխումների գործընթացի նկատմամբ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

Հիմքեր	<p>Առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման քաղաքականությունն ու ընթացակարգերը (Հավելված 1.3.1)</p> <p>Շահակիցների (դասավանդողների, ուսումնառողների) ներգրավվածությունն արտացոլող հիմքեր (Հավելված 1.3.2)</p> <p>Շահակիցներից ստացված արձագանքները (Հավելված 1.3.3)</p> <p>Ռազմավարական ծրագրի իրականացումը գնահատելու քաղաքականությունը Ռազմավարական ծրագրի իրականացման գնահատմանը նպաստող այլ հիմքեր (Հղում2) (Հավելված 1.3.4)</p> <p>ՄՈՒՀ-ի առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման տարեկան զեկույցները https://www.vsu.am/vph/iravakan-pastatxter/hashvetvutyunner</p>
--------	---

Համալսարանում ՌԾ-ի իրականացման գործընթացները պարբերաբար գնահատվում են մոնիթորինգների, հաշվետվությունների և կատարողականների միջոցով:
 Համալսարանի գործունեության արդյունքները գնահատելու համար 2016 թ.-ից



կիրառվում է գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) հավաքագրումը և վերլուծությունը, որն իրականացվում է տարին մեկ անգամ: ԳԱՑ-ը ընդգրկում է Համալսարանի գործունեության հետևյալ ոլորտները.

1. Ընդունելություն և համակազմ (13 ցուցիչ)
2. Ուսումնական գործընթաց (17 ցուցիչ)
3. Ռեսուրսներ և կառավարում (13 ցուցիչ)
4. Ենթակառուցվածքներ (10 ցուցիչ)
5. Գիտություն և նորամուծություն (10 ցուցիչ)
6. Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն (6 ցուցիչ):

ԳԱՑ-ի լրամշակման նպատակով նախաձեռնվել է նաև առաքելության և որակի ապահովման ցուցիչների ներդրման գործընթաց: Այդ ուղղությամբ իրականացվել է համեմատական վերլուծություն, կազմակերպվել են քննարկումներ և առաջարկվել է ԳԱՑ-ում ընդգրկել նաև հետևյալ ցուցիչները.

1. Կիրառական գիտելիքներով օժտված մասնագետների պատրաստում
2. Հետազոտահեն կրթության իրականացում
3. Մշակութային գործունեության իրականացում
4. Անձի շարունակական զարգացում
5. Շահագրգիռ կողմերի կարիքների բավարարում
6. Ուսանողակենտրոն ուսուցում
7. Տեղեկատվական տեխնոլոգիաներ

ՌԾ-ի իրականացման պատասխանատուները ամենամյա հաշվետվություն են ներկայացնում ֆակուլտետային գիտական խորհուրդներին, գիտխորհրդին, իսկ որակի ապահովման կենտրոնի կողմից կատարողականների վերաբերյալ իրականացվում են վերլուծություններ, արդյունքները քննարկվում են համապատասխան ստորաբաժանումների, շահագրգիռ կողմերի հետ: ՌԾ-ի իրականացման ընթացքում բարելավվող որոշ փոփոխությունները, շահառուների բավարարվածությանը, ռիսկերի առկայությանը վերաբերող տվյալները արտացոլվում են կատարողականների վերլուծություններում, ներկայացվում են գիտխորհուրդ և ընդունվում են համապատասխան որոշումներ: Հաշվետվությունները տեղադրվում են կայքում և հասանելի են բոլորի համար:

Համալսարանում մշակվել և գործում է առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման գործիքակազմ: Մասնավորապես, ՌԾ իրականացման ժամանակացույցում ներկայացված են աշխատանքի պատասխանատուները, ակնկալիքները, ռեսուրսները: Աշխատանքների արդյունքները հաշվետվության, վերլուծությունների միջոցով ներբեռնվում են տվյալների բազայում, ինչը հնարավորություն է տալիս մի կողմից տեսանելի դարձնել իրականացված աշխատանքը, մյուս կողմից՝ գնահատել արդյունքները՝ հետադարձ կապի ապահովման միջոցով: Որակի ապահովման մեխանիզմները վերանայվել են 2015-2018 թթ բարելավման ծրագրի հետ կապված: Մասնավորապես, մշակվել և ներդրվել են կառավարման համակարգի կարիքների վերհանման մեխանիզմներ, որակի գնահատման և կատարողականի գործիքակազմ, վերանայվել են մշտադիտարկման և աուդիտի իրականացման մեխանիզմները,



ընթացակարգերը, ինչը թույլ է տալիս ժամանակին ստանձնել բարեփոխումների նախաձեռնողականությունը:

Որակի ապահովման մեխանիզմները ռազմավարական խնդիրների կատարողականի որակի գնահատման հիմքն են: Որակի ապահովման մեխանիզմների կիրառումը ռազմավարության պլանավորման և իրականացման ընթացքում կատարվում է պարբերաբար իրականացվող ուսումնասիրությունների, քննարկումների, խորհրդատվությունների, վերապատրաստումների միջոցով: Ստացված արդյունքների հիման վրա ձեռնարկվում են միջոցառումներ կամ վերանայվում են գործընթացների բարելավմանն ուղղված աշխատանքները:

ՈԱԿ-ը պարբերաբար գիտխորհրդին է ներկայացնում ռազմավարական ծրագրի իրականացման ընթացքը և կատարողականը:

ՌԾ-ի իրականացման հիմնական դժվարությունը ֆինանսական մուտքերի կախվածությունն է ուսանողների վարձավճարներից, ինչը դժվարացնում է Համալսարանի կայուն զարգացման ապահովումը:

1-ԻՆ ՉԱՓԱՆԻՇԻ SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՇԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
<p>1. ՎՊՀ-ի ղեկավարության կողմից աջակցություն բարեփոխումներին և նորարարություններին:</p> <p>2. ՎՊՀ-ի բարձր հեղինակությունը որպես ՀՀ հյուսիսային տարածաշրջանի բարձրագույն կրթական հաստատություն:</p> <p>3. Ուսանողության մեծամասնության ինտեգրումը կրթական բարեփոխումներին:</p> <p>4. Համալսարանի կողմից մասնագիտական կրթության և գիտական գործունեության իրականացման գործընթացների համար համապատասխան պայմանների և ռեսուրսների առկայություն:</p> <p>5. ՎՊՀ-ի կողմից իրականացվող ՄԿԾ-ների համապատասխանություն ՈԱԾ-ի պահանջներին:</p>	<p>1. Հասարակության և գործատուների անտարբերությունը Համալսարանում իրականացվող բարեփոխումների գործընթացի նկատմամբ:</p> <p>2. Ֆինանսական կախվածությունը ուսանողների ուսման վարձավճարներից:</p> <p>3. Համադրելիության ցածր մակարդակ մարզի և Համալսարանի ռազմավարական խնդիրների միջև:</p> <p>4. Պատվիրատու-կատարող կապի բացակայություն՝ մարզի կարիքների բավարարմանն ուղղված ձեռնարկչատիրական և նորարարական աշխատանքների իրականացմանն ուղղությամբ:</p> <p>5. Դանդաղ կոտորություն ռազմավարական ծրագրերի և առաքելության նպատակների իրականացման գործում:</p>
ԱՐՏԱՔԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՏԱՆԳՆԵՐ
<p>1. Հետադարձ կապի ընդլայնում ՎՊՀ-ի շրջանավարտների հետ:</p> <p>2. Արտաքին շահառուների գործունեություններ գրավում Համալսարանի</p>	<p>1. Ուսանողների թվի նվազում՝</p> <p>ա) մարզում այլ բուհերի, երևանյան բուհերի մասնաճյուղերի ընդունելության ցածր շեմի կամ առանց քննությունների ընդունելության</p>



<p>ռազմավարական նպատակների իրականացման գործընթացներում:</p> <p>3. Գործատուների ներգրավումը շրջանավարտների կարիերայի կառավարման գործընթացներում:</p> <p>4. Համագործակցային կապերի խորացում մարզի ուսումնական հաստատությունների և հիմնարկ-ձեռնարկությունների հետ՝ Լոռու տարածաշրջանի զարգացման խնդիրների լուծմանը սատարելու նպատակով:</p> <p>5. Նորարարական գործունեության զարգացմանը նպաստող մասնակցային մշակույթի կայացման միտումների առկայություն:</p>	<p>կազմակերպման,</p> <p>բ) ներքին տեղաշարժի, արտագաղթի, մայրաքաղաքային բուհերի հետ մրցակցային ցածր գրավչության պատճառներով:</p> <p>2. Սահմանափակ աշխատաշուկա և գործազրկության ավելացում բարձրագույն կրթությամբ մասնագետների համար:</p> <p>3. Երիտասարդների շրջանում բարձրագույն կրթության նկատմամբ հետաքրքրության նվազում:</p> <p>4. Մարզում և հանրապետությունում երիտասարդ մասնագետների կարիերայի կառուցմանն ու զարգացմանն ուղղված քաղաքականության բացակայություն:</p>
<p>SWOT վերլուծության ուժեղ կողմերի և պոտենցիալ հնարավորությունների կիրառմանը կնպաստի թույլ կողմերի և վտանգների բացասական ազդեցությունների նվազեցմանը: Այս ուղղությամբ հետագա քայլերն են.</p> <ul style="list-style-type: none"> • ՎՊՀ-ի 2019-2023 թթ.-ի ռազմավարության համահնչության ապահովումը մարզի ռազմավարությանը և գործատուների պահանջարկներին: • Ազգային և միջազգային աշխատաշուկաների միջև հնարավոր կապերի ստեղծում, ընդլայնում՝ մասնագիտական կրթության ոլորտում բարեփոխումների և նորարարությունների իրականացնելու միջոցով: • Համալսարանի կողմից մասնագիտական համակողմանի կրթություն և գիտական լիարժեք գործունեություն իրականացնելու նպատակով համապատասխան պայմանների բարելավում, ռեսուրսների ապահովում: • Առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման քաղաքականության կատարելագործում: • Ֆինանսական մուտքերի կայունության ապահովում ներդրումային ծրագրերի և ձեռնարկատիրական գործունեության ծավալման միջոցով: 	



II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառնումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի նորմերը:

ՎՊՀ-ի հավակնությունները կառավարման և վարչարարության ոլորտում (այն է՝ անձնակազմի զարգացում, ֆինանսական գործունեություն, իրավական դաշտի ապահովում, գործավարության ինստիտուցիոնալ քաղաքականության կատարելագործում և այլն) ներկայացված են համալսարանի զարգացման 2014-2018 թթ. ռազմավարական ծրագրում, որոնք շարունակում են մնալ արդիական նաև 2019-2023թթ ռազմավարության համար:

ՎՊՀ-ի կառավարումը առավելապես իրականացվում է ՊԻԳԲ (սլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում) մեխանիզմներով կոլեգիալ և մասնակցային ղեկավարման սկզբունքների զուգակցմամբ՝ կառավարման համակարգում մշակված կանոնակարգերին համապատասխան ընթացակարգերով, չնայած կոլեգիալ որոշումների կայացման ընթացքում երբեմն դիտվում են կառավարման կենտրոնացված մոտեցումների և մտածելակերպի իներցիոն դրսևորումներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. Հաստատության կառավարման համակարգն ապահովում է սահմանված էթիկայի կանոններին համապատասխան որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Կառավարման մարմինների կանոնակարգերը ([ՎՊՀ կանոնադրություն/](#)) և աշխատակարգերը ([Հոգաբարձուների խորհուրդ](#), [Գիտական խորհուրդ](#), [Ռեկտորատ](#)) [Ֆինանսական աուդիտի նշանակման կանոնակարգը](#) և [աուդիտի արդյունքները](#) , [ՎՊՀ -ի ռեկտորին առընթեր ֆինանսատնտեսական հանձնաժողովի կանոնակարգ](#), [ՎՊՀ-ի ստորաբաժանումների ցանկը](#) և գործունեության կանոնակարգերը([Ստորաբաժանումների կանոնակարգեր](#)) <https://www.vsu.am/vph/iravakan-pastatxter/kanonakarger/162-storabajanum-verab> Կառավարման մարմինների ընտրության կարգերը ([ՎՊՀ կանոնադրություն 23-63 կետեր](#)) [Կազմակերպական կառուցվածքի սխեմատիկ պատկերը՝ ըստ ենթակայության և հաղորդակցության կապերի](#) [ՎՊՀ -ի աշխատակիցների աշխատանքի ընդունման, տեղափոխման, հեռացման, առաջխաղացման, խրախուսման ու տույժի կիրառման քաղաքականությունն ու ընթացակարգերը](#)

ՎՊՀ-ն՝ որպես հիմնադրամ, ունի կառավարման որոշակի ինքնավարություն, ինչը սահմանված է համակարգի համար ՀՀ իրավական նորմատիվային փաստաթղթերով ու օրենքով, և որոնց հիման վրա մշակված են Համալսարանի կառավարման համակարգի կանոնակարգերը և ընթացակարգերը՝ զարգացման 2014-2018 թթ. ռազմավարությանը



համապատասխան: Համալսարանի կառավարման օղակների և ստորաբաժանումների կառուցվածքը, աշխատանքի նկարագիրը, գործողությունների և որոշումներ կայացնելու մեխանիզմները, պատասխանատվությունը, նյութատեխնիկական բազան և ֆինանսական ռեսուրսները արտահայտված են համապատասխան կարգերում, որոնք մատչելի են և հասանելի բոլոր շահակիցների համար www.vsu.am պաշտոնական կայքում:

Համալսարանի կառուցվածքը կազմված է երեք հիերարխիկ աստիճանակարգերից:

"ՎՊՀ-ի կառավարումը հիմնված է իր ինքնավարության վրա՝ միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ, հիմնադրի, լիազոր մարմնի, ՎՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի, ՎՊՀ-ի գիտական խորհրդի և ռեկտորի գործառույթների իրականացմամբ"(կետ 24), որը հնարավորություն է տալիս պետական մարմիններին, ներքին և արտաքին շահակիցներին ակտիվ մասնակցություն ունենալ Համալսարանի առաքելության և ռազմավարական նպատակների իրականացման քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում:

Կառավարման երկրորդ մակարդակը ապահովում է Համալսարանի ընթացիկ կառավարումը կառույցների միջոցով, այն է՝ գիտական խորհուրդ, ռեկտորատ, վարչություններ և բաժիններ, որոնց աշխատանքները համակարգվում են ռեկտորի և պրոռեկտորների կողմից: Այդ մակարդակում են ապահովվում *օպերատիվ* կառավարումը, ինչպես նաև հրատապ խնդիրների լուծումները, արտակարգ իրավիճակներում որոշումների ընդունումը, ՀՀ Կրթության և գիտության նախարարության կարգադրությունների և հրամանների կատարումը և այլն: Այն ունի համակարգման և վերահսկման լայն շրջանակ (պրոռեկտորներ, ուսումնամեթոդական վարչություն, պրոֆեսորադասախոսական կազմ, վարչական և տեխնիկական աշխատողներ, ուսանողներ, գործատուներ), ովքեր լուծում են *հեռանկարային* ռազմավարական խնդիրներ՝ կապված արտաքին միջավայրի փոփոխություններին հարմարման, աշխատաշուկայի վերլուծության և կանխատեսումների, նորարարությունների ներմուծման, միասնական եվրոպական կրթական տարածքին ինտեգրման, համապատասխան քաղաքականության իրականացման, Կրթական բարեփոխումների Բոլոնյան գործընթացի պահանջների կատարման, զարգացման ռազմավարության, PR-գործունեության, հանրության հետ կապի ապահովման, կրթական գործընթացի որակի կառավարման և այլնի հետ:

Երրորդ մակարդակը՝ ստորաբաժանումների կառավարումը, հնարավորություն է տալիս ներքին շահակիցներին անմիջական մասնակցություն ունենալ իրենց վերաբերվող խնդիրների վերհանմանն ու լուծմանը: Կառավարման այդ մակարդակի մասնակիցները գործում են իրենց աշխատանքային պայմանագրի գործառույթներին և պաշտոնի անձնագրին համապատասխան:

Համալսարանի կառավարման վերոնշյալ բոլոր մարմիններում մասնակցային սկզբունքով ներգրավված են ուսանողական խորհրդի /ինքնավար մարմին/ ներկայացուցիչներ առկա և հեռակա ուսուցման համակարգից:

Համալսարանի կառավարման համակարգի բարելավման ուղղությամբ կարևոր դեր է ունեցել 2018թ. հաստիքացուցակում ներառված [147 պաշտոնների անձնագրերի](#) հաստատումը, որոնք մշակվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 873-Ն հրամանով հաստատված «Զբաղմունքների դասակարգիչի» հիման վրա և հիմք են հանդիսացել նոր հաստիքների տեղակալման համար:



Համալսարանի կառավարման համակարգի զարգացմանը հատկապես նպաստեց մասնակցությունը «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքարը», «GOVERN» Tempus ծրագրերին, որի արդյունքում մշակվեց և գործածության մեջ դրվեց Էթիկայի կանոնակարգը, վերանայվեցին ՄՌ-ի կառավարման և թափանցիկության խնդիրները, ֆինանսների, ՄԿԾ-ների հետազոտությունների, ուսումնասիրությունների, կառավարման, հաշվետվողականության ընթացակարգերը, պաշտոնի անձնագրերը, և ընդունվեցին համապատասխան որոշումներ: Մասնավորապես, վավերացվեց հոգաբարձուների խորհրդի թիվ 26 Լ (10.05.2018թ.) կառուցվածքային փոփոխություններին ուղղված որոշումը (ռեկտորի՝ 2018թ. թիվ 330 Լ/Կ(17.05.2018թ. հրաման)՝ նախկին բաժինների վերակառուցումը մարդկային ռեսուրսների կառավարման (ՄՌԿ) և ֆինանսական ռեսուրսների կառավարման (ՖՌԿ) բաժինների:

Համալսարանը՝ որպես հիմնադրամ, պոստենցիալ հնարավորություններ ունի բարելավելու իր ֆինանսատնտեսական քաղաքականությունը: Համալսարանի ֆինանսական մուտքերը հիմնականում առաջանում են ուսանողների վարձավճարներից, պետության կողմից անվճար համակարգում սովորողների վարձի փոխհատուցումից, դրամաշնորհներից և միջազգային ծրագրերից: Համալսարանի ֆինանսատնտեսական քաղաքականությունը ձևավորվում է ֆինանսատնտեսական հանձնաժողովի եզրակացությունների և խորհրդի կողմից ընդունված որոշումների հիման վրա: Համալսարանի բյուջեն, ռազմավարական ծրագիրը և հաստիքացուցակը հաստատվում են հիմնադրի կառավարման՝ հոգաբարձուների խորհրդի կողմից: Ֆինանսական ռեսուրսների բաշխման հիմքում դրված են ստորաբաժանումների կողմից ներկայացված հայտերը՝ իրենց կարիքների և կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նյութերի, գույքի, միջոցների ձեռքբերման համար, որի հիման վրա էլ կազմվում է բյուջեի համապատասխան տողը:

Հոգաբարձուների խորհրդի 24.03.08-Լ 2019 որոշմամբ Համալսարանի 2017 և 2018 թթ. ֆինանսական գործունեության աուդիտ է անցկացվել «ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» ՓԲԸ-ի կողմից և «բավարար» է գնահատվել ֆինանսական հաշվետվությունների «կառուցվածքը, բովանդակությունը՝ ներառյալ բացահայտումները և դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձություններն այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացում» 07.03.2019:

ԶԱՓՈՐՈՇԻՉ ք. ՄՌԻ-Հ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Հիմքեր	Դասախոսների և ուսանողների մասնակցությունն ապահովող կարգերը Որոշում կայացնելու գործընթացներում ուսումնառողների և դասավանդողների մասնակցությունը երաշխավորող քաղաքականությունը և ընթացակարգերը, կետ 28-29
--------	--

Համալսարանի կառավարման համակարգում տեղի ունեցած փոփոխությունները պայմանավորված են ինքնավարության ոլորտի ընդլայնմամբ: Զարգացումը գնում է ժողովրդավարացման ուղղությամբ, որի արդյունքում կարևորվում է ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը կառավարման գործընթացներում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին անհամեմատ բարձրացել է նրանց ակտիվությունը կառավարման համակարգի վերաբերյալ կարծիքների արտահայտման և որոշում կայացնելու տեսանկյունից:



Համալսարանի հոգաբարձուների խորհուրդը կազմավորված է հիմնադրի, լիազոր մարմնի, պրոֆեսորադասախոսական և ուսանողության կողմից ընտրված խորհրդի 6-ական անդամներից, որոնք հնարավորություն ունեն արտահայտելու իրենց կարծիքը կառավարչական որոշումների կայացման վերաբերյալ:

Համալսարանի գիտխորհրդի կազմի 25%-ը ուսանողներ են: Դասախոսական կազմը հիմնականում ներկայացված է ամբիոնի վարիչների միջոցով:

Ֆակուլտետային խորհուրդներում ուսանողների և դասախոսների թվակազմը հետևյալն է.

Ֆակուլտետ	ուսանող	դասախոս	հրավիրյալ	Ի պաշտոնե	ընդամենը
Բանասիրական	6	5	3	6	20
Կենսաբանաքիմիական	5	5	5	5	20
Պատմաաշխարհագրական	5	5	5	5	20
Մանկավարժության	6	6	1	7	20
Ֆիզիկամաթեմատիկական ¹	5	15			20

Ուսանողների համախմբման, կարիքների վերհանման տեսանկյունից կարևոր է համագործակցության դաշտի ընդլայնումը, ուսանողակենտրոն մոտեցումը: 2017-2018 թթ. ընդլայնվել է առկա և հեռակա համակարգում սովորող ուսանողների մասնակցությունը կարիքների վերհանման և որոշումների կայացման գործընթացներում: ՈԻԽ-ի կողմից բարձրացված հարցերը գիտխորհրդի քննարկման են ներկայացվում ուսանողների միջոցով:

Համալսարանի կառավարման հետ կապված խնդիրների քննարկման, կառուցողական մթնոլորտի ձևավորման նպատակով ՈԱԿ-ի կողմից պարբերաբար կազմակերպվում են քննարկումներ ուսանողների և դասախոսների հետ, որտեղ յուրաքանչյուրը հնարավորություն ունի բարձրացնելու իրեն հուզող հարցերը, արտահայտելու տեսակետներ, կատարելու առաջարկություններ: Նման հարթակի առկայությունը կարևորվում է հատկապես ուսանողների և դասախոսների կողմից կարիքների վերհանման, խնդիրների ազատ ներկայացման և իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Համալսարանի կառավարման օղակների կողմից «բաց դռների» քաղաքականությունը հնարավորություն է տալիս շահակից կողմերին՝ բարձրացնելու իրենց հարցերը և հաճախ խնդրի լուծումը գտնելու փոխհամաձայնության կամ փոխզիջումների միջոցով:

ԶՍՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈԻՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

Հիմքեր	<p>Գործողությունների կարճաժամկետ ծրագիրը և իրականացման հիմքերը (Հավելված 2.3.1)</p> <p>Գործողությունների միջնաժամկետ ծրագիրը և իրականացման հիմքերը (Հավելված 2.3.2)</p> <p>Գործողությունների երկարաժամկետ ծրագիրը և իրականացման հիմքերը (Հավելված 2.3.3)</p>
--------	--

¹ Տվյալ ֆակուլտետի խորհրդի կազմը վերանայված է ֆակուլտետային խորհրդի ձևավորման կարգին համապատասխան



2015թ. Համալսարանի զարգացման ռազմավարական պլանի վերանայումը պայմանավորված էր հավատարմագրման արդյունքներով: Բարելավման ծրագիրը, ըստ էության, միջնաժամկետ ծրագիր էր, որը հնարավորություն տվեց վերանայել և գնահատել Համալսարանի 2014-2018 թթ. զարգացման հայեցակարգը և ռազմավարական նպատակները:

21.12.2015–23.01.2016թթ. Համալսարանի ՈԱԿ-ի կողմից իրականացվել է «Ստորաբաժանումների ռազմավարական ծրագրերի և պլանների իրականացման գործընթացի ուսումնասիրության արդյունքների վերլուծություն», որի նպատակն էր.

1. վերահաստատել ստորաբաժանումների ռազմավարական ծրագրերի և ռազմավարական պլանների համապատասխանությունը համալսարանի զարգացման ռազմավարությանը և ներկայացնել առաջարկություններ,

2. վերլուծել ռազմավարական պլանով նախատեսված աշխատանքների իրականացման ընթացքը և ներկայացնել բարելավման առաջարկություններ:

2015-2016թթ-ին իրականացվել են նաև ամբիոնների և ֆակուլտետների ռազմավարական ծրագրերի համեմատական վերլուծություններ, որոնց հիման վրա առաջարկվել են ֆակուլտետների առաքելությունից և ուսումնական ու գիտահետազոտական գործունեության կարիքներից բխող փոփոխություններ:

Ռազմավարական և բարելավման ծրագրերի հիման վրա մշակվել են կարճաժամկետ պլաններ, որոնք հիմք են տարբեր օղակների օպերացիոն պլանների մշակման և իրականացման համար:

Պլանավորված աշխատանքների իրականացման գործընթացը համակարգվում և կառավարվում է ոլորտի պատասխանատուների կողմից: Աշխատանքների կատարման և արդյունավետության վերաբերյալ տեղեկատվությունը ստացվում է հետադարձ կապը ապահովող հարցումների և հաշվետվությունների միջոցով: Ռազմավարական ծրագրերի կատարողականների արդյունքների վերլուծության վերաբերյալ ՈԱԿ-ի կողմից պարբերաբար ներկայացվում են զեկույցներ գիտխորհրդին և տրվում հանձնարարականներ ստորաբաժանումներին:

ԶՄՓՈՐՈՇԻՉ Պ. ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Հիմքեր	<p>ՄՈՒՀ-ի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության համար կիրառվող մեխանիզմները և գործիքները (Հավելված 2.3.4)</p> <p>Պլանների գնահատման և վերանայման պաշտոնապես ընդունված քաղաքականությունը</p> <p>Այլ հիմքեր և վերլուծություններ</p>
--------	---

Հավատարմագրման գործընթացը ցույց տվեց, որ Համալսարանը կառավարման ոլորտում անելիքներ ունի: Ուստի վերջին տարիների ընթացքում, ելնելով բարելավման պահանջներից և գերակա խնդիրներից, հետևողականորեն իրականացվել են գործընթացի փոփոխություններ:

Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի կողմից 2017թ. ապրիլ-մայիս ամիսներին մշակվել է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի ուսումնաօժանդակ անձնակազմի ատեստավորման, վերապատրաստման» կանոնակարգը, որը ուսումնասիրվել և ներկայացվել է տարբեր օղակների՝ կարծիքի, իսկ այնուհետև՝ գիտխորհուրդ:



Սահմանված կարգով կադրերի վերապատրաստման և ատեստացիայի կազմակերպման պատասխանատվությունը դրված է մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի վրա: Կարգի ընդունմամբ 2019թ-ին կկարգավորվի ուսումնասովանողական անձնակազմի ատեստավորման գործընթացը:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի 2017թ-ին հայտարարված մրցույթի նախապատրաստման գործընթացում բարձրացել է ՄՌԿ բաժնի պատասխանատվությունը:

Նշենք, որ Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հաստիքների ձևավորման գործընթացը ղեկավարվում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից և ՄՌԿ բաժնի աշխատանքների դրվածքի էական վերափոխման դեպքում գործընթացը կարող է տեղափոխվել նրանց վարույթի տակ:

ՄՌԿ բաժինը թափուր հաստիքների հայտարարման կամ առաջաշահման, առանց մրցույթի նոր պայմանագրի կնքման խնդիրը կարգավորում է ամբիոնների հետ: Կան համապատասխան կարգեր, սակայն սրանք ևս որոշակի փոփոխման կարիք ունեն: Առաջիկայում մինչև նոր հայտարարության հրապարակումը քննարկման կդրվի գործող կարգերում փոփոխություններ կատարելու հարցը: 2018թ-ին քննարկվել են դեկանի ընտրության կարգը և ֆակուլտետի օրինակելի կանոնադրությունը, որոնք արդեն ընդունված են:

2018թ. հայտարարվել է պրոֆեսորադասախոսական կազմի կողմից պաշտոնակալված 62.75 հաստիքի մրցույթ, կայացվել է 41 հաստիքի մրցույթ, չեղարկվել է 21.75-ը, հայտարարվել է նաև 3 ամբիոնի վարիչների մրցույթ, որը, սակայն, կասեցվել է. թափուր տեղերի այլ մրցույթներ ևս հայտարարվել և կազմակերպվել են:

2018թ. դադարեցվել և նոր պայմանագրեր չեն կնքվել արհեստանոցի (մետաղամշակման) վարիչի, գիտաշխատախմբի ղեկավարի հետ: Առաջին աշխատատեղը չի կարող համալրվել և կառուցվածքային փոփոխություն է առաջարկվում, քանի որ «Տեխնոլոգիա և ձեռնարկչատիրություն» ՄԿԾ-ն ներկայումս ներդրված չէ, իսկ արհեստանոցը ուսումնական է:

ՄՌԿ-ն իր գործառույթների շրջանակներում մասնակցել է ԳԱՑ-ի կազման աշխատանքներին (քանակական տվյալների կտրվածքով):

2018թ. ավարտին է հասցվել էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրումը: Սակայն պետք է ընդգծել, որ ծրագիրը մշակողների կողմից (ծրագիրը մշակվում էր «Գովեռն» դրամաշնորհի շրջանակներում, որտեղ համալսարանն ուներ համամասնական ֆինանսական ներդրում) ամբողջությամբ չի տրամադրվել, քանի որ մշակված և օգտագործվող մոտեցումները ծրագրային խնդիրներ են առաջացրել:

Էականորեն բարեփոխման կարիք ունեն ֆինանսական ռեսուրսների բաժնի աշխատանքները: Ի դեպ, դեռևս այն կրում է և մնում իր հին անվանման դրոշմի ծիրում: Բաժնի քաղաքականության նախնական տարբերակ ներկայացվել է, սակայն այն վերամշակման կարիք ունի: Թերևս ճիշտ կլիներ ոլորտի քաղաքականության և ռազմավարության մշակման համար պատվերի իջեցումը. պետք է ֆինանսական ներդրում կատարել՝ համոզված լինելով, որ կլուծվի նաև ռիսկերի կառավարման խնդիրը: Այստեղ առկա է նաև կադրերի պաշտոնների անձնագրերից բխող որակավորումների անհամապատասխանության խնդիրը. ՖՌԿ բաժինը այսօր չի կարող վերլուծաբան չունենալ: Խնդրի կարևորումը ավելի քան հրատապ է:

Պետք է նաև հստակ տարբերվեն ֆինանսների կառավարման, ռիսկերի վերլուծության և



հաշվապահական գործառնությունների իրականացման գործընթացները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. Քաղաքականություն և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

Հիմքեր	<p>ՄՈՒՀ-ի կառավարման և վարչարարության որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը</p> <p>Որակի ապահովման քաղաքականություն</p> <p>Որակի կառավարման կանոնակարգ</p> <p>Քաղաքականության և ընթացակարգերի իրականացման սկզբունքները /կետ 2.3/</p> <p>Քաղաքականության և ընթացակարգերի իրականացման մեխանիզմները</p> <p>Այլ հիմքեր և վերլուծություններ (Որակի կառավարման խնդիրները) (Հավելված 2.5.1)</p>
--------	--

Համալսարանի որակի ներքին համակարգը ներառում է որակի ապահովում, որակի կառավարում, որակի բարելավում գործառնությունները, որոնց հիմքում դրված է կառավարման գործընթացային մոդելը՝ պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում /ՊԻԳԲ/:

Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ցուցիչների հիման վրա մշակվել է ռազմավարական պլանի իրականացման հաշվետվողականության սխեմա, ինչը հնարավորություն է տալիս աշխատանքները համապարփակ ձևով ամփոփել ըստ կատարողականի արդյունքների: Որակի ապահովման կենտրոնի աշխատանքների համակարգման, բարելավման ծրագրի կատարողականի գնահատման մեխանիզմների կատարելագործման նպատակով փորձարկվում է CALS համակարգը:

Հաշվետու ժամանակաշրջանում վերանայվել են համալսարանի գործունեության համակարգման իրավական ակտերը:

Առաքելության և նպատակների վերանայման նպատակով իրականացվել է SWOT վերլուծություն ռազմավարական ծրագրի բոլոր ուղղություններով:

Որակի ապահովման գործընթացներին ուսանողների ներգրավվածության մեծացման և ակտիվացման նպատակով կազմակերպված աշխատանքների ընթացքում բարձրացված հարցերի հիման վրա նրանց համար կազմվել է որակի ապահովման ձեռնարկ:

Տեղեկատվության հավաքագրման գործող մոդելի ուսումնասիրության վերաբերյալ ներկայացված առաջարկությունների հիման վրա կատարելագործվել են որակի կառավարման հետադարձ կապի մեխանիզմները: Փորձարկվում է ստորաբաժանումների հաշվետվողականության սխեմա, որը հնարավորություն է տալիս աշխատանքների արդյունքները ողակիորեն տեղադրել ներքին ցանցում և հասանելի դարձնել ստորաբաժանումների համար:

Որակի կառավարման քաղաքականության հիմնական սկզբունքները, խնդիրներն ու գործառնություններն ներկայացված են Համալսարանի որակի կառավարման կանոնակարգում, որը նախատեսվում է վերանայել 2019 թ-ին, այն կատարելագործելու և համաձայնեցնելու ընդունված միջազգային չափորոշիչների (ISO 9000-2001, ISO 9001-2001, ISO 9004-2001):

ՉԱՓՈՐՈՇԻՉ Գ. ՄՈՒՀ- ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:



<p>Հիմքեր</p>	<p>Մասնագիտությունների կրթական ծրագրերի գնահատման մեխանիզմները Այլ գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմները Տեղեկատվության հավաքագրման համակարգը (Հավելված 2.6.1)</p>
<p>Համալսարանում գործող բակալավրիատի և մագիստրոսական կրթական բոլոր ծրագրերը մշակված են վերջնարդյունքների հիման վրա, համադրելի են որակավորումների ազգային շրջանակին և լիցենզավորված են:</p> <p>ՄԿԾ-ների արդյունավետության գնահատման համար Համալսարանում կիրառվում են տարբեր մեխանիզմներ և գործիքներ: Մասնավորապես, պարբերաբար իրականացվում են մշտադիտարկումներ և ներքին աուդիտ: ՄԿԾ-ի իրականացման որակը ու համապատասխանությունը առաքելությանը, սահմանված նպատակներին և կրթական չափորոշիչներին գնահատվում է Համալսարանի ԿԾ-ների մշտադիտարկման և աուդիտի ընթացակարգերով, որոնց արդյունքում մշակվում և իրականացվում է կրթական ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պլան:</p> <p>Մշտադիտարկման արդյունքների հիման վրա բացահայտվում և լուծվում են խնդիրներ, Տրամադրվում են խորհրդատվություն հետևյալ ուղղություններով.</p> <ul style="list-style-type: none"> • ՄԿԾ-ների բարելավում, • վերանայման պարբերականություն, • հետադարձ կապի մեխանիզմների ամրապնդում: <p>ՄԿԾ-ի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը մշտադիտարկման և աուդիտի միջոցով հետադարձ կապ է ապահովում և գնահատման արդյունավետ մեխանիզմներից է:</p> <p>Որակի ապահովման աուդիտը իրականացվում է ըստ կանոնակարգի և ոլորտի համապատասխան ընթացակարգի: Այն հնարավորություն է տալիս կրթության որակի վերահսկման միջոցով.</p> <ul style="list-style-type: none"> • նախագծել և ներդնել համակարգի ռիսկերի բացահայտման արդյունավետ մեխանիզմներ, իրականացնել ԿԾ-ների ներբուհական որակի ապահովման ներքին ստուգումներ, • վերլուծությունների հիման վրա անցկացնել ուսանողների մասնագիտական պատրաստվածության որակի բացահայտման փորձաքննություն, • բացահայտել տվյալ մասնագիտությունների գծով շրջանավարտների իմացության մակարդակից գործատուի բավարարվածության աստիճանը և այլն: <p>Աուդիտի միջոցով ապահովվում են համալսարանի արդյունավետ գործունեությունը, կայունությունը, նախանշվում հետագա զարգացման և կատարելագործման հեռանկարները բազմագործոնային մրցակցության պայմաններում, հնարավորություն է ստեղծվում պահպանելու և արդյունավետ օգտագործելու բուհի առկա ռեսուրսները՝ ներառյալ ընդհանուր ներուժը, ժամանակին բացահայտելու և նվազեցնելու ռիսկային գործոնի ազդեցությունը որակի կառավարման ոլորտում:</p> <p>Համալսարանի գործունեության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմները են նաև հարցումները, ֆոկուս-խմբերը, քննարկումների և կարիքների վերհանման տարբեր գործիքակազմերը, որոնք օգտագործվում են փորձարկումից հետո:</p>	



Իրականացված աշխատանքների վերլուծության, կարիքների վերհանման մեխանիզմները բազմազան են. հաճախ խնդիրները վերհանվում են, որոշումներ ընդունվում, սակայն, ինչպես ցույց է տալիս փորձը, առկա ռեսուրսներով և նյութատեխնիկական միջոցներով հնարավոր չէ իրականացնել ծառայած բոլոր խնդիրները, որոնց մի մասի լուծման և զարգացումների համար անհրաժեշտ են լրացուցիչ միջոցներ, ներդրումներ: Ներկայումս դրանք սահմանափակ են:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

Հիմքեր	Հրապարակային տեղեկատվության տարածման քաղաքականությունը և ընթացակարգերը Հրապարակումների մատչելիությունը և օբյեկտիվությունը գնահատող մեխանիզմները
---------------	--

Կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական ու որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմների ներդրումը և կրթության որակի շարունակական բարելավման խթանումը բոլոր մակարդակներում տարբեր են, որոնց մի մասն է կրում պաշտոնական բնույթ: Կրթության որակի ապահովման վերաբերյալ հետազոտությունների, մշտադիտարկման և աուդիտի արդյունքները տեղադրվում են ներքին ցանցում, վեբ-կայքում, երբեմն սոցիալական ցանցերում: Ուսումնասիրության արդյունքների և գնահատման վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն է տրվում ՈԱԿ-ի կողմից գիտխորհրդին, ռեկտորատին, իսկ ՈԱՖԱ-ը՝ ֆակուլտետային խորհրդներին:

Ցանկացած նպատակով և տարբեր եղանակներով իրականացվող հետազոտությունը տվյալների հավաքագրման, մշակման և վերլուծության գործընթացների ամբողջություն է, որի արդյունքների գնահատումը շահառուների կողմից կարևոր գործիք է աշխատանքների վերանայման, շտկման և կատարելագործման համար: 2018 թ. Համալսարանի կայքում տեղադրվող նյութերի վերաբերյալ հանրության կարծիքի մշտադիտարկման արդյունքները վկայում են համալսարանի բաց և թափանցիկ գործունեության մասին, որը չնայած հասանելի է բոլոր շահակիցներին, սակայն արտաքին շահակիցների կողմից բավարար ուշադրության չի արժանանում: Նույնը չենք կարող ասել սոցիալական ցանցի միջոցով տարածվող տեղեկատվությունների, կամ հետազոտությունների արդյունքների, տեղադրված նյութերի վերաբերյալ: Սոցիալական ցանցերում ավելի հաճախ և հիմնականում դրական են գնահատվում ՈԱ և ՈԱՖԱ կողմից անցկացված միջոցառումները:

2-ԴԴ ՉԱՓԱՆԻՇԻ SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՇԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
1. Հստակ ձևակերպված առաքելություն, մշակված ռազմավարություն: 2. Կառավարման գործընթացների ապահովման համար նյութական, ֆինանսական և մարդկային ռեսուրսների	1. Աշխատակիցների և շահակից կողմերի ոչ բավարար ներգրավվածություն կառավարման գործընթացներում: 2. Ֆինանսական մուտքերի և անկատարություն: Լրացուցիչ մուտքերի



<p>անկայություն:</p> <p>3. Կառավարման կոլեգիալ և մասնակցային սկզբունքների զուգակցում:</p> <p>4. Կառավարման և վարչարարական փորձ ունեցող մասնագետների առկայություն:</p> <p>5. Ռեսուրսների մատչելիություն:</p> <p>6. Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն:</p> <p>7. Մշակված և ներդրված կառավարման էթիկայի կանոններ:</p> <p>8. Կոռուպցիոն ռիսկերի նվազում:</p>	<p>սահմանափակություն:</p> <p>3. Ֆինանսական ռեսուրսների կառավարման մեխանիզմների անկատարություն. ֆինանսների բաշխումն իրականացվում է ֆինանսատնտեսական հանձնաժողովի եզրակացությունների և խորհրդի կողմից ընդունված որոշումների հիման վրա:</p> <p>4. Տեղեկատվական հրապարակումների մեխանիզմների անկատարություն:</p> <p>5. Վարչական կազմի հագեցվածություն:</p> <p>6. Արտաքին շահակիցների հետ թույլ կապ:</p>
<p>ԱՐՏԱՔԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p>	<p>ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ</p>
<p>1. Արտաքին շահակիցների ներգրավվածության ընդլայնում, ակտիվության բարձրացում որակի կառավարման գործընթացներում:</p> <p>2. Կառավարման մարմիններում հեռակա ուսուցման ուսանողների ներկայացուցիչների ներգրավում:</p> <p>3. ԿԾ-ների և շնորհվող որակավորումների որակի մասին տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմների մշակում:</p> <p>4. Գործատուների պատրաստակամություն համագործակցության դաշտի ընդլայնման գործում:</p> <p>5. Նորարարական կրթության նկատմամբ բարենպաստ պայմանների և միջավայրի ստեղծում:</p> <p>6. Ֆինանսական ռեսուրսների բաշխում ըստ ռազմավարական առաջնահերթությունների:</p> <p>7. Հայաստանյան և միջազգային բուհերի հետ համագործակցության ընդլայնում:</p>	<p>1. Սոցիալ-տնտեսական վիճակի անկայունություն և ցածր մակարդակ:</p> <p>2. Մասնագիտական կադրերի աշխատաշուկայի սահմանափակություն:</p> <p>3. Մանկավարժական կադրերի շուկայի անկատարություն:</p> <p>4. Գովազդային տեղեկատվական դաշտի անկատարություն:</p> <p>5. Ուսանողների թվաքանակի նվազում:</p> <p>6. Ֆինանսական մուտքերի նվազում:</p> <p>7. Օրենսդրական դաշտի հաճախակի փոփոխություններ:</p>
<p>Կատարած ինքնավերլուծությունով վերհանված ուժեղ կողմերի վրա հենվելով և հնարավորությունները օգտագործելով՝ նախատեսվում է նվազագույնի հասցնել թույլ կողմերը և վտանգները, հետևյալ քայլերի իրականացմամբ.</p> <p>1. Կառավարման համակարգի համակողմանի վերլուծություն, ռազմավարական խնդիրների հետ համարժեքացում:</p> <p>2. Կառավարման համակարգի աշխատողների ներուժի գնահատման համակարգի ստեղծում՝ ուղղված ապագա վարչարարների ռեզերվի ստեղծմանը:</p>	



3. Կազմակերպական կառույցի բարելավված մոդելի միջոցով կառավարման տարբեր մակարդակների ապակենտրոնացում:
4. Մարդկային ռեսուրսների աստիճանային և հետևողական թարմացմամբ պրոֆեսորադասախոսական կազմի որակի և մրցունակության բարձրացում:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-երը համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Համալսարանիը պետական կրթական հաստատություն է, որի կողմից իրականացվող կրթական ծրագրերի վերջնարդյունքները համապատասխանում են շահագրգիռ կողմերի կարիքներին: Համալսարանի կրթական ծրագրերը ուղղված են նրա տեւականի իրականացմանը՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող կոմպետենտ մասնագետների պատրաստումն ապահովող կրթական ծառայությունների մատուցմանը:

Համալսարանի կրթական ծրագրերը մշակվում և վերամշակվում են բենչմարքինգի կիրառմամբ՝ հաշվի առնելով Բոլոնյան գործընթացի կարևոր սկզբունքները և հիմք ընդունելով որակավորման ազգային շրջանակների պահանջները՝ համաձայն Համալսարանի ռազմավարական նպատակներին ուղղված միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի և նպատակների իրականացման:

Ներկայում Համալսարանում իրականացվում են քայլեր՝ ուղղված հեռավար ուսուցման նախապատրաստմանը, քննարկման փուլում է գտնվում «Հեռավար ուսուցման համակարգի ներդրման քաղաքականություն» փաստաթուղթը, կատարվում է աշխատանք հեռավար ուսուցմանը վերաբերող ուսումնամեթոդական, տեխնիկական խնդիրների լուծման ուղղությամբ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

[«Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարանի զարգացման հայեցակարգ 2014-2018թթ.»](#)
[«Հայաստանի հանրապետության որակավորումների ազգային շրջանակ»](#)
 ՎՊՀ-ում իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի մասնագրեր [Մագիստրոսի հիմնական կրթական ծրագիր, https://www.vsu.am/fakultetner/banasirakan-fakultet](https://www.vsu.am/fakultetner/banasirakan-fakultet),
 Քաղաքականություն և ընթացակարգ «Մասնագիտական կրթական ծրագրի համար առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման» [\(Հավելված 3.1.1\)](#)
[Ռազմավարություն «Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և ներդրման»](#)
[Ընթացակարգ «Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և ներդրման»](#)



ներդրված ծրագրերի վերանայման ռազմավարության իրականացման»
Կարգ «ՎՊՀ կրթական ծրագրերում ընդգրկված կամրնտրական դասընթացների
ընտրության»

Ներկայում ՎՊՀ-ն կրթություն է իրականացնում բակալավրիատի 26 և մագիստրատուրայի 12 կրթական ծրագրերով՝ «Մանկավարժության բակալավր (մագիստրոս)» և մասնագիտության բակալավր (մագիստրոս) որակավորումներով:

Հիմք ընդունելով 2015-18թթ Համալսարանի զարգացման հայեցակարգում ամրագրված գերակա ուղղությունները, ինչպես նաև Լոռու մարզի զարգացման առաջնահերթությունները և աշխատաշուկայի պահանջները՝ ՎՊՀ-ում այդ ժամանակահատվածում մշակվել և ներդրվել են հետևյալ ՄԿԾ-ները.

1. 101801.01.6 Սերվիս (բակալավր, առկա),
2. 031301.01.6 Հոգեբանություն (բակալավր, առկա, հեռակա),
3. 031301.01.7 Հոգեբանություն (մագիստր, առկա),
4. 053101.02.6 Դեղագործական քիմիա (բակալավր, առկա և հեռակա),
5. 053101.02.7 Դեղագործական քիմիա (մագիստր, առկա):

Մշակվել, բայց չեն ներդրվել «Անձի հոգեբանություն» և «Բնապահպանություն և բնօգտագործում» ՄԿԾ-ները:

«Սերվիս» մասնագիտությունը համահունչ է Լոռու մարզի զարգացման հեռանկարային ուղղությանը՝ տուրիզմի զարգացմանը:

ՀՀ-ի աշխատաշուկայում առկա է ՏՏ մասնագետների մեծ պահանջարկ: Հաշվի առնելով այդ հանգամանքը, ինչպես նաև այն փաստը, որ ՏՏ ոլորտը ՀՀ տնտեսական զարգացման առաջնահերթություններից է, Համալսարանը 2015-16 ուստարվանից ներդրել է «Բնֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» (բակալավր, առկա և հեռակա) ՄԿԾ-ն, իսկ 2017-18 ուստարվանից՝ «Ռադիոֆիզիկա» ՄԿԾ-ն:

2015-16 ուստարվանից Համալսարանը, ելնելով պահանջարկից, մասնագետներ է պատրաստում «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» ՄԿԾ-ով (բակալավր, առկա):

ՄԿԾ-ների մշակման և ներդրման գործընթացը կարգավորելու համար վերանայվել են համապատասխան փաստաթղթերը, որոնք ընդունվել են գիտխորհրդի կողմից:

ՄԿԾ-ների մշակման համար հիմք են ՀՀ պետական կրթական չափորոշիչները (առկայության դեպքում), Դուբլինյան նկարագրիչները, ՀՀ որակավորման ազգային շրջանակի պահանջները, TUNING մեթոդաբանության հիմնարար սկզբունքները և մոտեցումները՝ բոլոր շահառուների մասնակցությամբ կազմակերպվող ֆոկուս-խմբերի կողմից ձևակերպված պահանջների և առաջարկների հաշվառմամբ: Բոլոր ՄԿԾ-ները մշակման փուլում ենթարկվում են համեմատական վերլուծության (բենչմարքինգի)՝ համաձայն գործող կարգի: ՄԿԾ-ների վերջնաքննությունները (կոմպետենցիաները) ձևակերպվում են համաձայն տվյալ կրթական մակարդակին ներկայացվող որակավորման ազգային շրջանակի պահանջների՝ հաշվի առնելով նաև միջազգային փորձը: ՄԿԾ-ների ուսումնական պլաններում ընդգրկված առարկաների ուսումնամեթոդական փաթեթների (ԱՈՍՓ) մշակումը իրականացվում է համաձայն համապատասխան ռազմավարության:

ՄԿԾ-ների փաթեթները և մասնագիտությունների տեղեկագրքերը տեղադրված են ՎՊՀ



կայքում: Մասնագիտությունների տեղեկագրքերի նպատակն է՝ ներկայացնել կրթական ծրագրերի բովանդակությունը, Համալսարանի կրթական գործընթացը՝ իր բոլոր բաղադրիչներով, այդ թվում նաև տվյալ կրթական ծրագրի ուսումնական պլաններում ներգրավված դասընթացներին վերաբերող տեղեկատվությունը:

Կրթական հարացույցի փոփոխությունը դասախոսակենտրոն ուսուցումից դեպի ուսանողակենտրոնը պահանջում է վերանայել կրթական գործընթացը՝ ուսանողին դարձնելով այդ գործընթացի ակտիվ մասնակիցը, շահագրգռելով նրան գործուն մասնակցություն ունենալու իր ուսումնական անձնական հետազոտող ձևավորելու գործընթացում: Համալսարանում ձևավորված նման գործընթացներից է 2017թ-ից ներդրված կամընտրական դասընթացների ընտրությունը, որն իրականացվում է հստակ ընթացակարգով, սահմանված ժամկետներում դասախոսների կողմից ուսանողներին դասընթացը ներկայացնելու և նրանց կողմից ընտրություն կատարելու միջոցով:

Ժամանակակից մասնագետին ներկայացվող պահանջներից կարևորվում է նաև գիտական հետազոտություններ իրականացնելու կոմպետենցիաների ձևավորումը, որի հիմքը պետք է դրվի բակալավրիատի կրթական ծրագրի շրջանակներում: Ելնելով այդ անհրաժեշտությունից՝ ՎՊՀ-ի բակալավրիատի կրթական ծրագրի ուսումնական պլաններում գիտահետազոտական հատվածին հատկացվում է 15 կրեդիտ՝ ներառյալ կուրսային և ավարտական աշխատանքները, ինչպես նաև «Ակադեմիական գրագիտություն» դասընթացը, որի հիմնական նպատակն է սովորեցնել ուսանողներին աշխատել գիտական տեքստերի հետ, ձևակերպել կատարած գիտահետազոտական աշխատանքները, վերլուծել գրական և փորձարարական տվյալները, կատարել ամփոփումներ և եզրահանգումներ:

Մագիստրոսական կրթական ծրագրի ուսումնական պլաններում գիտահետազոտական հատվածի ծավալը կազմում է 40% (48 կրեդիտ) և բովանդակությամբ նպատակաուղղված է հետազայում՝ կրթական երրորդ աստիճանում՝ ասպիրանտուրայում, կրթությունը շարունակելու, գիտության ոլորտում աշխատանքային գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ կոմպետենցիաների ձևավորմանը:

Համալսարանում իրականացվող ՄԿԾ-ների որակի խնդիրները կարգավորվում են որակի ապահովման կենտրոնի կողմից մշակված փաստաթղթերում ամրագրված համալիր գործողությունների, ինչպես նաև ուսանողների հետ հետադարձ կապն ապահովող հարցումների միջոցով:

Համալսարանում ՄԿԾ-ների պլանավորման, նախագծման, մշակման, մշտադիտարկման, փոփոխությունների կատարման գործընթացներում կիրառվում է բենչմարքինգ՝ համաձայն գործող կարգի: Բենչմարքինգի իրականացման ընթացքում մանրամասնորեն ուսումնասիրվում և համեմատական վերլուծություն է իրականացվում ԵՊՀ-ի, ՀՊՄՀ-ի, Վ. Յա. Բոյունովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի, Գյումրու և Գավառի պետական համալսարանների ինչպես նաև ՌԴ և ԱՊՀ այլ երկրների պետական կրթական չափորոշիչների, մի շարք առաջատար բուհերի ՄԿԾ-ների նկատմամբ: 2013-18 ուսումնական տարիների ընթացքում ուսումնասիրվել են նաև Համալսարանի՝ ERASMUS MUNDUS, ERASMUS+ շարժունության ծրագրերում, ինչպես նաև համալսարանների հզորացմանն ուղղված TEMPUS և ERASMUS+ դրամաշնորհային ծրագրերում ընդգրկված եվրոպական համակարգող համալսարանների



կրթական ծրագրերը (տե՛ս ստորև ներկայացրած ցուցակը):

1. Федеральный государственный стандарт высшего образования, бакалавриат, направление подготовки **45.03.01** “Филология”, 2013г.,
https://www.sgu.ru/sites/default/files/documents/2014/45.03.01_filologiya.doc
2. Վոլգոգրադի պետական համալսարան (ՌԴ)
3. Սարատովի Ն.Գ.Չերնիշևսկու անվան պետական համալսարան (ՌԴ)
4. Կեմերովոյի պետական համալսարան (ՌԴ)
5. Պետրոս Մեծի անվան Սանկտ-Պետերբուրգի պոլիտեխնիկական համալսարան
6. Լիպեցկի պետական մանկավարժական համալսարան
7. Բելառուսի պետական համալսարան (Մինսկ)
8. Ալեքսանդրո Իոան Կուզա համալսարան, Յաշ, Ռուսիինիա
9. Պոզնանի Ադամ Միցկևիչ համալսարան, Պոզնան, Լեհաստան
10. Բաթ Սպա համալսարան, Մեծ Բրիտանիա
11. Պորտուի համալսարան, Պորտուգալիա
12. Լինշյոփինգի համալսարան, Շվեդիա և այլն
13. Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարան
14. Արևելյան Անգլիայի համալսարան, Մեծ Բրիտանիա
15. Դարհեմի համալսարան, Մեծ Բրիտանիա
16. Պիզայի համալսարան, Իտալիա

ՉՍՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈւՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Ուսումնառության արդյունքները և նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումները և մեթոդները (Հավատարմագրման դիմում-հայտում ամրագրված 3 ՄԿԾ-ների համար) ([Հավելված 3.2.1](#), [3.2.2](#), [3.2.3](#)),
Դասավանդման և ուսումնառության մոտեցումների և մեթոդների պարբերաբար արդիականացման քաղաքականությունը և ընթացակարգերը,
Դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման քաղաքականությունը և ընթացակարգերը,
[Համապատասխան հիմքեր](#))

3 բակալավրի և 3 մագիստատուրայի ՄԿԾ, նրանց ինքնավերլուծությունները, որտեղ հիմնավորված են դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունը նախատեսված դասընթացների և ուսումնառության ակնկալվող արդյունքների (ՈւԱ) համապատասխանությունը ներկայացված են հավելվածում և ՄԿԾ-ների փաթեթներում: [Հավելված 3](#) ՄԿԾ-ների ինքնավերլուծություններ

ՉՍՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈւՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

[Ուսանողների գնահատման քաղաքականությունն ու ընթացակարգերը](#)
Հիմքեր [Ուսումնառության արդյունքներին համապատասխան սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները](#)



[Ակադեմիական ազնվության քաղաքականությունը](#), ընթացակարգերը, ինչպես նաև հիմքեր ապահովող փաստաթղթեր

Գնահատման մոտեցումների առաջավոր փորձի համեմատական վերլուծությունը ([Հավելված 3.1.1](#))

ՄԿԾ-ների մոնիտորինգի արդյունքների վերլուծություն ([Հավելված 3.3.1](#))

[Ուսումնառողների գնահատման քաղաքականության վերանայման հիմքերը և արդյունավետությունն ապահովող մեխանիզմները](#)

[Կարգ «ՎՊՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման»](#)

[Կանոնակարգ ուսանողների՝ գիտելիքների, կարողությունների, հմտությունների \(կոմպետենցիաների\) ստուգման-գնահատման միջոցների լրակազմի \(ֆոնդի\) ձեւավորման](#),

Կանոնագիրք [«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի էթիկայի»](#)

[Կարգ Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան համալսարանի ուսանողների գիտելիքների գնահատման արդյունքների բողոքարկման](#)

Հավատարմագրման դիմում-հայտում ամրագրված 3 ՄԿԾ-ների համար ներկայացնել ուսումնառության արդյունքները և համապատասխան գնահատման մեթոդները:

Համաձայն Համալսարանում գործող «Բալային-ռեյթինգային համակարգով ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ»-ի՝ գիտելիքների ստուգումը կատարվում է երկու ընթացիկ ստուգումների և մեկ հանրագումարային քննության ընդունման կարգով: Միջանկյալ ստուգումների կիրառությանը նախորդել է փորձական շրջանը, որից հետո կատարվել է հարցում՝ այդ համակարգին անցնելու վերաբերյալ ուսանողների կարծիքը պարզելու նպատակով: Մեծամասնությունը կողմ է արտահայտվել այդ համակարգին, որը ներդրվել և գործում է 2008թ-ից: Գնահատման համակարգի արդյունավետությունը, առկա թերությունները վեր են հանվում կրթության որակի կենտրոնի կողմից անցկացվող ՄԿԾ-ների մշտադիտարկման ընթացքում, ինչպես նաև ուսանողների շրջանում անցկացվող հարցումների արդյունքում: Գնահատականի հետ անհամաձայնության դեպքում ուսանողները կարող են բողոքարկել այն՝ համաձայն Համալսարանում գործող կարգի:

Գրագողության դեմ պայքարը ներկա բարձրագույն կրթության հրատապ խնդիրներից մեկն է: Համալսարանը, գիտակցելով խնդրի լրջությունը, քայլեր է ձեռնարկում այդ արատավոր երևույթի դեմ պայքարելու համար: Ուսանողների, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի էթիկայի կանոնները շարադրված են գործող կանոնագրքում: Նրանց կողմից հեղինակած գիտական հոդվածները, գիտաժողովների զեկուցումները, թեզիսները և տպագրության ներկայացվող այլ նյութերը ստուգվում են հատուկ հակազրագողական համակարգչային ծրագրերով: Նույնը վերաբերում է ՎՊՀ գիտաժողովներին ներկայացվող բոլոր նյութերին:

ԶՍՓՈՐՈՇԻՉ Պ. ՄՈւՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը:

Հիմքեր	Մասնագիտության կրթական ծրագրի տարանջատումը տեսական, գործնական
--------	---



<p>քաղաքիչների Ուսումնառողի և շրջանավարտի կրթությունը շարունակելու և կարիերայի զարգացման հնարավորությունները արտացոլող համապատասխան փաստաթուղթը Հաստատության ներսում կամ տեղական ու միջազգային այլ հաստատությունների տվյալ կամ այլ մասնագիտության կրթական ծրագրերի հետ համահունչություն ստեղծելու քաղաքականություն: Կարգ «ՎՊՀ կրթական ծրագրերում ընդգրկված կամընտրական դասընթացների ընտրության» Կարգ «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության», Կանոնակարգ «ՎՊՀ ուսանողների միջազգային ակադեմիական շարժունության կազմակերպման, արտասահմանյան բուհերում ձեռք բերած կրեդիտների ընդունման և հաշվառման»</p>						
Ուսանողների ներհոսք						
	Երկիր, հաստատություն	2014	2015	2016	2017	2018
1	Լեհաստան, Պոզնանի Ադամ Միցկևիչ համալսարան		1		10	
Ուսանողների արտահոսք						
	Երկիր, հաստատություն	2014	2015	2016	2017	2018
1	Ռումինիա, Յաշի Ալեքսանդրու Բոան Կուզա համալսարան	7	3	3	1	1
2	Նիդերլանդներ, Գրոնինգենի համալսարան	1				
3	Լեհաստան, Կրակովի Յագելոնյան համալսարան		1			
4	Լեհաստան, Պոզնանի Ադամ Միցկևիչ համալսարան	3	5	3	5	4
5	Լեհաստան, Լոձի համալսարան	1	1			
6	Լատվիա, Ռիգայի տեխնիկական համալսարան			1		
7	Շվեդիա, Մալմյոի համալսարան		1	1		
8	Շվեդիա, Լինչոպինգի համալսարան					2
9	Ռումինիա, Կլուժ, Բաբեշ Բոյայի համալսարան		1	1		
10	Պորտուգալիա, Պորտուի համալսարան		1	2	7	
11	Իսպանիա, Ռովիրայի և Վիրգիլիոսի համալսարան		1		2	
12	Իսպանիա, Գրանադայի համալսարան				1	1
13	Բուլղարիա, Ռուսեի համալսարան			1		
14	Ֆրանսիա, Մոնպելյե 2 համալսարան	1				
Դասավանդողների ներհոսք						
	Երկիր, հաստատություն	2014	2015	2016	2017	2018
1	Լեհաստան, Կրակովի Յագելոնյան համալսարան	1				
2	Լեհաստան, Ադամ Միցկևիչի անվ. համալսարան		1			
3	Լեհաստան, Սլուպսկի մերձծովյան ակադեմիա			1		
4	Լեհաստան, Պոզնանի Ադամ Միցկևիչ համալսարան			2		3
5	Իսպանիա, Գրանադայի համալսարան					1
6	Պորտուգալիա, Պորտուի համալսարան					1



7	Շվեդիա, Լինչյուպինգի համալսարան					2
Պասսավանդողների արտահոսք						
	Երկիր, հաստատություն	2014	2015	2016	2017	2018
1	Լեհաստան, Պոզնանի Ադամ Միցկևիչ համալսարան			2	5	
2	Ռումինիա, Յասիի Ալեքսանդրու Բոան Գուգա համալսարան				1*	
3	Իսպանիա, Գրանադայի համալսարան					2*
4	Պորտուգալիա, Պորտուի համալսարան			2		
5	Ֆրիդրիխ-Ալեքսանդրի անվան Էրլանգեն-Նյուրնբերգի համալսարան					1*

**Եվրոպայի գործընկեր համալսարաններում վերապատրաստում անցած ՎՊՀ դասավանդող անձնակազմի Մասնագիտության կրթական ծրագրի տարանջատումը տեսական, գործնական բաղադրիչներին.*

Համալսարանի բակալավրիատի ՄԿԾ-ների ուսումնական պլաններն ունեն հստակ կառուցվածք՝ բաղկացած հետևյալ կրթամասերից.

1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացներ,
2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացներ,
3. Ընդհանուր մասնագիտական դասընթացներ,
4. Հատուկ մասնագիտական դասընթացներ,
5. Այլ բաղադրիչներ:

Մագիստրատուրայի ուսումնական պլանների կառուցվածքը.

1. Ընդհանուր դասընթացներ,
2. Մասնագիտական պարտադիր դասընթացներ,
3. Գիտահետազոտական հատված:

Ուսումնական պլանների բոլոր կրթամասերում նախատեսված են կամընտրական դասընթացներ, որոնց ընտրությունը կատարվում է համաձայն գործող կարգի: Կամընտրական դասընթացները թույլ են տալիս ավելի ձկուն դարձնել ուսումնական պլանները, ապահովել կրթական վերջնարդյունքների (կոմպետենցիաների) ամբողջական ձևավորումը:

Կամընտրական դասընթացները որոշակիորեն նպաստում են նաև ուսանողների արտագնա շարժունության իրականացմանը, քանի որ շատ դեպքերում հնարավոր է լինում հաշվառել և փոխանցել հյուրընկալող բուհերում ձեռք բերած կրեդիտները այդ դասընթացներին հատկացրած կրեդիտների հաշվին: Սակայն հարկ է նշել, որ ակադեմիական շարժունության ծրագրերով արտերկրի գործընկեր բուհերում սովորած ուսանողների բոլոր ձեռքբերումների ընդունումը ՀՀ-ում որևէ կերպ չի ընդհանրացված. յուրաքանչյուր բուհ ունի իր սեփական մոտեցումը:

Ուսումնառողի և շրջանավարտի կրթությունը շարունակելու և կարիերայի զարգացման հնարավորությունները արտացոլող համապատասխան փաստաթուղթ,

Հաստատության ներսում կամ տեղական ու միջազգային այլ հաստատությունների տվյալ կամ այլ մասնագիտության կրթական ծրագրերի հետ համահունչություն ստեղծելու քաղաքականություն:

ՎՊՀ-ի ՄԿԾ-ների կատարելագործման, արդիականացման աշխատանքները մշտական



բնույթ են կրում և կապված են Համալսարանի որոնողական – վերլուծական աշխատանքների, ինչպես նաև որակի ապահովման կենտրոնի կողմից անցկացվող կրթական ծրագրերի մոնիթորինգի արդյունքների հետ: Այդ աշխատանքների նպատակն է վերլուծել, քննարկել ԱՊՀ (որոշ դեպքերում նաև Եվրամիության երկրների) առաջատար բուհերում տվյալ ՄԿԾ-ին առնչվող նոր մոտեցումները, կատարվող փոփոխությունները, և անհրաժեշտության դեպքում փոփոխություններ կատարել Համալսարանի ՄԿԾ-ներում: Այդ աշխատանքները որոշակիորեն նպաստում են Համալսարանի ՄԿԾ-ների միջազգայնացմանը, քանի որ արդյունքում տեղի է ունենում կրթական ծրագրերի միջև տարբերությունների նվազում:

Ուսանողների և դասավանդող անձնակազմի շարժունության հնարավորությունները պարզաբանող հիմքեր.

ՄՈՒՀ-ի ուսանողների և դասավանդող անձնակազմի շարժունությունն իրականացվում է համաձայն ՀՀ ԿԳՆ-ի և ՎՊՀ-ի կողմից ընդունված համապատասխան կարգերի : Սկսած 2012թ-ից Համալսարանը՝ որպես գործընկեր երկրի ներկայացուցիչ, ներգրավված է Եվրամիության Erasmus Mundus և Erasmus+ շարժունության դրամաշնորհային ծրագրերում, որոնց շրջանակներում եվրոպական տարբեր բուհերում 1-2 կիսամյակ սովորելու հնարավորություն են ստացել շուրջ 70 ուսանողներ: Դասավանդող անձնակազմի թվով 17 անդամներ նույնպես ստացել են եվրոպական գործընկեր համալսարաններում դասավանդելու կամ վերապատրաստվելու վերոնշյալ ծրագրերի դրամաշնորհներ:

Սակայն տվյալ բնագավառում դեռևս առկա են բավականին լուրջ խնդիրներ՝ կապված արտերկրում ուսանողների ձեռք բերված կրեդիտների ճանաչման և հաշվառման հետ, որոնք բխում են ՄԿԾ-ների տարբերություններից: Այդ խնդիրների հաղթահարումը շարունակական գործընթաց է՝ հիմնված ՄԿԾ-ների մշակման և վերանայման գործում բենչմարքինգի կիրառման, Դուբլինյան նկարագրիչների և որակավորումների ազգային շրջանակի պահանջներին ՄԿԾ-ների վերջնարդյունքների համապատասխանեցման, ուսումնական պլաններում «շարժունության պատուհանների» նախատեսման վրա:

Համալսարանում իրականացվող ՄԿԾ-ները փոփոխվում են՝ հաշվի առնելով բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնառության շրջափուլերը (համապատասխանաբար 4 և 2 տարի): Սակայն փորձ է արվում ժամանակին արձագանքել աշխատաշուկայի պահանջներին՝ մասնագիտական կոմպետենցիաների ձևավորմանը նպաստող կկանընտրական դասընթացների միջոցով: Ուսանողների՝ հարցումների միջոցով վերհանված ցանկությունները այս կամ այն առարկայի ուսումնառության վերաբերյալ հաշվի են առնվում ՄԿԾ-ների ուսումնական պլանների մեջ փոփոխություններ կատարելիս:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈւՀ-ում առկա է մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

Շահակիցների կարիքները հաշվի առնող ուսումնառության ակնկալվող արդյունքների վերանայման հաստատված քաղաքականությունը,
Արտաքին և ներքին շահակիցների կարիքների ուսումնասիրության մեթոդները,
Մասնագիտությունների կրթական ծրագրերի պարբերաբար գնահատման քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները (կցել կամ հղում կատարել համապատասխան կանոնակարգին),

Հիմքեր



Մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման ընթացակարգը (կցել կամ հղում կատարել համապատասխան փաստաթղթին),
 Գործընթացների անաչառությունն երաշխավորող մեխանիզմները (հղում կատարել կամ կցել կանոնակարգը),
Ընթացակարգ «Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և ներդրման, ներդրված ծրագրերի վերանայման ռազմավարության իրականացման»
Ընթացակարգ «Կրթական ծրագրերի մշտադիտարկման»

ՄԿԾ-ների մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման համար բուհում ներդրվել են տարբեր կանոնակարգեր և ընթացակարգեր, որոնք հնարավորություն են տալիս հետևողականորեն վերհանել առկա բացթողումները և շտկել հնարավորինս սեղմ ժամկետներում:

Առկա ընթացակարգերը թույլ են տալիս կիրառել արդեն իսկ մշակված սկզբունքները և մոտեցումները կրթական ծրագրերի վերանայման և վերամշակման գործընթացում: Իրականացվում է նաև ՄԿԾ-ների աուդիտ, որի արդյունքները ներկայացվում են համապատասխան մարմինների, ինչը ևս նպաստում է ՄԿԾ-ների գործառնության արդյունավետության բարձրացմանը: Մշակվել և կիրառվում են նաև ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմներ և մեթոդներ/օրինակ ՎՊՀ-ում ստացած կրթությունից ուսանողների, շրջանավարտների և գործատուների բավարարվածության ուսումնասիրություններ/:

ՄԿԾ-ի վերանայման և բարելավման նպատակով պարբերաբար իրականացվում է ուսումնասիրություն համապատասխան ձևաթղթերի միջոցով:

Մշտադիտարկման ձևաթղթերում շեշտը դրված է ՄԿԾ-ի իրականացման երկու հիմնական չափանիշների վրա`

- դասավանդում, ուսումնառություն և գնահատում
- որակի ապահովում:

Մշակվել և փորձարկվել են ՄԿԾ-ի մոնիթորինգի **իրականացման ձևաթղթեր, որի հիմքում դրված է հետազոտության տրամաբանական շղթայի/ ալգորիթմի մեխանիզմներ.**

- տվյալների մուտքագրում/ պրոբլեմային իրավիճակի նկարագրություն
- հետազոտության հիմնական քայլերի մշակում և իրականացում
- ստացված արդյունքներ/ վերլուծություն և եզրակացություն
- վերջնարդյունքներ/ համապատասխանությունը չափորոշիչներին:

Իրականացված հետազոտություններից մեկում պատահականության սկզբունքով ուսումնասիրվել է ութ ՄԿԾ /ուսաց լեզու և գրականություն, լրագրություն, մաթեմատիկա, ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա, ֆիզիկա, կենսաբանություն, հոգեբանություն, իրավագիտություն/:

Ստացված արդյունքների համաձայն առանձնացված յուրաքանչյուր չափանիշի համար մեծամասամբ նշվել է, որ կա գործողություն, որում առկա են թերություններ, կա մեխանիզմ, որում առկա են թերություններ: Այսինքն կան ներդրված մեխանիզմներ, սակայն վերամշակման կարիք ունեն, իսկ իրականացվող գործողություններն անհրաժեշտ են համակարգել:

Արդյունքում պարզ դարձավ, որ անհրաժեշտ է



- վերանայել ՄԿԾ-ների դասավանդման, ուսումնառության և գնահատման մեխանիզմները:
- ՄԿԾ-ներում հատուկ ուշադրություն դարձնել կրթական միջավայրին և որակի ապահովման մեխանիզմների առակայությանը
- իրականացնել ՄԿԾ-ների խորքային վերլուծություն և ձեռնարկել նշված չափանիշերի բարելավմանն ուղղված քայլերի:

Անհրաժեշտություն կա պարբերաբար անդրադառնալ առանձնացված ՄԿԾ-ին, որպեսզի պարզ դառնա առաջընթացը:

Պարբերաբար ուսումնասիրվում և վերլուծության են ենթարկվում ՄԿԾ-ն իրականացնող ՊԴ կազմը և կրթական միջավայրը, վերհանվում են ՊԴ կազմի և ուսանողների կրթական կարիքները ըստ չափորոշիչների և համապատասխան քայլեր են ձեռնարկվում:

3-ՐԴ ՉՍՓԱՆԻՇԻ SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>1. Համալսարանի ՄԿԾ-ները համապատասխանում են Համալսարանի զարգացման ռազմավարական նպատակներին, նրանց վերջնարդյունքները համապատասխանում են ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի պահանջներին և հասանելի են ներքին և արտաքին շահառուներին:</p> <p>2. ՄԿԾ-ների ուսումնական պլաններում առկա է ՄԿԾ-ների վերջնարդյունքների (կոմպետենցիաների) ձևավորմանն ուղղված կամընտրական դասընթացների բաժնեմաս՝ ուսանողների կողմից դրանց ընտրության հստակ ընթացակարգով:</p> <p>3. Համալսարանում առկա մեթոդաբանական և հայեցակարգային հենքը, որը թույլ է տալիս բարեփոխել կրթական ծրագրերը և համապատասխանեցնել միջազգային չափանիշների պահանջներին, սոցիալական պատվերին և ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող արդյունքներին:</p> <p>4. ՎՊՀ-ի ՄԿԾ-ների որակի ապահովումը վերահսկվում է Համալսարանի կրթության որակի մշտադիտարկման, արդյունքների վերլուծության, թերությունների շտկմանն ուղղված գործողությունների իրականացման ռազմավարության և ընթացակարգերի հիման</p>	<p>1. Համալսարանի ՄԿԾ-ները դեռևս բավականաչափ ձկուն չեն՝ աշխատաշուկայի պահանջներին արագ արձագանքման, հետագայում ուսանողների անհատական ուսումնական պլանների ձևավորման համար:</p> <p>2. ՄՈՒՀ-ի բակալավրիատի ՄԿԾ-ների ուսումնական պլաններում գիտական վերջնարդյունքների (կոմպետենցիաների) ձևավորմանն ուղղված ուսումնական բաղադրիչները (հատկացված կրեդիտներով) խիստ սահմանփակ են:</p> <p>3. ՄԿԾ-ների նախագծման փուլում որոշ դեպքերում դրսևորվում է ֆորմալ մոտեցում՝ բենչմարքինգի կիրառման և արտաքին շահառուների ներգրավման, նրանց կարծիքները հաշվի առնելու գործում:</p> <p>4. ՄԿԾ-ների որոշ վերջնարդյունքների ձևավորվածության մակարդակը գնահատող միջոցները և ձևերը ամբողջությամբ չեն արտահայտում իրական պատկերը:</p> <p>5. ՄԿԾ-ներում միջառարկայական կապերի ապահովման ոչ բավարար մակարդակ:</p>



վրա՝ համաձայն Դեմինգի շրջափուլի:	
Արտաքին հնարավորություններ	Վտանգներ
<p>1. ՀՀ պետական մարմինների կողմից հանրակրթության և բարձրագույն կրթության ոլորտում որակի ապահովման և վերահսկողության ինստիտուցիոնալ-իրավական դաշտի ստեղծում, բարեփոխումների իրականացում:</p> <p>2. ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների ստեղծում և ներդրում, այդ չափորոշիչների հիման վրա ՄԿԾ-ների վերանայում:</p> <p>3. Տարածաշրջանի և հանրապետության աշխատաշուկայի որակական փոփոխության արդյունքում հետաքրքրություն Համալսարանի ՄԿԾ-ների նկատմամբ:</p> <p>4. Շարունակական կրթության միջոցով հասարակական և անձնական պահանջների բավարարման հնարավորություն:</p> <p>5. Գործատուների ներգրավում ՄԿԾ-ների մշակման և ներդրման բոլոր փուլերում: Համալսարանի միջազգայնացման գործընթացների ընդլայնումը և խորացումը՝ որպես հիմք ՄԿԾ-ների արդիականացման, միջազգային ստանդարտների համապատասխանեցման գործում:</p>	<p>1. ՄԿԾ-ների դեռևս ոչ բավարար ճկունության և փոփոխությունների դանդաղ ընթացքի պատճառով արագ փոփոխվող աշխատաշուկայի պահանջներին բավարարելու դժվարություններ:</p> <p>2. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեց անդամների դիմադրության պատճառով նորարարական դասավանդման մեթոդների կիրառման, ուսանողակենտրոն միջավայրի ձևավորման ուղղությամբ կատարվող քայլերի դանդաղում:</p> <p>3. Ժողովրդագրական ներկա իրավիճակի պատճառով որոշ ՄԿԾ-ներում ուսանողների թվի կտրուկ նվազում և որպես հետևանք՝ տվյալ ՄԿԾ-ով կրթություն կազմակերպելու դժվարություններ:</p> <p>4. Ուսանողների թվի նվազմանը զուգահեռ՝ բյուջեի կրճատման պատճառով ռազմավարական որոշ նպատակների իրականացման վտանգների առաջացում (երիտասարդ դասախոսների ներհուսքի ապահովում, գիտահետազոտական աշխատանքների խթանում, ենթակառուցվածքների զարգացում և այլն):</p> <p>5. Աշխատաշուկայի ոչ հստակ պահանջներ, թափուր աշխատատեղերի մասին տեղեկատվության պակաս:</p> <p>6. Տարածաշրջանի այլ բուհերի կողմից նույն թվանիշով ՄԿԾ-ների իրականացում:</p>
<ul style="list-style-type: none"> • Աստիճանաբար բարձրացնել Համալսարանի ՄԿԾ-ների կառուցվածքի անհրաժեշտ ճկունությունը՝ ուսումնական պլաններում ավելացնելով կամընտրական դասընթացների թիվը, • Ներդնել ՄԿԾ-ներում գիտություն-կրթություն, միջառարկայական կապերի զարգացմանն ուղղված տարրեր՝ արելացնելով պարտադիր դասընթացների հետազոտական բաղադրամասը: • Նպաստել ուսանողների գիտահետազոտական աշխատանքների կատարման կոմպետենցիաների ձևավորմանը՝ ՄԿԾ-ներում համապատասխան դասընթացների մոդուլի ներմուծման միջոցով, • Շարունակաբար վերանայել և արդիականացնել մասնագիտական վերջնարդյունքների ձևավորմանն ուղղված դասավանդման և ուսումնառության կիրառվող մեթոդները՝ ընդլայնել 	



Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում,

- Ապահովել պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ուսանողների, գործատուների և այլ ներքին ու արտաքին շահառուների մասնակցության բարձր մակարդակը ՄՈՒՀ-ում կրթական ծրագրերի մշակման, ներդրման և իրականացման գործում՝ համաձայն ՎՊՀ-ում գործող համապատասխան կարգերի,

- Ապահովել կրթական վերջնարդյունքների (կոմպետենցիաների) հստակ գնահատման միջոցների կիրառումը՝ ՄԿԾ-ի ուսումնական գործունեության բոլոր ձևերի և դասընթացների համար գնահատման միջոցների լրակազմի (ԳՄԼ) ձևավորման և կիրառման միջոցով,

- Խորացնել առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) սկզբունքները ՄԿԾ-ների նախագծման և վերանայման գործընթացներում,

- Ներդնել ուսանողների ինքնուրույն աշխատանքների նոր արդյունավետ ձևեր, որը կնպաստի նրանց ինքնուրույնությանը, փաստարկման, բանավիճելու, իրադարձային վիճակներում վճիռներ կայացնելու ունակությունների ձևավորմանը, հմտությունների և կարողությունների զարգացմանը և համապատասխան կոմպետենցիաների ձեռքբերմանը,

- Համապատասխան իրավական դաշտի ձևավորման դեպքում ՄԿԾ-ների ուսումնական պլաններում նախատեսել «շարժունության պատուհաններ»՝ նպաստելով ուսանողների ակադեմիական շարժունության ընթացքում ձեռք բերած բոլոր կրեդիտների ճանաչմանը և ՄԿԾ-ների համապատասխանեցմանը Եվրոպական կրթական տարածքում ընդունված ճափանիշներին:



IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Համալսարանն իր գործունեության ընթացքում պատրաստում է հիմնարար և կիրառական գիտելիքներով, գործնական հմտություններով օժտված կոմպետենտ մասնագետներ, ձևավորում է ուսանողակենտրոն միջավայր, որտեղ ուսանողը հանդես է գալիս որպես կրթական գործընթացի սուբյեկտ:

Համալսարանի՝ մասնագետների պատրաստմանն ուղղված գործունեությունը նպաստում է ուսանողների անձի ստեղծագործական, հոգևոր և ֆիզիկական հնարավորությունների զարգացմանը, բարոյականության, առողջ կենսակերպի ամուր հիմքերի ձևավորմանը, հանրապետության հասարակական-քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին մասնակից լինելու պահանջմունքի ձևավորմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:	
	<p>Ուսանողների հավաքագրման (մասնագիտական կողմնորոշման) քաղաքականությունը և ընթացակարգերը,</p> <p>Ուսանողների ընդունելության անցկացման քաղաքականությունը և ընթացակարգերը,</p> <p>Ընդունելության արդարությունը և թափանցիկությունն ապահովող ընթացակարգերը և հիմքերը,</p> <p>Յուրաքանչյուր մասնագիտության կրթական ծրագրում ընդգրկված ուսանողների թիվը (Հավելված 4.1.1)</p> <p>Ընդունելության արդյունավետությունն արտահայտող այլ հիմքեր և վերլուծություններ վերջին 3 տարիների համար,</p> <p>Բարելավմանն ուղղված ծրագրեր:</p> <p>Բուհ-դպրոց կապին վերաբերող փաստաթղթեր (Հավելված 4.1.2)</p> <p>«Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարանի զարգացման հիմքեր <u>հայեցակարգ 2014-2018թթ.</u>»</p> <p>Կարգ «Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի)»</p> <p>ՀՀ Կրթության և Գիտության նախարարի հրաման «ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հեռակա ուսուցման ընդունելության կանոնների»</p> <p>Կարգ «Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության»</p> <p>Կարգ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության»</p>
	Համալսարանում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ընդունելությունն



իրականացվում է բուհի կողմից առաջարկված և ՀՀ Կառավարության կողմից հաստատված մասնագիտությունների ցանկի համաձայն: Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար սահմանված ժամկետում Համալսարանի ֆակուլտետային խորհուրդները հիմք ընդունելով նախորդ տարվա ընդունելության քննությունների արդյունքները, նաև իրականացնելով հնարավոր պահանջարկի վերաբերյալ կանխատեսումներ և վերլուծություններ, հանդես են գալիս համապատասխան կրթական ծրագրերով ընդունելություն կազմակերպելու առաջարկով: Առաջարկերը քննարկվում և ամփոփվում են ռեկտորատում, առաջարկվող մասնագիտությունների մասով՝ նաև Գիտական խորհրդում:

Բակալավրի ծրագրի առկա ուսուցման համակարգի ուսանողների ընդունելությունն իրականացվում է ՀՀ Կառավարության 26.04.2012թ. թիվ 597-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգի:

Ընդունելություններ անցկացվում են միասնական քննությունների արդյունքների հիման վրա, միայն «011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ», «011401.11.6 Կերպարվեստ», «011401.13.6 Երաժշտական կրթություն» կրթական ծրագրերով ընդունելությունը կատարվում է ներբուհական քննություններով, որոնց հանձնաժողովների կազմը ներկայացվում է գնահատման և թեստավորման կենտրոն:

Բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի ընդունելությունը կատարվում է ՀՀ Կրթության և Գիտության նախարարի 2016 թվականի հուլիսի 19-ի հրամանով հաստատված «ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հեռակա ուսուցման ընդունելության կանոնների» համաձայն: Ընդունելությունը կատարում են ԿԳ նախարարի կողմից հաստատված բուհական հանձնաժողովներ՝ ըստ ՀՀ Կառավարության հաստատած մասնագիտությունների ցանկի և սահմանված չափորոշիչների:

2014-18թթ. ընդունելության արդյունքներն են.

Աղյուսակ. 2014-2018թթ. Բակալավրի կրթական ծրագրով ընդունելության տվյալները

Ուսուցման համակարգ	Ընդունելության տարին				
	2014 թ.	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018թ.
Առկա ուսուցման համակարգ	349	375	381	298	190
Հեռակա ուսուցման համակարգ	255	238	138	69	68
Ընդամենը	604	613	519	367	258

Դիմորդների թվի նվազման պատճառներն են.

- Հայաստանի Հանրապետությունում դիմորդների թվի նվազումը,
- մայրաքաղաքայն բուհերի հնարավոր մրցակցությունը,
- տարածաշրջանի ոչ պետական բուհերի համեմատաբար ցածր վարձավճարների գրավչությունը, մուտքի առավել դյուրին պայմանները:

2018թ. ՀՀ-ում արձանագրվել էր դիմորդների շուրջ 20% անկում (դպրոցները տվել են մոտ 14 000 շրջանավարտ): Այս պայմաններում մեր բուհի դիմորդների բաժնեմասը 3.8-ից



հասել է 5.7-ի:

Աղյուսակ. ՎՊՀ դիմորդների բաժնեմասը ՀՀ-ի ընդհանուր հոսքում

Ցուցանիշ	Ուսումնական տարի				
	2014/15	2015/16	2016/17	2017/18	2018/19
Ընդհանուր դիմորդների թիվը	11222	11325	11375	9073	4626
ՎՊՀ դիմորդների թիվը	424	420	436	366	265
ՎՊՀ դիմորդների բաժնեմասը ընդհանուր հոսքում	3.8	3.7	3.8	4	5.7

Համալսարանաում մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելությունը իրականացվում է համաձայն ՀՀ Կրթության և Գիտության նախարարի 2007 թվականի դեկտեմբերի 6-ի հրամանով հաստատված «ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգի»: Յուրաքանչյուր տարի ապրիլ ամսին Գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացվում մագիստրատուրայի ժամանակավոր կարգ, որը հրապարակվում է բուհի կայքում: Մագիստրատուրայում ուսանողների ընդունելությունը և մրցույթը անցկացվում է երկու փուլով՝ ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ (անվճար) և մասնակի (վճարովի) փոխհատուցմամբ: Համաձայն կարգի հրապարակվում են ընդունելության հարցաշարերը (մասնագիտության փոփոխության դեպքում), գանգվածային լրատվության միջոցներով տրվում է հայտարարություն ընդունելության մասնագիտությունների, տեղերի և կանոնների վերաբերյալ: Հայտարարությանը կցվում է մագիստրանտի հետ կնքվող պայմանագրի տեքստը:

Աղյուսակ. 2014-2018թթ. մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տվյալները

Ուսուցման համակարգ	Ընդունելության տարեթիվը				
	2014 թ.	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018թ.
Առկա ուսուցման համակարգ	134	27	111	90	79

2020 թ. համար Համալսարանը նախատեսում է իրականացնել պահանջարկի և աշխատաշուկայի վերլուծություն հեռակա ուսուցման համակարգում մագիստրոսական կրթությունը զարգացման նպատակով, որը գրավիչ կլինի հատկապես աշխատանք ունեցող շահառուների համար: Համալսարանն ունի «Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն», «Դեղագործական քիմիա», «Բնապահպանություն և բնօգտագործում», «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրերով մագիստրոսական հեռակա կրթություն իրականացնելու իրավունք: Համալսարանում քննարկային փուլում է հեռավար կրթության ընձեռած հնարավորությունների օգտագործման հարցը:

Ուսումնական հաստատությունում ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:

Համակարգը		Ուսանողների թիվը ըստ տարիների				
		2014	2015	2016	2017	2018
Բակալավրիատ	առկա	1096	1359	1274	1210	1056
	հեռակա	1206	1069	958	1120	918
Մագիստրատուրա	առկա	255	111	124	164	138



	հեռակա	28	6	6		
Հետազոտողի (հայցորդության հիմունքներով)			6	12	12	12 ²
Ուսումնառողների շարժունությունը						
Ուսումնառողների շարժը վերջին 5 տարվա կտրվածքով						
Ուսանողների արտահոսք						
	Հաստատություն/երկիր	Տարեթիվը				
		2014	2015	2016	2017	2018
1	Հայկական պետական մանկավարժական համալսարան	2	2		1	
2	Շիրակի պետական համալսարան		1		1	
3	ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն	1				
4	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան	1				
5	Հայ -ռուսական համալսարան					1
Ուսանողների ներհոսք						
	Հաստատություն/երկիր	Տարեթիվը				
		2014	2015	2016	2017	2018
1	Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան			1		
3	Հայկական պետական մանկավարժական համալսարան	3	2			1
4	Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան	1				
5	«Եվրասիա» միջազգային համալսարան					1
6	Վանաձորի «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան		3	1	1	
Հեռացումներ և վերականգնումներ						
	Համակարգը	Ուսանողների թիվ				
		2014	2015	2016	2017	2018
Բակալավրիատ	Առկա /Դուրս մնացած ուսանողներ(հեռացում, ազատում)	55	25	42	45	47
	Հեռակա/Դուրս մնացած ուսանողներ(հեռացում, ազատում)	77	87	70	64	72
Մագիստրատուրա	Դուրս մնացած ուսանողներ(հեռացում, ազատում)	5	10	5	2	7
Բակալավրիատ	Առկա /Ընդհատած ուսանողներ(տարկետում, զինձառայություն)	49	39	43	39	42
	Հեռակա/Ընդհատած ուսանողներ(տարկետում, զինձառայություն)	65	54	64	35	21
Մագիստրատուրա	Ընդհատած ուսանողներ(տարկետում,զ/ծ)	2	1	0	0	0

² 2018թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ



Բակալավրիատ	Առկա /Վերականգնված ուսանողներ	46	52	41	42	68
	Հեռակա/Վերականգնված ուսանողներ	99	68	93	125	123
Մագիստրատուրա	Վերականգնված ուսանողներ	5	2	4	1	7
		%				
Դուրս մնացած ուսանողների տոկոսը, առկա		5.0	1.8	3.3	3.73	4.5
Դուրս մնացած ուսանողների տոկոսը, հեռակա		6.4	8.1	7.3	5.7	7.8
Ընդհատած ուսանողների տոկոսը, առկա		4.5	2.9	3.4	3.2	3.9
Ընդհատած ուսանողների տոկոսը, հեռակա		5.3	5.0	6.6	3.1	2.2
Վերականգնված ուսանողների տոկոսը, առկա		4.1	3.8	3.2	3.4	6.4
Վերականգնված ուսանողների տոկոսը, հեռակա		8.2	6.3	9.7	11.1	13.3
Դուրս մնացած ուսանողների տոկոսը, առկա		5.0	1.8	3.2	3.7	4.4
Դուրս մնացած ուսանողների տոկոսը, հեռակա		6.3	8.1	7.3	5.7	7.8
Ընդհատած ուսանողների տոկոսը, առկա		4.4	2.8	3.3	3.2	3.9
Ընդհատած ուսանողների տոկոսը, հեռակա		5.3	5.0	6.6	3.1	2.3
Վերականգնված ուսանողների տոկոսը, առկա		4.2	3.8	3.2	3.5	6.4
Վերականգնված ուսանողների տոկոսը, հեռակա		8.2	6.4	9.74	11.14	13.4

Անբավարար առաջադիմության պատճառով հեռացված ուսանողների քանակը նվազեցնելու նպատակով Համալսարանում առանձնակի ուշադրություն է դարձվում խորհրդատվական, անհատական աշխատանքների կազմակերպմանը: Համալսարանը վարում է ձկուն քաղաքականություն ուսման վարձավճարների գանձման աշխատանքներում, ուսանողների նկատմամբ ցուցաբերում է անհատական մոտեցում, կազմում ուսման վարձի վճարման անհատական ժամանակացույց, որով էլ պայմանավորված է ուսման վարձի չվճարելու պատճառով հեռացումների ցածր ցուցանիշը: Մեծացել է հեռակա ուսուցման համակարգում ուսանողական իրավունքների վերականգնման նպատակով դիմող ուսանողների թվաքանակը: Ըստ դիտարկումների՝ դեպի հեռակա ուսուցման համակարգ հոսքը ուսանողները հիմնավորում են սոցիալական վիճակով, աշխատելու և/կամ արտերկրում բնակվելու հանգամանքով:

Համալսարանն ուսանողներ հավաքագրելու նպատակով իրականացնում է բազմաթիվ միջոցառումներ.

1. 2008թ.-ից գործում են կրթական կենտրոններ Տաշիր, Սպիտակ, Ստեփանավան և Ալավերդի քաղաքներում, որոնց գործառույթներից է տարածաշրջանի ավագ դպրոցների աշակերտների շրջանում տեղեկատվական-խորհրդատվական աշխատանքների իրականացումը, հնարավորինս լայն աշխարհագրություն ընդգրկելը և մարկետինգային գործունեություն ակտիվացնելը: Կենտրոններն աշխատանքներն իրականացնում են միայն բակալավրի կրթական ծրագրերով դիմորդների հավաքագրման նպատակով: 2019 թ.-ից կենտրոնների գործունեությունը դադարեցված է: Ակտիվացվում են բուհ-դպրոց կապի ապահովման հանձնաժողովների աշխատանքը:
2. Յուրաքանչյուր տարի ռեկտորի հրամանով ձևավորվում են դասախոսներից և



ուսանողներից կազմված աշխատախմբեր, որոնք տարվա ընթացքում, ըստ ժամանակացույցի, այցեր են կատարում մարզի ավելի քան 35 դպրոցներ, ֆիլմերով, տեղեկատվական նյութերով ներկայացնում են մեր բուհը՝ նպաստելով դպրոցականների մասնագիտական կողմնորոշմանը: Տեղեկատվական այցեր են իրականացվել նաև Վրաստանի հայկական բնակավայրերի, Շահումյան և Բոլնիս-Խաչեն գյուղերի դպրոցներում:

3. Համալսարանի ընդունելությանը նախապատրաստելու նպատակով քննական առարկաներից ավագ դպրոցի աշակերտների համար կազմակերպվում են նախապատրաստական անվճար դասընթացներ: Նախապատրաստական դասընթացներին մասնակցելու համար դիմել են ք. Վանաձորի ավագ դպրոցների, վարժարանների, քոլեջների և Գուգարքի տարածաշրջանի հարակից գյուղերի միջնակարգ դպրոցների աշակերտներ (Գուգարք, Շահումյան, Արջուտ, Դարպաս, Վահագնի, Քարինջ, Մարց, Ազնվաձոր, Լեռնապատ, Բագում, Մարգահովիտ): Դասընթացները վարել են մասնագիտական ամբիոնների դասախոսները և մագիստրատուրայի ուսանողները: 2016թ. առաջին անգամ Քարինջի և Մարցի դպրոցների աշակերտների հետ անցկացվել են առցանց պարապմունքներ («Բանավոր հաղորդակցման մշակույթ»՝ «Լրագրություն» մասնագիտության ընդունելության համար), արդյունքում բոլոր մասնակիցներն ընդունվել են համալսարան, այդ թվում 2-ը՝ անվճար: Վերլուծությունը ցույց է տալիս, որ նախապատրաստական դասընթացների անցկացումն արդյունավետ է դիմորդներ հավաքագրելու համար: Դասընթացներին լրջորեն հաճախող աշակերտների մեծ մասը միասնական քննություններից հավաքում է ոչ միայն դրական գնահատականներ, այլև՝ բարձր նիշեր, ինչի արդյունքում ընդունվում են նաև ուսուցման անվճար համակարգ:

4. Յուրաքանչյուր տարի հանրակրթական առարկաներից կազմակերպվում են դպրոցական օլիմպիադաներ /այդ թվում «Կերպարվեստ», «Երաժշտություն» առարկաներից/, ասմունքի, լուսանկարչական աշխատանքների, շարադրությունների մրցույթներ, որոնք կազմակերպվում են՝ համապատասխան կարգերի համաձայն:

Աղյուսակ. Աշակերտների մասնակցությունը դպրոցական օլիմպիադաներին

Ուսումնական տարի	Առարկաներ	Մասնակից աշակերտների թվաքանակը	Մրցանակակիր աշակերտների թվաքանակը	%
2015թ.	Հումանիտար	227	48	21,1
	Բնագիտական	154	25	16,2
2016 թ.	Հումանիտար	256	28	10,9
	Բնագիտական	205	5	2,4
2017 թ.	Հումանիտար	550	60	10,9
	Բնագիտական	200	16	8,0
2018 թ.	Հումանիտար	534	50	9,3
	Բնագիտական	279	20	7,1

Վերլուծությունը ցույց է տալիս, որ գնալով աճում է աշակերտների մասնակցությունը օլիմպիադաներին, նրանք հետաքրքրված են ստուգելու ոչ միայն իրենց գիտելիքները, այլև



տեղեկանալու և ծանոթանալու համալսարանի բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերին, մասնագիտություններին, կողմնորոշվելու բուհի և մասնագիտության ընտրության հարցում: Յուրաքանչյուր տարի օլիմպիադայի մասնակիցներից դիմում են մեր բուհ, իսկ վերջին տարիների արդյունքներով ընդունված մոտ 60-70 ուսանողներ օլիմպիադայի մասնակիցներ են: Համաձայն հաստատված կարգի՝ օլիմպիադայի հաղթողները հնարավորություն են ունենում օգտվելու ուսանողական նպաստի մասնակի փոխհատուցման արտոնությունից: 2017թ. և 2018թ. այդ արտոնությունից օգտվելու իրավունք ստացել են թվով 10 աշակերտներ, սակայն օգտվել են երկուսը (նրանց մեջ եղել են անվճար հիմունքներով ընդունվածներ, զինվորական ծառայության ենթակա ուսանողներ):

Նշված ժամանակահատվածում անցկացվել են հայկական և ռուսական պոեզիայի, ֆրանսերեն լեզվով ասմունքի, ինչպես նաև լուսանկարչական աշխատանքների մեկ տասնյակից ավելի մրցույթներ:

5. Ամբիոնների կողմից անցկացվում են մի շարք միջոցառումներ Համալսարանի կրթական ծառայությունները գովազդելու, բուհի ենթակառուցվածքներին և կրթական միջավայրին ծանոթացնելու նպատակով: «Ֆակուլտետային օրեր» միջոցառումների շրջանակներում կազմակերպվում են աշակերտների այցեր, բաց դասեր, կատարվում են լաբորատոր փորձերի ցուցադրումներ: Այդ միջոցառումների շրջանակներում կենսաբանաքիմիական ֆակուլտետը 2016թ. և 2017թ. կազմակերպել է դպրոցականների առարկայական օլիմպիադաներ: Կազմակերպվել են շրջայցեր Համալսարան՝ Վանաձորի և տարածաշրջանի դպրոցների գրեթե 200 աշակերտների համար, այդ միջոցառման շրջանակներում անցկացվել են բաց դասեր, ճանաչողական էքսկուրսիաներ, մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ և զրույցներ: Ռուսաց լեզվի, օտար լեզուների, քիմիայի ամբիոնները պարբերաբար կազմակերպում են դպրոցականների վիկտորինաներ: Հաճախակի կազմակերպվում են գիտելիքների ստուգատեսներ և շարադրությունների մրցույթներ:

Համալսարանի դասախոսներն անցկացրել են բաց դասեր, դասախոսություններ, դիտարժան փորձերի ցուցադրում ք. Վանաձորի ավագ և հիմնական դպրոցների աշակերտների համար, որոնք անցկացվել են և՛ դպրոցներում, և՛ համալսարանում, այդ թվում՝ ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության լաբորատորիաներում:

Դպրոցների հոգեբանների, սոցիալական մանկավարժների և ուսուցիչների հետ անցկացվել են սեմինար պարապմունքներ, որոնք նպաստել են համալսարանի դասախոսների և ուսուցիչների համագործակցության շրջանակների ընդլայնմանը, մասնագիտական փորձի փոխանակմանը և դիմորդների հավաքագրմանը:

6. Դիմորդներին տեղեկատվություն է տրամադրվում և ընդունելության ընթացքը մեկնաբանվում ՎՊՀ-ի կայքում գործող «Դիմորդ» բաժնի միջոցով:

7. Համալսարանի կայքում տեղադրված են մասնագիտությունների տեղեկագրքերը, որոնք դիմորդին կողմնորոշում են մասնագիտության վերջնարդյունքերի, ուսանողի ուսումնական բեռնվածության և կրթական ծրագրերի աշխատածավալի, դասընթացների բովանդակության, կրեդիտային համակարգի առանձնահատկությունների վերաբերյալ



հարցերում:

8. Տարածաշրջանի քոլեջների հետ համագործակցության արդյունքում համալսարան են ընդունվում քոլեջների «լավ» և «գերազանց» գնահատականներով շրջանավարտները:

Աղյուսակ. 2014-2018 թթ. քոլեջների «լավ» և «գերազանց» գնահատականներով քոլեջների շրջանավարտների ընդունելության արդյունքները.

<i>Ուսուցման համակարգ</i>	<i>Ուսանողների թիվը՝ ըստ տարիների</i>				
	<i>2014 թ.</i>	<i>2015 թ.</i>	<i>2016 թ.</i>	<i>2017 թ.</i>	<i>2018 թ.</i>
Առկա	4	5	10	6	1
Հեռակա	8	15	8	14	13
Ընդամենը	12	20	18	20	14

Առկա ուսուցման համակարգում նվազել է ուսումը շարունակող քոլեջների շրջանավարտ ուսանողների քանակը, քանի որ, համաձայն 2015 թվականի հուլիսի 8-ին թիվ 752-Ն որոշմամբ ՀՀ կառավարության կողմից ընդունված «ՄՄՈՒՀ-ի բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ ԲՈՒՀ-ում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու մասին» կարգի՝ սահմանափակվել է քոլեջների շրջանավարտների՝ բուհի առկա ուսուցման համակարգի 2-րդ կուրս տեղափոխվելու իրավունքը:

Դիմորդների հավաքագրման ծավալների մեծացման նպատակով մագիստրոսական կրթական ծրագրի մուտքային շեմերը աստիճանաբար նվազեցվել են, իսկ 2013 թվականին ՄՈԳ-ի շեմ չի սահմանվել, որը հանգեցրեց մրցակցային ոգու նվազմանը: 2014թ. մուտքային շեմ սահմանվել է միայն անվճար ուսուցման համակարգի տեղերի համար: Մագիստրոսական կրթական ծրագրի

Օտարերկրացի քաղաքացիների ընդունելությունը իրականացվում է ՀՀ Կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N 700-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի» համաձայն: Ներկայումս Համալսարանում սովորում են 23 օտարերկրացի և սփյուռքահայ ուսանողներ Վրաստանի Հանրապետությունից, Ռուսաստանի Դաշնությունից, Հունաստանից և, Համալսարանի պատմության մեջ 2017թ. առաջին անգամ ունեցել ենք դիմորդ Ամերիկայի Միացյալ Նահանգներից:

Ասպիրանտուրայում ընդունելությունը և հայցորդության ձևակերպումն իրականացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի N 238 - Ն որոշմամբ հաստատված «ՀՀ-ում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգ»-ի: 2018թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ Համալսարանի տարբեր ամբիոններում գրանցված է 12 հայցորդ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Բ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

Հիմքեր	Ուսանողների կարիքների վերհանման քաղաքականությունը և ընթացակարգերը (Հավելված 4.2.1)
--------	--



	<p>Վերհանված կարիքները փաստող հիմքերը և վերջին 3 տարիների վերլուծությունները (Հավելված 4.2.2)</p> <p>Վերհանված խնդիրների լուծումները և նրանց արտահայտումը ՄՌԻՀ-ի քաղաքականության մեջ: (Հավելված 4.2.3)</p>
--	--

Համալսարանում կրթական միջավայրի բարելավման աշխատանքների իրականացման նպատակով, որը համարվում է ռազմավարական առաջնահերթություններից մեկը, պարբերաբար ուսումնասիրվում են ուսանողների կրթական կարիքները:

Կրթական կարիքների վերհանման նպատակով իրականացվում են մի շարք միջոցառումներ. սոցիոլոգիական հարցումներ, ֆոկուս խմբեր, հանդիպումներ, աշխատանք ուսանողական խորհրդի հետ, տեղեկատվության տրամադրման և ուղղորդման աշխատանքներ:

Կրթական կարիքների վերհանման նպատակով պարբերաբար իրականացվում են աշխատանքներ ֆոկուս խմբերի, սոցիալական հարցումների միջոցով³: Իրականացված հարցումների հիմնական նպատակն է եղել ուսանողների կրթական մոտիվացիաների, կարիքների, տարբեր ենթահամակարգերում առկա խնդիրների վերհանումը: Ուսումնասիրությունները վերաբերել են կրթություն ստանալու դրդապատճառներին, գնահատման համակարգի օբյեկտիվությանը (ըստ ուսանողների պատկերացումների) ուսանողների կողմից դասախոսական անձնակազմի, ենթակառուցվածքների և տրամադրվող ուսումնամեթոդական նյութերի գնահատմանը:

Ուսումնասիրվել է առաջին կուրսի ուսանողների հոգեբանական հարմարվողականությունը բուհական կյանքին, շրջանավարտների բավարարվածությունը կրթական գործընթացից, վերհանվել են հեռակա համակարգում սովորող ուսանողների կրթական կարիքները, լրացուցիչ պարապմունքների կազմակերպման արդյունավետությունը:

Կրթական ծառայություններից բավարարվածության աստիճանի ուսումնասիրության արդյունքները և վերլուծությունը ներկայացվել են գիտխորհրդին, քննարկվել և տարբեր ստորաբաժանումներին հանձնարարվել է կրթական միջավայրի բարելավման ուղղությամբ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ: Ուսումնասիրությունների արդյունքները հասանելի են և տեղադրված են Համալսարանի ներքին ցանցում:

Կրթական կարիքների վերհանման նպատակով ուսանողների, նաև ուսանողական խորհրդի հետ առանձին, արտադրական խորհրդակցություններ է հրավիրել Համալսարանի ռեկտորը՝ յուրաքանչյուր կիսամյակում երկու անգամ, պրոռեկտորներն՝ ըստ անհրաժեշտության, դեկանները՝ յուրաքանչյուր ամիս: Խորհրդակցությունների և քննարկումների միջոցով ուսանողները կարողանում են վերհանել իրենց խնդիրները, առաջարկել բարելավման ուղիներ և մասնակցել կրթական միջավայրի բարեփոխումներին:

Ուսանողների կրթական կարիքների վերհանման հարցում կարևոր դեր ունի ուսխորհուրդը: Ֆակուլտետային ուսխորհուրդների նախագահները խնդիրները

³ «Ուսանողների կրթական կարիքների վերհանման հետազոտություն» (ՈԱԿ), «Դասախոսը ուսանողների աչքերով»



ներկայացնում և քննարկում են դեկանների հետ, իսկ Համալսարանի ուսխորհրդի նախագահը հարցը ներկայացնում է Գիտխորհրդին, երբեմն առանձին դեկավար մարնիններին:

Ուսանողները ներգրավված են Համալսարանի կառավարման մարմիններում /25%/, տարբեր խորհուրդներում և հնարավորություն ունեն մասնակցելու ուսանողակենտրոն քաղաքականության մշակման գործընթացին, բարձրաձայնելու և լուծումներ առաջարկելու կրթական միջավայրի բարելավման նպատակով:

Համալսարանի նոր կայքն ունի «on-line խորհրդատու» էջը, որը ուսանողների համար ընձեռում է անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու լայն հնարավորություն, ուղղորդում է կրթական գործընթացի հետ առնչվող իրենց կարիքները ներկայացնելու, Համալսարանի ցանկացած աշխատակցի դիմելու հարցում: Ուսանողների ձայնը լսելի դարձնելու հարցում բավականին մեծ դեր ունի [Համալսարանի ֆեյսբուքյան էջը](#), որով բացի վերոնշյալ գործընթացներից, կազմակերպվում են նաև սոցիոլոգիական հարցումներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

- Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների նկարագրությունը, նպատակները և ժամանակացույցը,
- Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների բարելավման մեխանիզմները և ծրագրերը,
- Խորհրդատուների աշխատանքի ժամանակացույցը:
- [Կանոնակարգ «Ակադեմիական խորհրդատուների գործունեության»](#)
- Կանոնակարգ «Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման ու հաշվառման» ([Հավելված 4.3.1.1](#)), [4.3.1.2](#).
- Կարգ «Ուսանողների արտալսարանային ինքնուրույն աշխատանքների կազմակերպման և կատարման» ([Հավելված 4.3.2](#)),
- Կարգ «ՎՊՀ-ում ուսանողների գիտելիքների գնահատման արդյունքների բողոքարկման» ([Հավելված 4.3.3](#)),
- Կանոնակարգ «Վանաձորի Հ. Թումանյան անվան պետական համալսարանում ակադեմիական խորհրդատուների գործունեության» ([Հավելված 4.3.4](#)),
- Կարգ «ՎՊՀ կրթական ծրագրերում ընդգրկված կամընտրական դասընթացների ընտրության» ([Հավելված 4.3.5](#))
- Ռեկտորի հրաման «Չառաջադիմող ուսանողների հետ աշխատանքի կազմակերպման ժամանակացույցերի ներկայացման/հաստատման ժամկետները» ([Հավելված 4.3.6](#))
- Խորհրդատուի աշխատանքային տեղը ([Հավելված 4.3.7](#))



	%	
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված խորհրդատվական ծառայությունների մասին:	82%	
Ուսանողների ո՞ր տոկոսն է ընդգրկված լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներում:	18%	
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված խորհրդատվական ծառայություններից:	15%	
Արդյոք ուսումնառողներին հատկացվո՞ւմ են խորհրդատուներ	ԱՅՈ	ՈՉ
Եթե ոչ, արդյոք դա նախատեսվո՞ւմ է:	V	

Նախորդ շրջափուլի համեմատությամբ խորհրդատվական ծառայությունների արդյունավետության ցուցանիշներն աճել են:

Ուսանողներին ակադեմիական օժանդակություն և ուղղորդում տրամադրելու հարցում Համալսարանում կարևորվում է ակադեմիական խորհրդատուների գործունեությունը: Խորհրդատվական աշխատանքների կազմակերպման իրավական հենքը համարվում է Համալսարանում գործող [«Ակադեմիական խորհրդատուների գործունեության կանոնակարգը»](#), որը որոշակի փոփոխություններով վերահաստատվել է 30.06.2016թ.-ին:

Ակադեմիական խորհրդատուները բացահայտում են իրենց համապատասխան կուրսի/խմբի ուսանողների կրթական կարիքները, նպաստում առաջին կուրսեցիների հարմարմանը /ադապտացիա/, տեղեկատվության ապահովմանը, կրթական բարեփոխումների գործընթացում ուսանողների ընդգրկմանը, արտալսարանային աշխատանքների կազմակերպմանը, հետևում ակադեմիական ձեռքբերումներին:

Ուսանողներին ուղղորդելու նպատակով Համալսարանում մշակվել և ներդրվել են հետևյալ փաստաթղթերը.

- «Կանոնակարգ Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման ու հաշվառման»,
- «Կարգ ուսանողների արտալսարանային ինքնուրույն աշխատանքների կազմակերպման և կատարման»,
- «Կարգ ՎՊՀ-ում ուսանողների գիտելիքների գնահատման արդյունքների բողոքարկման»,
- «Դասընթացի կոմպետենցիաների անձնագրի մշակման մեթոդական ուղեցույց»,
- «ՎՊՀ խորհրդատուների կողմից կատարվող աշխատանքների ուղեցույց» (վերանայված տարբերակ),
- «Հետազոտական աշխատանքների կատարման հուշաթերթ» ՎՊՀ մագիստրատուրայի ուսանողների համար.,
- «Կարգ ՎՊՀ կրթական ծրագրերում ընդգրկված կամընտրական դասընթացների ընտրության»:

Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներում ընդգրկվում են հիմնականում



ակադեմիական ցածր առաջադիմություն ունեցող ուսանողները: Ուսանողների առաջադիմության հարցերը և խնդիրները յուրաքանչյուր քննաշրջանից հետո քննարկվում է ֆակուլտետային խորհուրդներում և ռեկտորատի նիստերում, քննարկվում են արդյունքները /նաև վիճակագրական/, պատճառները և կարգավորման մեխանիզմները՝ լրացուցիչ խորհրդատվական աշխատանքները համակարգված, նպատակային և արդյունավետ կազմակերպելու համար: Ռեկտորի թիվ N 203L/ՌԻ (24 մարտի 2016 թ.) հրամանով կարգավորվում է չառաջադիմող ուսանողների հետ աշխատանքի կազմակերպման ժամանակացույցերի ներկայացման/հաստատման ժամկետները:

Համալսարանում ուսանողների համար խորհրդատվական ծառայություններ են իրականացնում հոգեբանական և իրավաբանական ուսանողական խորհրդատվական կենտրոնները:

Հոգեբանական խորհրդատվության կենտրոնը անհատական աջակցություն է ցուցաբերել նաև այն ուսանողներին, ովքեր կարիք ունեն բարձրացնելու ինքնագնահատականը, կիրառելու հաղորդակցման արդյունավետ ձևեր, հաղթահարելու սթրեսային գործոններն ու ուսման ընթացքում առաջացած դժվարությունները: Հոգեբանական կենտրոնի շահառուների մեջ կան նաև հաշմանդամ ուսանողներ:

Համալսարանում «Փիլիսոփայության և քաղաքագիտության» ամբիոնին կից գործում է Իրավաբանական խորհրդատվական կենտրոն, որի նպատակն է իրավագետ-ուսանողների և դասախոսների ջանքերով պաշտպանել այլ ուսանողների ու դասախոսների իրավունքներն ու օրինական շահերը, որոշակի պայմաններ ստեղծել Համալսարանում իրավական մշակույթի զարգացման, իրավագիտակցության բարձրացման, ուսանողների մասնագիտական կողմնորոշման, ուսանողների գործնական գիտելիքների ապահովմանը նպաստելու, կրթական հարցերում օժանդակելու համար: Կենտրոնի անդամները մասնակցում են հանրապետական դատախազ-մրցույթներին՝ գրավելով պատվավոր հորիզոնականներ:

ՉՍՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

Հիմքեր	<p>Ուսանողի ուղեցույց</p> <p>Կարգ «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման»</p> <p>Կարգ «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի «Լավագույն ուսանող» և «Լավագույն կուրս» անվանակարգերում ընտրության կազմակերպման, անցկացման և մրցանակաբաշխության»</p> <p>Կանոնակարգ «Բալային-ռեյթինգային համակարգով ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման ել հաշվառման»</p> <p>Կարգ «ՎՊՀ ՊՈԱԿ-ում ուսանողական նպաստների, պետական և անվանական կրթաթոշակների տրամադրման»</p>	
		%
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին:		70%



Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում այդ ծառայություններից:

58%

Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված այդ ծառայություններից:

30%

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վարչակազմի ծառայությունների վերաբերյալ տեղեկացվածության, օգտվողների և այդ ծառայություններից բավարարվածության ցուցանիշները նախկին ուսումնասիրությունների արդյունքների և զեկույցում ընդգրկված թվերի համեմատ մեծացել են:

Համալսարանում ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրվում են ֆակուլտետի դեկանի և դեկավարության կողմից: Դեկաններն ըստ սահմանված ժամանակացույցի կամ նպատակայնության և ըստ անհրաժեշտության պարբերաբար քննարկումներ են իրականացնում ֆակուլտետի ուսանողների, ավագների, ըստ նպատակայնության առանձնացված խմբերի հետ: Բացի դեկանների պլանավորած հանդիպումները, յուրաքանչյուր ուսանողի համար ցանկացած խնդրի քննարկման համար դեկանը հասանելի է: Այդ պատճառով դեկանները ուսանողների ընդունելության համար առանձին ժամեր չեն նախատեսում:

Առանձին հարցեր, որոնք պահանջում են կոլեգիալ քննարկումներ և լուծումներ, դեկանները ներկայացնում են ռեկտորատի նիստի քննարկմանը: Այս ուղին հնարավորություն է ընձեռում ուսանողին ստանալու իր խնդրի լուծումը առանց վարչարարության օղակի մեջ հայտնվելու:

Հետադարձ կապի մեխանիզմներն առավել արդյունավետ են աշխատում ֆակուլտետային մակարդակներով, որտեղ իր ուրույն տեղն ունի ուսխորհուրդը:

Ռեկտորը պարբերաբար կազմակերպում է արտադրական խորհրդակցություններ ուսխորհրդի, ուսանողների, ավագների մասնակցությամբ /առանց դասախոսական կազմի և խորհրդատուների/: Ուսանողների կողմից բարձրացված հարցերը և առաջարկությունները քննարկվում են համասլարանի տարբեր օղակներում և մակարդակներում:

Ուսանողների, ծնողների ընդունելության համար ռեկտորը և պրոռեկտորները ունեն սահմանված ժամեր:

Ուսանողները ընդգրկված են ՄՈՒՀ-ի խորհրդում, գիտական խորհրդում, ֆակուլտետային խորհուրդներում, տարբեր հանձնաժողովներում և հնարավորություն ունեն բարձրաձայնելու իրենց հուզող հարցերը, հանդես գալու ՄՈՒՀ-ի գործունեության բարելավմանը միտված առաջարկություններով:

Յուրաքանչյուր առաջին կուրսեցի ուսանողի տրվում է [«Ուսանողի ուղեցույց»](#), որտեղ ոչ միայն նկարագրված է բուհը, կրթական համակարգը, այլ նաև տրամադրվում են ստորաբաժանումների հեռախոսահամարները և վարչակազմի էլեկտրոնային փոստի հասցեները: Բարձր կուրսերի ուսանողներին նշված ուղեցույցը տրամադրվում է www.OneLoveDrive.com համակարգով, որը բավականին արժևորվել է հեռակա ուսուցման համակարգի ուսանողների կողմից: Նշված համակարգով տրամադրված նյութերը, այդ թվում նաև մեթոդական, ուսանողին հասանելի են նույնիսկ սեփական բջջային հեռախոսով:

www.vsu.am կայքում գործարկված «on-line խորհրդատու» էջը փոխարինում է նախկին «Հարց-պատասխան» բաժնին, որը ավելի պրակտիկ գործիք է և կայքավարի միջնորդավորմամբ ուսանողը կարող է դիմել Համալսարանի աշխատակիցներին: Այս հնարավորությունից դարձյալ



ավելի շատ օգտվում են հեռակա ուսուցման համակարգի ուսանողները, իսկ առկա ուսուցման համակարգի ուսանողները առավել ներգրավված են դեմ հանդիման քննարկումներում:

Համալսարանում գործում են մի շարք կարգեր և կանոնակարգեր, որոնցում ամրագրված են վարչական աշխատակազմին դիմելու մեխանիզմները.

- «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգ (05.11.2018),
- Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի «Լավագույն ուսանող» և «Լավագույն կուրս» անվանակարգերում ընտրության կազմակերպման, անցկացման և մրցանակաբաշխության կարգ (28.12.2017),
- Բալային-ռեյթինգային համակարգով ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման եվ հաշվառման կանոնակարգ(23.02.2017),
- Կարգ ՎՊՀ ՊՈԱԿ-ում ուսանողական նպաստների, պետական և անվանական կրթաթոշակների տրամադրման (18.12.2014)

Բոլոր կարգերը հասանելի են ուսանողներին Համալսարանի կայքի միջոցով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:	
Հիմքեր	Ուսումնառողների կարիերային նպաստող ծառայությունների կանոնակարգերը Այդ գործընթացներն իրականացնող ենթակառուցվածքը և դրա գործառույթները:
	%
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված կարիերային նպաստող ծառայությունների մասին:	12%
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում այդ ծառայություններից:	10%
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ ծառայություններից:	10%
<p>Կարիերայի աջակցման ծառայությունների մասին տեղեկատվություն ուսանողները ստանում են բուհ ընդունվելուն պես՝ «Ուսանողի ուղեցույց» ձեռնարկի, կազմակերպվող հանդիպումների միջոցով:</p> <p>Ակադեմիական տարվա ընթացքում երկու անգամ իրականացվում են պլանային սեմինար – վերապատրաստումներ բոլոր այն ուսանողների համար, ովքեր ցանկություն ունեն ձեռք բերել պրակտիկ հմտություններ ռեզյումենների, մոտիվացիոն նամակների կազմման, հարցազրույցների մասնակցության և աշխատանքի որոնման բնագավառում: Սեմինար վերապատրաստումներից բացի իրականացվում են նաև անհատական խորհրդատվական ծառայություններ: Սեմինարներից հետո ուսանողներն ու շրջանավարտներն անկաշկանդ դիմում են օգնություն և խորհրդատվություն ստանալու համար: Խորհրդատվական ծառայությունից օգտվում են նաև սեմինարներին չմասնակցած անհատներ: Գործատուների հետ պարբերաբար կազմակերպվող հանդիպումները ևս մեծ ազդեցություն են ունենում ուսանողների և շրջանավարտների՝ աշխատանքի շուկայում կողմնորոշվելու և իրենց ներկայացնելու հարցում:</p> <p>Կարիերայի պլաննավորման աշխատանքների համար Համալսարանը մշտական աշխատանքային կապ է պահում Վանաձորի զբաղվածության մարզային կենտրոնի հետ: Մասնակցում է մարզի գործատուների խորհրդի աշխատանքներին:</p> <p>Պլանային սեմինար – վերապատրաստումներից բացի, իրականացվում են նաև</p>	



միջոցառումներ համագործակցություն արտաքին դաշտի ներկայացուցիչների հետ: Գործընկեր մի շարք կազմակերպություններ (Լոռու մարզի զբաղվածության կենտրոն, կրթական, ուսումնական և արտադրական հաստատություններ մասնավոր և պետական սեկտորից) ակտիվորեն մասնակցում են ուսանողների և շրջանավարտների համար կազմակերպվող միջոցառումներին՝ փոխանցելով իրենց առաջավոր փորձը:

Համալսարանը մասնակցել է ամենամյա **LOGOS EXPO 2017 Կրթություն և Կարիերա** միջազգային ցուցահանդեսին, որտեղ ներկայացվել են ՎՊՀ քոլեջը, ՎՊՀ մագիստրոսական և բակալավրի կրթական ծրագրերը: «Վանաձորի զբաղվածության կենտրոնի» հետ համատեղ կազմակերպվել և իրականացվել է «Աշխատանքի տոնավաճառ» միջոցառումը, որի համար շրջանավարտների և կարիերայի աջակցման աշխատանքների պատասխանատուն և կամավորներն արժանացել են հատուկ շնորհակալագրերի:

Կարևորագույն ձեռքբերումը կամավորության ինստիտուտի ներդրումն է. իրականացվել է կամավորների հավաքագրում և աշխատանքների պլանավորում: Այս պահին շրջանավարտների և կարիերայի աջակցման աշխատանքներում ներգրավված է 10 կամավոր: Համալսարանի կամավորները մասնակցել են մասնագիտական կողմնորոշման աշխատանքներին Վանաձոր քաղաքի և Լոռու մարզի ավագ դպրոցներում: Իրականացվել են շրջանավարտների բազայի և կադրային ռեզերվի համալրման աշխատանքներ, ընդունվել և դասակարգվել են ՎՊՀ, նաև այլ բուհերի շրջանավարտների ռեզյումեները:

Աշխատաշուկայի ուսումնասիրության նպատակով կատարվել են մի շարք հարցումներ և վերլուծություններ ինչպես շրջանավարտների և կարիերայի աջակցման աշխատանքների պատասխանատուի նախաձեռնությամբ, այնպես էլ Համալսարանի տարբեր ամբիոնների և դեկանատների պատվերով: Եռամսյա կտրվածքով իրականացվում են մանկավարժի մասնագիտության պահանջարկի վերհանում, կատարվում է մարզում առկա այլ մասնագիտությունների պահանջարկի վերլուծություն:

Ըստ վերջին հետազոտությունների՝ կարիերայի կենտրոնի օգտակարությունը գնահատվել է հետևյալ կերպ.

Ցուցանիշ	1	2	3	4	5
Ինչքանով էք կարևորում Համալսարանի կարիերայի կենտրոնի օգտակարությունը Ձեզ համար	9.2	11.5	27.7	39.2	10

Կազմակերպված միջոցառումների արդյունքում ուսանողները ստանում են պրակտիկ հմտություններ աշխատանքի շուկայում իրենց տեղը գտնելու, ճիշտ կողմնորոշվելու և որպես մասնագետ հետագայում զարգացման հնարավորություն ունենալու համար:

Ուսանողներն ու շրջանավարտները վերոնշյալ ծառայությունների մասին տեղեկություն կարող են ստանալ ՎՊՀ պաշտոնական կայքէջից և ֆեյսբուքյան էջից:

ՉՍՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

ՄՈՒՀ-ի համար գերակա գիտահետազոտական աշխատանքներում ուսումնառողների մասնակցության ապահովման քաղաքականությունը և ընթացակարգը:
[«Ուսանողական գիտական ընկերության կանոնադրություն»](#)



ՄՈԻՀ-ի համար գերակա հետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի.

	Ուսումնառողներ	<i>2014</i>	<i>2015</i>	<i>2016</i>	<i>2017</i>	<i>2018</i>
	Բակալավր	90	82	19	54	31
	Մագիստրոս	136	19	5	39	84
	Հետազոտող	0	0	0	0	1

Ուսումնառողների մասնակցությամբ ՈԻԳԸ ներգրավված ուսանողների թիվն ըստ տարիների

	Գիտահետազոտական ծրագիր	<i>2014</i>	<i>2015</i>	<i>2016</i>	<i>2017</i>	<i>2018</i>
1	Գիտաժողով	50	101	132	60	60

Ուսումնառողների հեղինակությամբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը

	Տպագրված աշխատանք	<i>2014</i>	<i>2015</i>	<i>2016</i>	<i>2017</i>	<i>2018</i>
1	Գիտական հոդված	8	40	42	38	110

Ուսանողների գիտահետազոտական աշխատանքների իրականացման գործում մեծ է Ուսանողական գիտական ընկերության դերը, որի գործունեության իրավական հենքը համարվում է «Ուսանողական գիտական ընկերության կանոնադրությունը»: Ուսանողական գիտական ընկերությունը Համալսարանի ուսանողներին միավորող՝ բուհական ներկայացուցչական ինքնակառավարվող ուսանողական միավորում է, որի նպատակն է նպաստել ուսանողների գիտական, հետազոտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը:

Համալսարանում գործում են գիտական կաբինետը, մասնագիտական կաբինետները, գիտահետազոտական համալիր լաբորատորիան, որը բնագիտական մասնագիտությունների ուսանողներին հնարավորություն է տալիս կատարել փորձեր նորագույն սարքերի և սարքավորումների միջոցով, ստանալ առավել ճշգրիտ տվյալներ: Հետազոտական հնարավորություններ է ստեղծում նաև նոր սարքավորումներով հագեցած կենսաբանաէկոլոգիական հետազոտությունների լաբորատորիան:

2014 թվականին տպագրվել է 8 հետազոտական աշխատանք, որոնք ղեկավարվել են մանկավարժության, քիմիայի և կենսաբանության ամբիոնի դասախոսների կողմից: 2015 թվականին մի քանի անգամ ավելացել է ուսանողների հեղինակած գիտական հետազոտական աշխատանքների թիվը, տպագրվել է 40 գիտական հոդված, որոնցից 34-ը տպագրվել են Ուսանողական գիտական հոդվածների ժողովածուներում, մնացած մասը՝ գիտական տարեգրքում, ամսագրերում և հանդեսներում: 2016 թվականին տպագրված աշխատանքների թիվը եղել է 42-ը: Աշխատանքները տպագրվել են Վանաձորի պետական համալսարանի, Գյումրու մանկավարժական համալսարանի և Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտական հոդվածների ժողովածուներում: 2017 թվականին թեև աճ չի գրանցվել, այնուամենայնիվ տպագրված հոդվածների թիվը քիչ չէ՝ 38: Դրանք տպագրվել են Վանաձորի պետական համալսարանի և Արցախի պետական ու «Մեսրոպ Մաշտոց» համալսարանների գիտական ժողովածուներում:

2018 թվականին տպագրվել է 110 հոդված, որոնցից 47-ը տպագրվել են ՎՊՀ-ի ՈԻԳԸ-ի 7-



րդ գիտաժողովի նյութերում, 15-ը ՎՊՀ-ի գիտական տեղեկագրում՝ համահեղինակությամբ, 7-ը՝ Արցախի պետական համալսարանի «Գիտական ընթերցումներ»-ում, 1-ը՝ Էլեկտրոնային գիտական ամսագրում, 1-ը Վոլգոգրադում (Международный студенческий научно-практический форум по финансовой грамотности «Время-деньги»), 39-ը՝ «Մագիստրոս» հոդվածների ժողովածուում: Ժողովածուն հրատարակվել է Վանաձորի պետական համալսարանի կողմից և ներառում է ՎՊՀ-ի մագիստրատուրայում սովորող ուսանողների հոդվածներ հետևյալ մասնագիտություններից՝ Քիմիա, Հանրային կառավարում, Կրթության կառավարում. Հայոց լեզու և գրականություն, Ռուսաց լեզու և գրականություն, Անգլերեն լեզու և գրականություն:

Ավանդական են դարձել հայագիտական ամառային գիտարշավները, որոնք կազմակերպում է Համալսարանի շրջանավարտ Բ. Գ. Թ. Հրաչ Մարտիրոսյանը: Համալսարանի ուսանողներից բացի, գիտարշավին մասնակցում են նաև հայագիտությամբ հետաքրքրվող ուսանողներ ՀՀ բուհերից և գիտակրթական կենտրոններից:

ՉՍՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՆ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

Ուսումնառողների իրավունքները արտացոլող փաստաթուղթը,
[Ուսումնառողների իրավունքներով, բողոքներով և բողոքարկումներով զբաղվող ենթակառուցվածքի գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերը](#),
 Վերջին 5 տարիների ընթացքում ուսանողների բողոքների և այդ խնդիրների լուծման վիճակագրական տվյալները և համապատասխան հիմքերը:
 Ուսանողի հետ կնքվող պայմանագրի օրինակ ([Հավելված 4.7.1](#))
[ՎՊՀ-ի կանոնադրությունը](#)
[ՎՊՀ ներքին կարգապահական կանոններ](#)
[Ուսանողի ուղեցույց](#)
[Ուսխորհրդի կանոնադրություն](#)

	%
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված Ուսանողական խորհրդի մասին:	72%
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում համապատասխան ծառայությունից:	17%
Ուսումնառողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացից:	46%

Համալսարանում ուսանողների իրավունքները ամրագրված են մի քանի փաստաթղթերում.

- «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրությունը,
- Ուսանողի հետ կնքվող պայմանագրում,
- Ուսխորհրդի կանոնադրությունում,
- Ներքին կարգապահական կանոններում,
- «Ուսանողի ուղեցույց»,
- Կրթական գործընթացը կանոնակարգող փաստաթղթերում ըստ նպատակայնության:

Ուսանողների պաշտպանության պատասխանատու մարմինը Ուսանողական խորհուրդն է, որն ապահովում է ուսանողական ինքնավարության և ուսանողական ինքնակառավարման գործընթացները Համալսարանի ուսանողության շրջանում, արտահայտում և պաշտպանում է



ուսանողության և հետբուհական կրթություն ստացողների շահերը, նպաստում նրանց հասարակական, գիտական, ինտելեկտուալ, ստեղծագործական, մշակութային, բարոյական և հոգևոր զարգացմանը:

Ուսխորհրդի աշխատանքների համար Համալսարանը արտաբյուջեի միջոցներից կատարում է ֆինանսավորում տարեկան 300-400 հազար դրամի չափով:

Համալսարանի Ուսխորհուրդն ունի ինտերնետային էջ՝ <https://web.facebook.com/profile.php?id=100016034530352>, և բլոգ՝ www.vphusxorhurd.blogspot.com/:

Ուսխորհուրդն ակտիվորեն մասնակցում է «Լավագույն կուրս», «Լավագույն ուսանող» մրցանակաբաշխության կազմակերպչական աշխատանքներին՝ գնահատելով ուսանողների կատարած հասարակական աշխատանքները, ակտիվ մասնակցությունը ներբուհական կյանքին, ուսանողական ինքնակառավարման աշխատանքներին: Որոշ սոցիոլոգիական հարցումներ Համալսարանը իրականացնում է Ուսխորհրդի ուժերով:

ՉՍՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

ՄՈՒՀ-ում գործող ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների մատուցման գնահատման և որակի ապահովման քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները. Հաստատության գործունեության որակի ապահովման գործընթացներում ուսումնառողների դերը սահմանող կանոնակարգերը Ուսումնական գործընթացների վերաբերյալ ուսումնառողների արձագանքի օրինակները ([Հավելված 4.8.1](#)) [«Դասախոսը ուսանողների աչքերով» սոցիոլոգիական հարցման անցկացման» կանոնակարգ](#)

Շրջանավարտների զբաղվածության մակարդակը վերջին հինգ տարվա համար (թվով):						
	Զբաղվածություն/ուսման շարունակություն	2014	2015	2016	2017	2018
1	Ավարտելուց անմիջապես հետո	81	49	64	56	51
2	Նախքան ավարտելը	39	23	74	62	31
3	Մասնագիտությամբ	261	289	367	231	94
4	Ոչ-մասնագիտությամբ	189	191	118	98	71
5	Ավարտելուց հետո ուսումը շարունակող ուսանողների տոկոսը	42	39	36	31	36
6	Ավարտելուց 2-5 տարի հետո զբաղվածության մակարդակը	-	-	-	-	-
7	Գործազուրկ ուսանողների տոկոսը	38.6	23.6	37.1	48	39
8	Ավարտելուց 5 տարի հետո զբաղվածության մակարդակը	-	-	-	-	-

Համալսարանում ուսանողների, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատումը հիմնականում իրականացվում է սոցիոլոգիական հարցումների, ֆոկուս խմբերի միջոցով, որոնք հիմնականում կազմակերպում է որակի ապահովման կենտրոնը, երբեմն



ուսումնամեթոդական վարչությունը, ուսխորհուրդը: Հարցումների համար մշակվել են կրթական ծառայությունների, ուսումնաօժանդակ կազմի մատուցած ծառայությունների, ուսումնական ռեսուրսների, կոռուպցիոն ռիսկերի, ուսանողների բավարարվածության գնահատման գործիքակազմ: Որոշ հարցումներ կանոնակարգված են («Վանաձորի պետական համալսարանում «Դասախոսը ուսանողների այքերով» սոցիոլոգիական հարցման անցկացման կանոնակարգ) և կրում են պարբերական բնույթ. հարցումը Համալսարանի բոլոր ուսանողների շրջանում կատարվում է տարին երկու անգամ: Համալսարանը սկսել է կիրառել էլեկտրոնային հարցման համակարգը, որը ժամանակի կառավարման և արդյունքների վերլուծման տեսանկյունից բավականին արդյունավետ գործիք է:

Համալսարանի տարբեր կառույցներում հարցումների արդյունքները վերլուծվում են, քննարկվում տարբեր օղակներում, մակարդակներում, վերհանվում են կարիքները և կարգավորման նպատակով ձեռնարկվում միջոցառումներ:

4-ԸՂ ՉԱՓԱՆԻՇԻ SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմերը
<ol style="list-style-type: none"> 1. Գիտաժողովներին մասնակցելու ֆինանսավորում/աջակցություն, խրախուսում 2. Բանիմաց մասնագետների առկայություն 3. Նյութատեխնիկական բազայի բավականաչափ առկայություն 4. Ուսանողներին վերաբերող ցանկացած տեղեկատվության դյուրին ստացման հնարավորություն 5. Ուսանողների խոսքի հասանելիություն կառավարման/ադմինիստրատիվ կազմին 	<ol style="list-style-type: none"> 1. Գործնական հմտությունների ձևավորման պակաս 2. Մասնագիտական օտար լեզուների իմացության ցածր մակարդակ 3. Նորագույն մեթոդների կիրառության պակաս 4. Միջբուհական համագործակցության պակաս
Արտաքին հնարավորություններ	Վտանգներ
<ol style="list-style-type: none"> 1. Էլեկտրոնային գրադարանների նպատակային օգտագործում 2. Ժամանակակից մեթոդների կիրառություն 3. Պրակտիկայի անցկացման շրջանակների ընդլայնում 4. Լեզուների կենտրոնի ակտիվ գործունեություն 	<ol style="list-style-type: none"> 1. Ավանդական դասախոսություններ 2. Զթարմացված դասախոսական տեքստեր 3. Դիմորդների թվաքանակի պակաս 4. Մագիստրատուրայի դիմորդների պակաս
<ul style="list-style-type: none"> • Գործատուների ներգրավում մրցունակ մասնագետների պատրաստման կրթական ծրագրերի մշակման գործընթացներում. • գիտության և կրթության կապի խորացում. • գրադարանային-տեղեկատվական ցանցի արդիականացում և ընդլայնում • ուսանողների համար կրթական ռեսուրսների և ինքնակրթության համար տեխնոլոգիաների մատչելի պայմանների ապահովում: • կրթական ծառայությունների որակի, շրջանավարտների հմտությունների, ունակությունների, բարձր արհեստավարժության և հիմնարար գիտելիքների նկատմամբ 	



Վ. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ և ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունը ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

ՎՊՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրերի իրականացման կարևորագույն գործոնը որակյալ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ձևավորման, համալրման, զարգացման և սահուն սերնդափոխության իրականացումն է: Բարելավման գործողությունների պլանով՝ կատարվել է կադրային ոլորտում իրականացվող քաղաքականության համապատասխանեցում արդի պահանջներին. ստեղծվել է մարդկային ռեսուրսների կառավարման (ՄՌԿ) բաժինը և մշակվել է «ՎՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականությունը» փաստաթուղթը:

ՄՌԿ տեսանկյունից անհրաժեշտ է դյուրին դարձնել նոր անդամների մուտքը Համալսարան, նպաստել աշխատանքային միջավայրում նրանց ադապտացմանը: Այդ խնդրի լուծմանն է ուղղված մենթորների ինստիտուտի կազմակերպումը:

Աշխատանքային գործունեության կանոնակարգմանը վերաբերող մի շարք փաստաթղթեր վերամշակվել են՝ հաշվի առնելով անցումը համալսարանական կրթության համակարգին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

[Քաղաքականություն «ՎՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման»](#)
 Կարգ «ՎՊՀ հիմնադրամի երիտասարդ դասախոսների (աշխատակիցների) մենթորության»
[Կանոնակարգ «ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման»](#)
[Կանոնակարգ «ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի աշխատողների աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում առանց մրցութային ընտրության նոր աշխատանքային պայմանագիր կնքելու»](#)
[Կանոնակարգ «ՎՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչների որոշման»](#)
 «Հիմնական և համատեղությամբ դասավանդողների կազմը ըստ ամբիոնների և որակավորումների՝ ներառյալ գիտական աստիճանները և կոչումները, աշխատանքային ստաժը բուհում, նրա կողմից վարվող հիմնական դասընթացները» (հաստիքային ցուցակ) ([Հավելված 5.1.1](#)):
[Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարանի զարգացման հայեցակարգ 2014-18թթ.](#)

Հիմքեր



[Պաշտոնի անձնագրեր](#)
[Ընթացակարգ «Կրթական ծրագրերի մշտադիտարկման»](#)
[Կարգ «ՎՊՀ ամբիոններում դասալսումների անցկացման և քննարկման կազմակերպման»](#)
[Կանոնակարգ «Դասախոսն ուսանողի այքերով» սոցիոլոգիական հարցման անցկացման»](#)
[Կանոնակարգ «ՎՊՀ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի»](#)
[ՎՊՀ ներքին կարգապահական կանոններ](#)
[«Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի կոլեկտիվ պայմանագիր»](#)

ՎՊՀ-ի առաքելությունն է՝ պատրաստել հիմնարար և կիրառական գիտելիքներով, գործնական հմտություններով օժտված կոմպետենտ մասնագետներ: Այս նպատակի իրականացումը, ուսանողակենտրոն կրթական համակարգի կայացումն անհնարին են առանց անհրաժեշտ մասնագիտական որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի շարունակական զարգացման: Համալսարանը ձևավորում և համալրում է իր պրոֆեսորադասախոսական անձնակազմը մրցութային հիմունքներով՝ համաձայն իրականացվող կրթական ծրագրերի և ՄՌԿ բաժնի կողմից մշակված պաշտոնների անձնագրերի պահանջների: Դասախոսների տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչները յուրաքանչյուր ուսումնական տարվա համար վերանայվում են ըստ համապատասխան կանոնակարգի: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատանքային գործունեության վերլուծությունը իրականացվում է համաձայն Համալսարանի գիտխորհրդի կողմից ընդունված փաստաթղթերի պահանջների:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի՝ հաստիքային և ժամավճարային կարգով աշխատողներով համալրումը իրականացվում է մրցութային եղանակով՝ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջների և դրույթների, ՎՊՀ ներքին կարգապահական կանոնների և կոլեկտիվ պայմանագրի դրույթների: Մրցութային հետ կապված հարցերը կարգավորելու համար գործում է մրցութային հանձնաժողով՝ բաղկացած Համալսարանի առաջատար մասնագետներից և ուսանողներից, որն ուսումնասիրում է մրցութին ներկայացվող անձանց փաստաթղթերը: Որակյալ կադրեր ներգրավելու համար Համալսարանն ուղղորդվում է նաև պաշտոնների անձնագրերով, որոնք մշակվել են համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարի 19.09.2013թ թիվ 873-Ն հրամանով հաստատված «Զբաղմունքների դասակարգիչ (ՀԴ-009-2013)» փաստաթղթի: Առանձին դեպքերում, Համալսարանի կրթական ծրագրերի պահանջներից ելնելով, Համալսարանը հրավիրում է դասախոսներ այլ ՄՌՀ-երից՝ համապատասխան աշխատանքային պայմանագրեր կնքելու միջոցով:

ԶՍՓՈՐՈՇԻՉ ք. ՄՌՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Հիմքեր [Կանոնակարգ «ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման»](#) ,
[Կանոնակարգ «ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի աշխատողների](#)



[աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում առանց մրցութային ընտրության նոր աշխատանքային պայմանագիր կնքելու»](#)
[Պաշտոնի անձնագրեր](#)
[Ընթացակարգ կրթական ծրագրերի մշտադիտարկման](#)
[Կարգ «ՎՊՀ ամբիոններում դասալսումների անցկացման և քննարկման կազմակերպման»](#)
[Կանոնակարգ ««Դասախոսն ուսանողի այքերով» սոցիոլոգիական հարցման անցկացման»](#)
[Կանոնակարգ «ՎՊՀ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի»](#)
[ՎՊՀ ներքին կարգապահական կանոններ](#)

Համալսարանի կրթական ծրագրերում ընդգրկված պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները ամրագրված են պաշտոնների անձնագրերում, ինչպես նաև ՎՊՀ-ի դասախոսական կազմի ձևավորմանը և համալրմանը նվիրված կարգերում և այլ փաստաթղթերում:

Մրցութային հանձնաժողովը և ղեկավարությունը առաջնորդվում են ընտրվող պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներով: Բակալավրիատի պատրաստման հիմնական կրթական ծրագրերը, որպես կանոն, իրականացնում են դասընթացների դասավանդման ուղղվածությանը համապատասխանող հենքային կրթություն ունեցող կադրեր, որոնք հետևողականորեն զբաղվում են հետազոտական և գիտամեթոդական գործունեությամբ:

Հատուկ մասնագիտական դասընթացներ դասավանդող դասախոսները, որպես կանոն, ունեն գիտական աստիճան (կամ գիտական կոչում, արվեստի ոլորտի պատվավոր կոչում և այլն) և/կամ գործունեության համապատասխան ոլորտում աշխատանքային փորձ: *Կամ ընտրական դասընթացների դասավանդման համար ուշադրություն է դարձվում դասախոսի գիտական հետաքրքրությունների ուղղվածությանը:*

Պրոֆեսորադասախոսական կազմի համալրման օրինականությանը հետևում է ՎՊՀ-ի գիտխորհրդին կից գործող մրցութային (նշանակումների) հանձնաժողովը:

ԶՄՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈԻՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման քաղաքականությունը և ընթացակարգերը
 Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման մեխանիզմներն ու գործիքները
 Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման գործընթացի արդյունավետությունն արտահայտող այլ հիմքեր և վերլուծություններ
 Արձագանքների օրինակները (ուսումնառողների, այլ դասավանդողների, ղեկավարների)
[Կանոնագիրք «ՎՊՀ էթիկայի»](#)
[Ընթացակարգ «Կրթական ծրագրերի մշտադիտարկման»](#) [Կարգ «ՎՊՀ ամբիոններում](#)



դասալսումների անցկացման և քննարկման կազմակերպման»

Կանոնակարգ «Դասախոսն ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցման անցկացման

Ձգտելով ապահովել ՎՊՀ ռազմավարական զարգացման հիմնական նպատակը՝ որակյալ կադրերի պատրաստումը՝ Համալսարանը իրականացնում է հետևողական քաղաքականություն՝ միտված անհրաժեշտ կոմպետենցիաներով օժտված, էթիկական ընդունված նորմերին համապատասխանող դասախոսական կադրերով համալրմանը: Համալսարանում մշակվել և գործում է ՎՊՀ-ի էթիկայի կանոնագիրքը, որտեղ ամրագրված են էթիկայի սկզբունքների և նորմերի այն չափանիշները, որոնք Համալսարանն ակնկալում է իր աշխատողներից և սովորողներից:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի անհրաժեշտ որակի ապահովման համար կիրառվում են հետադարձ կապի մեխանիզմներ և ընթացակարգեր՝ կրթական ծրագրերի մշտադիտարկման, պարբերական ուսանողական հարցումների, դասալսումների անցկացման և վերլուծության միջոցով:

«Դասախոսն ուսանողի աչքերով» սոցիալական հարցման հարցաթերթիկները պարունակում են թվով 40 հարց, որոնք միտված են բացահայտելու տվյալ դասախոսի ուժեղ և թույլ կողմերը, մղելու նրան սեփական բացթողումները վերացնելու, վերանայելու առարկայի դասավանդման իր մոտեցումները, կիրառելու ավելի արդյունավետ գնահատման միջոցներ, հաշվի առնելու լսարանի պահանջները և այլն: Հարցման արդյունքները քննարկվում են համապատասխան ստորաբաժանումներում (ֆակուլտետ, ամբիոն), գիտխորհրդի նիստերին: Հարցման արդյունավետության տեսակետից անհրաժեշտ է պարբերաբար վերանայել հարցաթերթիկների բովանդակությունը, նաև կրճատել հարցերի քանակը, ինչը կատարվել է 2019 թ-ին:

1. Ուսանողական հարցումն իրականացվում է այն ֆակուլտետում, որտեղ դասավանդել է դասախոսը՝ պարտքերի մարմանը հաջորդող ամսվա ընթացքում: Ավարտական կուրսերում երկրորդ կիսամյակի վերաբերյալ հարցումն իրականացվում է քննաշրջանի ավարտից հետո՝ մինչև ավարտական որակավորման քննությունների սկիզբը:
2. Հնգամյա ժամկետով ընտրված դասախոսի համար անցկացվում է առնվազն երեք հարցում:
3. Հրավիրված դասախոսների համար հարցումն անցկացվում է Համալսարանում առնվազն մեկ տարի աշխատելուց հետո:

Գործում է դասախոսների գիտահետազոտական գործունեության խրախուսման համակարգ, որը սակայն դեռ զարգացման և կատարելագործման խնդիր ունի:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան՝ ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

Պահանջվող որակավորումներին համապատասխան դասավանդողների կոմպետենցիաների շրջանակի ընդլայնումն ապահովող մեթոդները և հիմքերը
ՎՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման

Դասավանդողների կատարելագործման միջոցառումների պլանները՝ ըստ մեթոդական, մասնագիտական և բարեփոխումների ուղղվածությունների



վերապատրաստումների պլան/ շարունակական կրթություն
 Դասավանդողների կատարելագործման թեմաները
 Դասավանդողների կատարելագործման միջոցառումների ժամանակացույցը
 Այլ հիմքեր
[Կանոնակարգ «ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման».](#)
[«ՎՊՀ շարունակական \(հարատև\) կրթության կենտրոնի 2019-2021թթ. գործունեության ծրագիր ուղղված աշխատակիցների որակավորման բարձրացմանը»](#)
[«Գործունեության առանցքային ցուցանիշներ. 2018»](#)

Պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանողական անձնակազմի մասնագիտական պատրաստվածության շարունակական բարձրացումը, նոր գիտելիքի, կարողությունների և հմտությունների ձեռքբերումը կարևորագույն խնդիր է: Այս գործընթացը կանոնակարգված է և իրականացվում է Համալսարանի շարունակական կրթության բաժնի կողմից անցկացվող վերապատրաստման դասընթացների միջոցով: Վերապատրաստումն իրականացվում է 5-ամյա ցիկլով 30 կրեդիտ ընդհանուր աշխատածավալով, հետևյալ ուղղություններով.

1. Կրթական կառուցամաս.
 - 1.1. Անգլերենն ակադեմիական միջավայրում,
 - 1.2. Իրավական պատրաստություն,
 - 1.3. Մանկավարժահոգեբանական պատրաստություն,
 - 1.4. Մասնագիտական պատրաստություն,
2. Հետազոտական կառուցամաս.
 - 2.1. Հրատարակումներ,
 - 2.2. Զեկուցում համաժողովում:

2019թ փետրվար-մարտ ամիսներին շարունակական կրթության բաժնի կողմից կազմակերպվել է դասընթացների անցկացում, որոնք վարում են Erasmus+ PRINTEL ծրագրի շրջանակներում վերապատրաստված ՎՊՀ դասախոսները: Դասընթացները նվիրված են SS-ի կիրառմամբ դասավանդման նոր մոտեցումներին, ինչը կարևոր է հեռավար կրթության կազմակերպման հարթակների ստեղծման տեսակետից:

PRINTEL (ERASMUS+) նախագծում՝ «Փոփոխություն լսարանում. նորարարական դասավանդման և ուսումնառության օժանդակում՝ Արևելյան գործընկերության երկրներում ուսանողի ուսումնական փորձառության բարելավման նպատակով» նախագծի շրջանակներում Համալսարանը համագործակցում է Լյովենի կաթոլիկ, Բարսելոնայի, Պորտոյի, Լինշոպինգի և Գրացի Կիրառական գիտությունների համալսարանների հետ, որտեղ վերապատրաստվել են 6 երիտասարդ դասախոսներ: Մինչ գործուղելը նրանց հետ կնքվել է համաձայնագիր և, արդյունքում, վերադառնալուց հետո վերապատրաստվել են ավելի քան 60 դասախոս: Վերապատրաստումներին նախորդել է կարիքների վերլուծությունը /եվրոպական գործընկերներին ներկայացվել է զեկույցը(<https://www.printel.am/page/pd-for-wp-1/>): Վերապատրաստումներն ամբողջությամբ ներառում են դասավանդման և ուսումնառության նորարարական և տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից մեթոդների կիրառություն.

- Ակտիվ ուսումնառություն՝ առաձևահատուկ շեշտադրելով տեխնոլոգիական ընդլայնված



համագործակցային ուսումնառությունը,

- Ակտիվ ուսումնառություն «Շրջված լսարան»-ում,
- Ակտիվ ուսումնառություն և S2S ընդլայնված դասավանդում. բջջային ուսումնառություն և խաղեր,
- Տեսանյութը որպես ուսումնառության գործիք դասախոսների և ուսանողների համար. տեսադասախոսություն և փոխներգործության խթանում լսարանում,
- Հիբրիդային/համակցված դասավանդում և ուսումնառություն:

Այս դասընթացները մեծ ոգևորություն են առաջացրել Համալսարանում, և քանի որ խմբերում մասնակիցների հավաքագրումը չէր կարող լինել անսահմանափակ, նախատեսվում է կազմակերպել երկրորդ փուլ: Մասնակցության ցանկություն են հայտնել նաև մանկավարժական ուղղվածությամբ մագիստրոսները և բակալավրի կրթական ծրագրով ուսումնառող չորրորդ կուրսի ուսանողները: Մասնակցության տեսանկյունից առավել ակտիվություն կա երիտասարդ և միջին տարիքի դասախոսների կողմից. ավագ խումբը ավելի սակավ է մասնակցել, թեպետ ունեցել ենք 72 տարեկան մասնակից: Նախատեսվում է կիսամյակի վերջում ամբիոններում քննարկել ուսուցանված մեթոդների արդյունավետությունը:

Արդյունքների քննարկումից և հետադարձ կապի տվյալների ստացումից հետո ուսումնամեթոդական վարչության կողմից կառաջարկվի փոփոխություններ կատարել դասախոսական կազմի վերապատրաստման ծրագրում՝ ներառելով նշված մեթոդների դասավանդումը:

Ձգտելով խթանել Համալսարանի կրթական ծրագրերի միջազգայնացումը՝ ՎՊՀ-ն նախաձեռնել է մասնագիտական օտար լեզվի (անգլերեն) իմացության դասընթացներ պրոֆեսորադասախոսական կազմի համար՝ ներգնա ուսանողներին դասընթացները անգլերենով դասավանդելու նպատակով: Խմբերում ընդգրկված են թվով 10 դասախոսներ Համալսարանի բոլոր 5 ֆակուլտետներից:

Շարունակական կրթության բաժնի կողմից իրականացվող դասախոսների կրեդիտային համակարգով որակավորման բարձրացման հնգամյա ծրագրի շրջանակներում 2015-2018 թթ. վերապատրաստվել են 184 դասավանդող:

Համալսարանը աջակցում է նաև իր աշխատակիցների նեղ մասնագիտական վերապատրաստմանը: 2018-19 ուստարվա առաջին կիսամյակում ռուսաց լեզվի ամբիոնի 12 դասախոսներ անցել են վերապատրաստում «Գործարար ռուսաց լեզու» և «Ռուսաց լեզվի հնչյունաբանության արդի խնդիրները» թեմաներով, որը կազմակերպվել և անցկացվել էր «Ռոսսոտրոդնիչեստվո» գործակալության հայաստանյան գրասենյակի և ՀՊՄՀ-ի կողմից (ք.Երևան): Խրախուսելի է նաև դասախոսների և աշխատակիցների՝ անձնական նախաձեռնությամբ վերապատրաստվելու մղումը: Այսպես, 2017 թ-ին հոգեբանության ամբիոնի դասախոսներից երկուսը անցել են մասնագիտական վերապատրաստումներ ՀՀ կառավարման ակադեմիայում և Երևանի պետական համալսարանում, իսկ օտար լեզվի ամբիոնի դասախոսներից մեկը վերապատրաստվել է Գյոթեի ինստիտուտի կողմից կազմակերպված գերմաներենի դասավանդման մեթոդիկայի և դիդակտիկայի դասընթացին՝ ստանալով 3 ECTS կրեդիտ ծավալով վերապատրաստման վկայական:

Վերջին տարիներին նկատվում է նաև ակադեմիական շարժունության միջազգային



դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում վերապատրաստման կարճաժամկետ դասընթացներին մասնակցած պրոֆեսորադասախոսական և աշխատակազմի ներկայացուցիչների թվի աճ՝ 2015-18թթ 17 մասնակից: Այդ վերապատրաստումներն անցած մասնագետները Համալսարանի շարունակական կրթության շրջանակներում վարում են դասընթացներ՝ ստացած գիտելիքները փոխանցելով դասախոսներին և աշխատակիցներին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի ցանկը (նշելով որակավորումները, գիտական աստիճանները և/կամ կոչումները)
 Պրոֆեսորադասախոսական կազմի կայունությունն ապահովող քաղաքականությունը և ընթացակարգերը
 Համատեղությամբ աշխատող դասավանդողների ցանկը(նշելով որակավորումները, գիտական աստիճանները և/կամ կոչումները)
[Քաղաքականություն «ՎՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման», Կանոնակարգ «ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման»](#)
[Կանոնակարգ «ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի աշխատողների աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում առանց մրցութային ընտրության նոր աշխատանքային պայմանագիր կնքելու»](#)
[Կանոնակարգ «ՎՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչների որոշման»](#)
 «Հիմնական և համատեղությամբ դասավանդողների կազմը ըստ ամբիոնների և որակավորումների՝ ներառյալ գիտական աստիճանները և կոչումները, աշխատանքային ստաժը բուհում, նրա կողմից վարվող հիմնական դասընթացները» (հաստիքային ցուցակ):
[«Գործունեության առանցքային ցուցանիշներ. 2018»](#), էջ 25,
[Կարգ «ՎՊՀ աշխատողների գիտակազմակերպական, ուսումնամեթոդական և մարզամշակութային որոշ տեսակի աշխատանքների համար դրամական խրախուսման հաշվարկման ու վճարման»](#)
[Կարգ «ՎՊՀ աշխատակիցներին և ուսանողներին դրամական օգնություն և աջակցություն տալու, պարգևատրելու և խրախուսելու»](#)
[Կարգ «ՎՊՀ աշխատողներին արտասահմանյան գիտական գործուղումներ տրամադրելու»](#)

Համալսարանի կրթական ծրագրերի պրոֆեսորադասախոսական անձնակազմը բավականին կայուն է, ինչը կարելի է բացատրել նաև պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի արդյունավետ աշխատանքի խրախուսման կիրառվող մեխանիզմներով: Հարկ է նշել նաև, որ եռամյա ընդմիջումից հետո 2017թ-ից 10%-ով բարձրացվել է բոլոր աշխատակիցների աշխատավարձը: Ամեն տարի, ելնելով բյուջեի հնարավորություններից, ՎՊՀ –ի աշխատակիցները ստանում են 13-րդ (կախված միջոցներից՝ նաև 14-րդ աշխատավարձ):



ՎՊՀ-ի դասախոսական կազմը համալրվում է հայտարարված մրցույթով. ստուգվում է մրցույթին դիմած դասախոսների մասնագիտական որակների համապատասխանությունը տվյալ ժամանակահատվածի կրթական ծրագրերի առաքելությանը և նպատակներին, կամ աշխատանքի են հրավիրվում բարձր որակավորում ունեցող մասնագետներ: Բացի կանոնակարգված գործընթացներից, ելնելով անհրաժեշտությունից, հնարավոր է տվյալ թեկնածուի կողմից փորձնական դասախոսության (գործնական, լաբորատոր աշխատանքի) անցկացումը:

2015-18թթ ընթացքում հիմնականում պահպանվել են պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարակարգերի միջև եղած հարաբերակցությունները: Ի համեմատ 2016-17 ուստարվա՝ 2017-18 ուստարում կրճատվել է հիմնական և համատեղության կարգով աշխատող դասախոսների թիվը՝ 212-ից մինչև 199-ը: Զգալիորեն կրճատվել է ժամավճարային կարգով աշխատողների թիվը՝ 68-ից հասնելով 41-ի: Դասախոսների միջին տարիքային բաշխումը վերջին երկու ուսումնական տարիներին մնացել է անփոփոխ, ինչը ռիսկային է սահուն սերնդափոխության տեսակետից: Իրավիճակի բարելավում կարելի է ակնկալել հետբուհական (ասպիրանտական) կրթության զարգացման արդյունքում: Մակայն դրան խոչընդոտում են ասպիրանտուրայի ընդունելության նախապայմանի՝ օտար լեզվի և «Ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներ» առարկաների քննություններին պատրաստվելու և հանձնելու հետ կապված դժվարությունները, քանի որ դասընթացները տեղի են ունենում Երևանում, և մագիստրանտ ուսանողը կամ երիտասարդ դասախոսը հնարավորություն չունի դրանց մասնակցելու: Այդ պատճառով Համալսարանում նախընտրում են գիտական կադրերի պատրաստումը հայցորդության միջոցով: Ներկայում ՎՊՀ-ում գրանցված է 14 հայցորդ, որոնցից 3-ի ուսուցումը ընդհատված է ֆիզիոլոգիական արձակուրդի պատճառով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ.ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

- Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը
- [Սկսնակ դասավանդողների խրախուսման և մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը](#)
 - [Սկսնակ դասավանդողների մենթորության քաղաքականությունը և ընթացակարգերը](#)
 - [Կանոնակարգ «ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման»](#)
 - [Կանոնակարգ «ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի աշխատողների աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում առանց մրցութային ընտրության նոր աշխատանքային պայմանագիր կնքելու»](#)
 - [Պաշտոնի անձնագրեր](#)
 - [Ընթացակարգ «Կրթական ծրագրերի մշտադիտարկման»](#)
 - [Կարգ «ՎՊՀ ամբիոններում դասալսումների անցկացման և քննարկման կազմակերպման»](#)
 - [Կանոնակարգ «Դասախոսն ուսանողի այքերով» սոցիոլոգիական հարցման](#)

Հիմքեր



անցկացման

ՎՊՀ ներքին կարգապահական կանոններ

Վերջին տարիների ընթացքում ՎՊՀ-ում մշակվել և ընդունվել են մի շարք փաստաթղթեր, որոնք ուղղված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման կանոնակարգմանը: Մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ընդլայնմանը և խորացմանը մեծապես նպաստում են դասավանդող անձնակազմի վերապատրաստումները, որոնք կատարվում են տարբեր ուղղություններով՝ հատուկ մշակված ծրագրերով՝ հաշվի առնելով Համալսարանի ռազմավարական զարգացման տվյալ փուլի խնդիրները: Օրինակ՝ 2018-19 ուստարվա սկզբին մեկնարկել և շարունակվում են հեռավար կրթության ներդրման հետ կապված վերապատրաստումները՝ մոտ ապագայում ուսուցման այդ նոր ուղղությունը զարգացնելու նպատակով:

Համալսարանի ղեկավարությունը իր հնարավորության սահմաններում աջակցում է նաև այն աշխատակիցներին, որոնք իրենց մասնագիտական գիտելիքները, ունակությունները և հմտությունները զարգացնում և ընդլայնում են տարբեր արտահամալսարանական կուրսերում և դասընթացներում՝ փոխհատուցելով նրանց տրանսպորտային կամ այլ ծախսերը:

ՉԱՓՈՂՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Վարչական աշխատակազմի ցանկը՝ ըստ հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների. (Հավելված 5.1.1)
Ուսումնաօժանդակ աշխատակազմի գործառույթները՝ (Հավելված 5.7.1)
Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի կայունության ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը,
Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեության որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը,
Աշխատակազմի գործունեության որակն ապահովող մեխանիզմները և գործիքները:
Հայեցակարգ ՈԱ
Կանոնադրություն ՎՊՀ գիտական կարիներտի

Վերջին երեք տարիների ընթացքում Համալսարանում շարունակվել են կրթական ծրագրերի մշտադիտարկման արդյունքում վերհանված թերությունների, բացթողումների վերացման աշխատանքները: Հստակեցվել են կրթական ծրագրերի և առանձին դասընթացների վերջնարդյունքները, մշակվում են այդ վերջնարդյունքների գնահատման հստակ մեխանիզմներ, ձևեր և մեթոդներ: Կազմվել և Համալսարանի կայքում տեղադրվել են բոլոր մասնագիտությունների տեղեկագրքերը (մանկավարժական և համալսարանական ուղղվածության), որոնց ստեղծմանը մասնակցել են ինչպես պրոֆեսորադասախոսական, այնպես էլ ուսումնաօժանդակ անձնակազմի անդամները: Շարունակական աշխատանք է կատարվում ներդրված ԱՈՒՄՓ-ների նորացման, նորերի կազմման, ներդրման ուղղությամբ: Ուսանողակենտրոն ուսումնական գործընթացը պահանջում է փոփոխել ավանդական դասավանդման ձևերը՝ ուսանողին ուսումնական գործընթացի ակտիվ մասնակից դարձնելու առումով: Համալսարանի ուսումնական գործընթացում այդ փոփոխությունները զգացվում են՝



դասախոսները ավելի համարձակ են դարձել դասավանդման նորագույն ձևերը ընտրելու գործում, սակայն այս բնագավառում անելիքները դեռևս շատ են:

5-ԴԴ ՉԱՓԱՆԻՇԻ SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>1. Արհեստավարժ կայուն պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի առկայություն:</p> <p>2. Պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման հստակ մեխանիզմների առկայություն:</p> <p>3. Պրոֆեսորադասախոսական կազմի սերնդափոխությանն ուղղված քաղաքականության իրագործում:</p> <p>4. Համալսարանի աշխատակազմի տարակարգային դրույքաչափերի, սահմանված խրախուսման համակարգի առկայություն, շարունակական բարեփոխում:</p> <p>5. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի խրախուսման համակարգի առկայություն, մշտական բարեփոխում:</p> <p>6. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի՝ կրեդիտային հենքով կազմված ծրագրերով վերապատրաստման իրականացում:</p> <p>7. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի ակտիվ մասնակցություն Համալսարանի միջազգայնացման գործընթացի խթանմանն ուղղված գործողություններում՝ ա) գործընկեր համալսարաններում դասընթացների վարում, բ) մասնակցություն գործընկեր համալսարաններում վերապատրաստման դասընթացներին, գ) ստացած գիտելիքների և հմտությունների փոխանցում ՎՊՀ-ի անձնակազմի անդամներին:</p>	<p>1. Պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքային ժամային ծանրաբեռնվածության բարձր մակարդակ:</p> <p>2. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի կողմից իրականացվող գիտահետազոտական աշխատանքների սակավություն:</p> <p>3. Արտասահմանյան դրամաշնորհային ծրագրերում ընդգրկվածության ոչ բավարար մակարդակ:</p> <p>4. Օտար լեզուներին տիրապետող դասախոսական կազմի անդամների փոքր թիվ:</p> <p>5. Երիտասարդ կադրերի ներգրավման, արտահոսքի կանխման ոչ բավարար միջոցներ:</p>
Արտաքին հնարավորություններ	Վտանգներ
<p>1. Պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի հավաքագրման ժամանակակից մեխանիզմների մշակում և կիրառում:</p> <p>2. Պրոֆեսորադասախոսական կազմի և արտաքին</p>	<p>1. Պրոֆեսորադասախոսական կազմի ծերացում:</p> <p>2. Ցածր վարձատրության պատճառով երիտասարդ կադրերի ներգրավման դժվարություններ:</p>



<p>շահառուների կապերի ընդլայնում և խորացում՝ գիտահետազոտական գործունեություն իրականացնելու, ՄԿԾ-ների արդիականացումն ապահովելու նպատակով:</p> <p>3. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական որակավորման անցկացում ՀՀ այլ բուհերում և կազմակերպություններում՝ ըստ նրանց կողմից առաջարկվող ժամանակակից գիտական և գիտամանկավարժական ուղղությունների:</p> <p>4. Միջազգայնացման գործընթացներում պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանդակ կազմի մասնակցության ընդլայնում և խորացում:</p>	<p>3. Ժողովրդագրական առկա խնդիրների պատճառով ուսանողների թվի անկում և որպես հետևանք՝ հաստիքների կրճատում:</p>
<ul style="list-style-type: none"> • Համալսարանի կառավարման համակարգում պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների ներգրավման և գործուն մասնակցության խորացում, • Համալսարանի ՄԿԿ ռազմավարությանը, քաղաքականությանը համապատասխանող պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների հավաքագրման ժամանակակից մեխանիզմների մշակում և կիրառում, • մրցույթով աշխատանքի ընդունման կարգերի հետագա կատարելագործում՝ հաշվի առնելով ՎՊՀ կրթական ծրագրերի վերջնարդյունքներով պայմանավորված պահանջները: • պրոֆեսորադասախոսական անձնակազմի դրույքային ծանրաբեռնվածության աստիճանական նվազեցում, • պրոֆեսորադասախոսական անձնակազմի գործունեության գնահատման ռեյթինգային համակարգի մշակում և ներդնում • պրոֆեսորադասախոսական անձնակազմի՝ ակադեմիական շարժունության և միջազգային գիտատեխնիկական նախագծերում մասնակցության խթանում: • Պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական վերապատրաստմանն օժանդակող աշխատանքների խթանում, ատեստավորման գործընթացների կատարելագործում • Պրոֆեսորադասախոսական անձնակազմի զարգացման, սերնդափոխության ապահովման, գիտական գործունեությամբ զբաղվելու խթանման ձևերի հետագա զարգացում, ներդնում: 	



VI. ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ԶԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Գիտության և կրթության միջև արդյունավետ կապի իրականացումը համալսարանի գիտական ոլորտի զարգացման պարտադիր պայմաններից է:

Գիտահետազոտական գործունեությունը և վերջինիս անընդհատ զարգացումը ամրագրված է համալսարանի 2014-2018 թթ. Ռազմավարական ծրագրում՝ [«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի զարգացման հայեցակարգ»](#) :

ԶԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:	
Հիմքեր	<p>Հետազոտությունների ռազմավարությունը և ուղղությունները Հաստատության ռազմավարության և հետազոտությունների ուղղությունների միջև կապն արտացոլող փաստաթուղթը (կցել կամ հղում կատարել) Հետազոտական աշխատանքների արդյունքների վավերացման մեխանիզմները «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի զարգացման հայեցակարգ» ՎՊՀ գիտխորհրդի՝ 28/04/2016թ. թիվ 4 նիստի արձանագրություն (Հավելված 6.1.1)</p>
<p>2015 թ. հաստատված է եղել գերակայությունների լայն ցանկ: Սակայն հաշվի առնելով փորձագիտական զեկույցներում առկա այն մտահոգությունը, թե «գիտության ոլորտում սահմանված գերակայությունների այս ցանկը (հայագիտությունը, գիտությունները կյանքի և երկրի մասին, արդյունավետ և անվտանգ էներգետիկան, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները) կարող են հանգեցնել միջոցների փոշիացման և ոչ շոշափելի արդյունքների, գիտխորհուրդը վերանայել է դրանք և առաջնահերթություններ է սահմանել հայագիտությունը և գիտությունները երկրի մասին» (Հավելված 6.1.1):</p> <p>ՎՊՀ-ում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների արդյունքները վավերացվում են համապատասխան հետազոտական զեկույցներում ու հրապարակումներում և ակադեմիական հասարակությանն են ներկայացվում գիտական ժողովածուներում, պարբերականներում և մենագրություններում և այլն: Հրատարակված աշխատանքները (գիտաժողովների նյութերը) տեղադրվում են ՎՊՀ-ի կայքում (http://www.vsu.am/):</p>	
ԶԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:	
Հիմքեր	<p>Միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերը Հետազոտությունների մեթոդաբանությունն ու հրապարակումներին ներկայացվող պահանջները (1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16) ՎՊՀ գիտխորհրդի՝ 22/02/2018թ. թիվ 2 նիստի, 29/03/2018թ. թիվ 3 նիստի, 31/05/2018թ. թիվ 5 նիստի արձանագրություններ (Հավելված 6.2.1) 2016թ. ներհամալսարանական դրամաշնորհ (Հավելված 6.2.2)</p>



	<p>2017թ. ներհամալսարանական դրամաշնորհ (Հավելված 6.2.3)</p> <p>ՎՊՀ-ի գիտաժողովներ (Հավելված 6.2.4)</p> <p>Մասնակցությունը գիտաժողովներին ՀՀ-ում և արտասահմանում (Հավելված 6.2.5)</p> <p>ՎՊՀ ամբիոնների 2015-2016թթ. գիտահետազոտական աշխ. արդյունավետության վերլուծություն (Հավելված 6.2.6)</p> <p>ՎՊՀ ամբիոնների 2016-2017թթ. գիտահետազոտական աշխ. արդյունավետության վերլուծություն (Հավելված 6.2.7)</p> <p>ՎՊՀ ամբիոնների 2017-2018թթ. գիտահետազոտական աշխ. արդյունավետության վերլուծություն (Հավելված 6.2.8)</p> <p>Կարգ «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանում գիտական գործունեության համար ներհամալսարանական դրամաշնորհների տրամադրման»</p> <p>Կանոնակարգ «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտական տեղեկագրի հրատարակման»</p> <p>Կանոնակարգ «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտաժողովների կազմակերպման և անցկացման»</p>
--	---

Եթե մինչ նախորդ հավատարմագրումը ամբիոնները հետազոտական աշխատանքները պլանավորում էին՝ դասախոսների նախասիրություններից ելնելով, ապա 2016 թ.-ից, հաշվի առնելով փորձագիտական զեկույցի դիտողություններն ու առաջարկությունները, բոլոր ամբիոնները հաստատել են երկարաժամկետ և կարճաժամկետ գիտահետազոտական ծրագրեր՝ հստակ ժամանակացույցներով:

Ծրագրերի և կատարողականի վերաբերյալ 2018 թ. փետրվար-մայիս ամիսներին ամբիոնի վարիչները զեկուցումներով հանդես են եկել գիտխորհրդի նիստերում (Հավելված 6.2.1):

Չնայած այս ամենին, բնականաբար, հաշվի է առնվում ՀՀ օրենսդրական այն դրույթը, թե գիտնականը և գիտական աշխատողն իրավունք ունեն իրենց հետաքրքրությունների, ստեղծագործական ունակությունների, ինչպես նաև համամարդկային և ազգային արժեքների համապատասխան ընտրել գիտական և գիտատեխնիկական գործունեության ձևեր, ուղղություններ և միջոցներ:

2015 թ. ընդունվեց ու 2016 թ.-ից ներդրվեց «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» ՊՈԱԿ-ի գիտական գործունեության համար ներհամալսարանական դրամաշնորհի տրամադրման» կարգ: Հայտագրված 9 աշխատանքներից փորձաքննության արդյունքում ընտրվեց 3 աշխատանք, որոնց տրամադրվեց 2,5 միլիոն դրամ (Հավելված 6.2.2):

2017 թ. կարգը վերանայվեց («Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանում գիտական գործունեության համար ներհամալսարանական դրամաշնորհների տրամադրման կարգ»), էապես ավելացվեցին տրամադրվող գումարները, հայտագրված 14 աշխատանքներից փորձաքննության արդյունքում հաստատվեց 10-ը: Հրատարակվեց 9 աշխատանք (Հավելված 6.2.3):

Դրամաշնորհների ամփոփումը և վերլուծությունը ցույց տվեցին, որ կարգի կիրարկումը որոշակի թերություններ ունի՝ կապված մրցույթների անցկացման, գումարների բաշխման,



արդյունքների տպագրման հետ: Ուստի 2018 թ. կարգի կիրառությունը կասեցվեց:

2015-2018 թթ. «Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագրերի» Ա և Բ պրակները ներառված են եղել ԲՈԿ-ի՝ ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում: 2019 թ. նախատեսվում է տեղեկագիրը հրատարակել տարեկան 2 անգամ պարբերականությամբ:

ՎՊՀ-ում կարևորվում է գիտաժողովների անցկացումը, որը հնարավորություն է տալիս շփվելու հայաստանյան և արտասահմանյան գործընկերների հետ: 2015-2018 թթ. ՎՊՀ-ում անցկացվել է 5 միջազգային գիտաժողով, որոնց մասնակցել է 17 երկրից 264 մասնակից (Հավելված 6.2.4)

Թե՛ «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտական տեղեկագրի հրատարակման», թե՛ «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտաժողովների կազմակերպման և անցկացման» (կանոնակարգերում հստակ սահմանված են թե՛ հոդվածներին և թե՛ գրախոսմանը ներկայացվող պահանջները):

ՎՊՀ-ի դասախոսները մասնակցել են նաև Հայաստանում և արտասահմանում անցկացվող գիտաժողովների՝ ակադեմիական հանրությանը ներկայացնելով սեփական հետազոտությունների արդյունքները (Հավելված 6.2.4):

Յուրաքնչյուր տարվա սեպտեմբերին, ամփոփելով ուստարվա արդյունքները, իրականացվում է ամբիոնների գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության վերլուծություն (ԳԱԱՎ): Արդյունավետության գործակիցը որոշվում է հատուկ բանաձևով՝ քանակական ցուցանիշների հիման վրա: Արդյունքում ակնհայտ է դառնում, թե ամբիոններն ինչպես են բարելավում (կամ պահպանում) իրենց ցուցանիշները (Հավելվածներ 6.2.6/ 6.2.7/ 6.2.8) :

ԶՄՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Հիմքեր	<p>Որակյալ հետազոտությունների իրականացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու մեխանիզմները</p> <p>Հետազոտության և զարգացման համար հատկացված բյուջեն՝ արտահայտված տոկոսներով (վերջին 3 տարվա համար)</p> <p>Բյուջեի բաշխման քաղաքականությունը և ընթացակարգերը</p> <p>Երիտասարդ աշխատակազմի հետազոտական գործունեությունը խրախուսելու քաղաքականությունն ու ընթացակարգերը</p> <p>Ակադեմիական ազնվությունը (օբյեկտիվություն) երաշխավորող և գրագողությունը կանխարգելող միջոցների քաղաքականությունն ու ընթացակարգերը</p> <p>«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտական տեղեկագրի հրատարակման» կանոնակարգ</p> <p>«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի աշխատակիցներին գիտական գործուղումներ տալու կարգ»</p> <p>«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանում գիտական գործունեության համար ներհամալսարանական դրամաշնորհի տրամադրման կարգ»</p> <p>«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի աշխատողներին գիտակազմակերպական, ուսումնամեթոդական և մարզամշակութային որոշ</p>
--------	---



[տեսակի աշխատանքների համար դրամական խրախուսման հաշվարկման ու վճարման կարգ»](#)

[«Ակադեմիական ազնվության կարգով»](#)

[«Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարանի էթիկայի կանոնագիրք»](#)

[«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտական տեղեկագրի հրատարակման կարգ»](#)

[«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտաժողովների կազմակերպման և անցկացման կարգ»](#)

[«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի աշխատողներին արտասահմանյան գիտական գործուղումներ տրամադրելու կարգ»](#)

[«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի աշխատողներին գիտակազմակերպական, ուսումնամեթոդական և մարզամշակութային որոշ տեսակի աշխատանքների համար դրամական խրախուսման հաշվարկման ու վճարման կարգ»](#)

Ռեկտորի հրաման թիվ 652 Լ/Կ (Հավելված 6.3.1)

Ռեկտորի հրաման թիվ 852 Լ/Կ (Հավելված 6.3.2)

Գրագոռության պատճառով մերժված աշխատանքներ (Հավելված 6.3.3)

Որակյալ հետազոտությունների համար հնարավորինս ստեղծված են բարենպաստ պայմաններ: Ֆակուլտետներում ամբիոններին կից գործում են հայոց լեզվի և գրականության, փիլիսոփայության և իրավագիտության, աշխարհագրության, հոգեբանության և մանկավարժության, պատմության, դեղագործական քիմիայի կաբինետները, գիտահետազոտական համալիր լաբորատորիան, Ս. Մերգելյանի անվան համակարգչային լսարանը, լինգաֆոնային կաբինետը, որոնք նախատեսված են թե՛ դասախոսների, թե՛ ուսանողների համար:

Չնայած երիտասարդ աշխատակազմի հետազոտական գործունեությունը խրախուսող առանձին կարգեր չկան, սակայն երիտասարդ (մինչև 36 տարեկան) գիտնականներին խրախուսող դրույթներ նախատեսված են տարբեր կանոնակարգերում, ինչպես՝

ա) հոդվածների անվճար տպագրություն («Կանոնակարգ Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտական տեղեկագրի հրատարակման», Հավելված 6.3.1),

բ) ՎՊՀ աշխատակից հայցորդների և ասպիրանտների ուսման վճարների 50% գեղջ (գիտխորհրդի որոշում, արձ. թիվ 7, 24. 09. 2015) (Հավելված 6.3.2),

գ) ՀՀ և արտասահմանյան բուհերում անցկացվող գիտաժողովների մասնակցության դեպքում ճանապարհածախսի տրամադրում («Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցներին գիտական գործուղումներ տալու կարգ»),

դ) ներբուհական դրամաշնորհային ծրագրերում ամբիոնների մագիստրանտների, ասպիրանտների կամ հայցորդների պարտադիր ներգրավման պահանջ («Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանում գիտական գործունեության համար ներհամալսարանական դրամաշնորհի տրամադրման կարգ», արձ. թիվ 2, 25.02.2016, ուժը կորցրած է ճանաչվել վերամշակման նպատակով (արձ. թիվ 7, 29.09.2016):



ե) Վերջին երկու տարում Համալսարանում աշխատող և 36 տարին չլրացած հայցորդի (ասպիրանտի) ատենախոսության պաշտպանություն («Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի աշխատողներին գիտակազմակերպական, ուսումնամեթոդական և մարզամշակութային որոշ տեսակի աշխատանքների համար դրամական խրախուսման հաշվարկման ու վճարման կարգի» աղյուսակ 1-ի 8-րդ կետի դրույթը):

Յուրաքանչյուր նոր կանոնակարգ մշակելիս հաշվի է առնվում երիտասարդ գիտնականների համար արտոնություններ սահմանելու, խրախուսելու դրույթը:

Ակադեմիական ազնվությունը երաշխավորվում է «Ակադեմիական ազնվության կարգով», 2017 թ. ընդունված «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարանի էթիկայի կանոնագրքով», անանուն գրախոսման սկզբունքի կիրառմամբ, ինչպես նաև կարգերում («Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտական տեղեկագրի հրատարակման կարգ», «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտաժողովների կազմակերպման և անցկացման կարգ» ամրագրված այն դրույթով, որ հրատարակության ներկայացված աշխատանքները **պարտադիր** ստուգվում են գրագողությունը հայտնաբերող համակարգչային ծրագրերով (մերժված աշխատանքների ցանկը՝ Հավելված 6.3.3)

- ա) TEXT.RU (ОНЛАЙН-СЕРВИС ПРОВЕРКИ ТЕКСТА НА УНИКАЛЬНОСТЬ) <https://text.ru/antiplagiat>
- բ) BE 1 RU. (Антиплагиат онлайн) <https://be1.ru/antiplagiat-online/>
- գ) CONTENT WATCH (Регулярная проверка на уникальность) <https://content-watch.ru/text/> :

Մենագրություններն ու ուսումնական ձեռնարկները տպագրության են երաշխավորվում համալսարանի գիտխորհրդում, ամբիոններում կամ ֆակուլտետների խորհուրդներում քննարկվելուց հետո: Ըստ անհրաժեշտության՝ հրապարակման ենթակա նյութերը կարող են արտաքին գրախոսման ուղարկվել ՀՀ գիտահետազոտական և ուսումնական հաստատություններ:

Համալսարանում գիտամանկավարժական կադրերի պատրաստման, սահուն սերնդափոխության իրականացման, բարձր որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական անձնակազմի ձևավորման հիմնական ուղին հետբուհական (ասպիրանտական) կրթության իրականացումն է: Ներկայումս Համալսարանն իրավունք ունի գիտական ատենախոսության թեմաներ հաստատելու և այդ թեմաների ղեկավարությունն իրականացնելու հետևյալ մասնագիտությունների գծով.

- Ժ. 02. 01 Հայոց լեզու
- Ժ. 01. 01 Հայ դասական գրականություն
- Ժ. 01. 02 Նորագույն շրջանի հայ գրականություն
- Է. 00. 01 Հայոց պատմություն
- Բ.00.04 ֆիզիկական քիմիա
- ԺԳ. 00.01 Մանկավարժության տեսություն և պատմություն
- Գ. 00. 05 Բուսաբանություն, սնկաբանություն, էկոլոգիա:

Հաշվի առնելով ՀՀ ԿԳՆ-ի կողմից ՎՊՀ-ին տրվող ասպիրանտական տեղերի սակավությունը և Համալսարանի կրթական ծրագրերի իրականացման համար պրոֆեսորադասախոսական կադրերի պարբերաբար առաջացող անհրաժեշտությունը՝ առավել հեռանկարային է համարվել հայցորդության հիմունքներով հետազոտողի պատրաստման կրթական ծրագրի իրականացումը:

Վերջին երեք տարիների ընթացքում հայցորդների թիվը զգալիորեն ավելացել է 2012-15թթ.



համեմատությամբ: 2015-2018 թթ. Համալսարանի տարբեր ամբիոններում ձևակերպվել են թվով 17 հայցորդներ, սակայն տարբեր պատճառներով այսօր իրենց ուսումն և հետազոտությունը շարունակում են 11-ը:

ՎՊՀ-ում ասպիրանտական կրթության զարգացման մեծ խոչընդոտ կարելի է համարել ընդունելության նախապայմանի՝ տեղեկաբանության և հատկապես օտար լեզվի իմացության «TOEFL ibt» («IELTS», «Alliance Francaise», «on DAF») մակարդակների համապատասխանության քննությունների հանձնումը, քանի որ հնարավոր չէ հաճախել Երևանում անցկացվող նախապատրաստական դասընթացներին:

Հետազոտության և զարգացման համար բուհի բյուջեից վերջին 3 տարիներին հատկացվել է համապատասխանաբար՝ 2016թ.-ին 103 մլն. (բյուջեի 13%), 2017թ.-ին՝ 115 մլն. (14%) և 2018թ.-ին՝ 92 մլն. (12%): Թվերը ներառում են պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատավարձի 22,2%-ը, խրախուսման համար հատկացված գումարները, գործուղումների, տպագրության և այլ ծախսեր:

Որակյալ հետազոտություններին նպաստում է ՎՊՀ-ի աշխատակիցների մասնակցությունը տարաբնույթ գիտական միջոցառումներին. համալսարանն օժանդակում է աշխատակիցների մասնակցությանը հանրապետական և միջազգային գիտաժողովներին մասամբ կամ ամբողջությամբ փոխհատուցելով գործուղումների ճանապարհածախսերը («Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի աշխատողներին արտասահմանյան գիտական գործուղումներ տրամադրելու կարգ»):

«Պրոֆեսորադասախոսական աշխատակիցների կողմից գրված մենագրությունների, ուսումնական ձեռնարկների, անհատական ցուցահանդեսների, սպորտային նվաճումների խրախուսման կարգի» փոխարեն մշակվել և 2017 թ.-ից ներդրվել է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի աշխատողներին գիտակազմակերպական, ուսումնամեթոդական և մարզամշակութայինն որոշ տեսակի աշխատանքների համար դրամական խրախուսման հաշվարկման ու վճարման կարգը»: Այն էապես ընդլայնել է խրախուսման ենթակա աշխատանքների շրջանակը: 2017-18թթ խրախուսման համար հատկացվել է 11.843.668 (առձեռն՝ 8.453.038) ՀՀ դրամ: Հետազոտությունների համար նախատեսվող բյուջեն բաշխվում է ամբիոններից ներկայացված հայտերի, աշխատանքային պլաններով նախատեսված միջոցառումների հիման վրա:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Պ. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

<p>Հիմքեր</p>	<p>Միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսումնառողների և դասավանդողների ներգրավվածությունը խրախուսող կանոնակարգերը</p> <p>ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների կարգավորումը</p> <p>Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների կարգավորումը</p> <p>Միջազգային (ԱՊՀ և օտարերկրյա) գրախոսվող ամսագրերում հրապարակումների ցանկը (Հավելված 6.4.1)</p> <p>ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկ (Հավելված 6.4.1)</p> <p>«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի աշխատողներին գիտակազմակերպական, ուսումնամեթոդական և մարզամշակութային որոշ</p>
---------------	--



տեսակի աշխատանքների համար դրամական խրախուսման հաշվարկման ու վճարման կարգը»

Համալսարանում գիտության բնագավառում միջազգային համագործակցությունը կանոնակարգվում է ՀՀ օրենսդրությամբ և իրականացվում է Հայաստանի կողմից հաստատված միջազգային պայմանագրերի, համաձայնագրերի և կոնվենցիաների հիման վրա՝ համաձայն արտասահմանյան երկրների հետ կնքված պայմանագրերի:

Այսօր համալսարանը պայմանագրեր ունի և համագործակցում է 17 կազմակերպությունների հետ: Համալսարանի դասախոսները և ուսանողները մասնակցում են ԱՊՀ և արտասահմանյան բուհերում անցկացվող գիտագործնական գիտաժողովներին:

Համալսարանը չունի օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումները կարգավորող մեխանիզմներ, քանի որ նախ՝ նման կարգավորումը կարող է սահմանափակել գիտնականի ազատությունները և շփումները, և երկրորդ՝ յուրաքանչյուր պարբերական ինքն է սահմանում տպագրության իր չափանիշները: Սակայն դրամական խրախուսումներ են նախատեսվում արտասահմանյան պարբերականներում, միջազգային գիտաժողովների նյութերում, ինչպես նաև **SCOPUS** և **WEB OF SCIENCE** շտեմարաններում ընդգրկված գիտական հանդեսներում հրապարակումների համար: («Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի աշխատողներին գիտակազմակերպական, ուսումնամեթոդական և մարզամշակութային որոշ տեսակի աշխատանքների համար դրամական խրախուսման հաշվարկման ու վճարման կարգի» աղյուսակ 1-ի 1, 2, 5-րդ կետերը):

ՎՊՀ դասախոսների 2015-2019 թթ. հրապարակումների ցանկ ([Հավելված 6.4.1](#)):

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Հետազոտական գործունեությունը ուսումնական գործընթացի հետ փոխկապակցելուն ուղղված քաղաքականությունը, ընթացակարգերը և մեթոդները Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության արդյունավետությունը արտահայտող այլ հիմքեր և վերլուծություններ

Գործընթացի բարելավմանն ուղղված միջոցառումները

Հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացի փոխկապակցումը արտահայտող հիմքեր (գիտական աշխատանքներ ուսանողների մասնակցությամբ, հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր, այլ աշխատանքներ)

Ուսանողների հետ համատեղ հրատարակված գիտական աշխատանքների ցուցակ ([Հավելված 6.5.1](#))

Գիտահետազոտական աշխատանքների ներդրումը ուսուցման գործընթացում ([Հավելված 6.5.2](#))

	%
Ուսումնառողների n° տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	67.8
Դասավանդողների n° տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	91
Գործատուների n° տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	



Հետազոտական գործունեությունը ուսումնական գործընթացին փոխկապակցելն ընթանում է երկու ուղղությամբ: Մի կողմից՝ կարևորվում է ուսանողների կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի առկայությունը: Այսպես՝ 2015-2016 ուստարուց մագիստրոսական կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչին տրվել է 48 կրեդիտ (40 %), որից 18 կրեդիտը ուսանողները ձեռք են բերում ուսումնական տեսական գործընթացին զուգահեռ, իսկ վերջին 30-ը՝ հետազոտական աշխատանքներին ու պրակտիկաներին (տես մագիստրոսական ՄԿԾ-ներ): Մագիստրատուրայի ուսանողների ավարտական աշխատանքների մի մասը, որպես կանոն, առնչվում է ամբիոնների հետազոտության թեմաներին:

Մյուս կողմից՝ դասախոսների հետազոտությունների արդյունքները, առանձին աշխատանքներ և այլն ներառվում են առարկայական ծրագրերում՝ որպես տարբեր դասընթացների բաղադրիչներ:

- + ուսանողների մասնակցությամբ գիտական աշխատանքներ (Հավելված 6.5.1)
- + հիմքեր՝ տարեկան հաշվետվություններից գիտահետազոտական աշխատանքների ներդրման մասին ([Հավելված 6.5.2](#))
- + դրամաշնորհների թեմաները ([Հավելվածներ 6.2.2/ 6.2.3](#))

6-ԲԴ ՉԱՓԱՆԻՇԻ SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>ՎՊՀ-ի ռազմավարական պլանում հետազոտություններին և զարգացմանը վերաբերող նպատակների առկայություն</p> <p>2. ՎՊՀ-ի բոլոր ամբիոններում գիտահետազոտական հիմնական ուղղվածության առկայություն և համապատասխան գիտական և հետազոտական աշխատանքների իրականացում</p> <p>3. «Վանաձորի պետական համալսարանի տեղեկագիր» մասնագիտական պրակների մշտական հրապարակում և ԲՈԿ-ի՝ ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում ընդգրկվածություն (մինչև 2018թ. ներառյալ)</p> <p>4. Համալսարանական, հանրապետական և միջազգային գիտաժողովների կազմակերպում</p> <p>5. Ուսանողների և դասավանդողների ակտիվ մասնակցություն հանրապետական և միջազգային գիտաժողովների</p> <p>6. ՈՒԳԸ-ի ակտիվ գործունեություն</p> <p>7. Միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի առկայություն հետազոտությունների բնագավառում</p> <p>8. Ամբիոնների հետազոտական աշխատանքներում ուսանողների մասնակցություն</p> <p>9. Էլեկտրոնային գրադարանի առկայություն</p>	<p>1. ՎՊՀ-ի կաբինետներից, լաբորատորիաներից, գրադարանից, գիտական և ուսումնական կաբինետներից օգտվելու հնարավորություն</p> <p>2. Հանրապետական և միջազգային գիտաժողովների մասնակցություն</p> <p>3. Այլ կազմակերպությունների լաբորատորիաներում, համայնքապատկան հողերում փորձեր և հետազոտություններ իրականացնելու հնարավորություն</p> <p>4. Ներհամալսարանական դրամաշնորհով գիտահետազոտական նախագիծ կատարելու հնարավորություն (մինչև 2017թ. ներառյալ)</p>



Հնարավորություններ	Վտանգներ
1. Գիտական որոշ հետազոտությունների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի բացակայություն 2. Գիտական թեմաների պետական ֆինանսավորման բացակայություն 3. Գիտահետազոտական կազմակերպությունների հետ թույլ համագործակցություն	1. Գիտահետազոտական պատվերների բացակայություն 2. Երիտասարդ գիտնականների թույլ ներհոսք գիտության բնագավառ 3. Բուհի ֆինանսական միջոցների նվազում
<ul style="list-style-type: none"> • Հետազոտությունների համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ստեղծման համար ձևավորել հատուկ աշխատանքային խումբ, որը կզբաղվի դրամաշնորհային ծրագրերի մշակման և ներդրման, դրամաշնորհային ֆոնդերին հայտադիմումներ ուղարկելու աշխատանքներով՝ արտաքին ֆինանսավորմամբ ծրագրեր իրականացնելու նպատակով: • Համագործակցել բուհի այն շրջանավարտների հետ, որոնք զբաղվում են հետազոտությամբ արտասահմանում՝ նոր ներդրումներ ապահովելու նպատակով: • Ընդլայնել հայաստանյան և արտասահմանյան կազմակերպությունների հետ համագործակցությունը գիտահետազոտական ոլորտում՝ հաշվի առնելով հատկապես ԵՄ առաջավոր փորձը: 	

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացման համար:

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

ՎՊՀ-ի ենթակառուցվածքները և ռեսուրսները վերջին տարիներին որոշակիորեն վերակառուցվել և բարելավվել են՝ չնայած ֆինանսական հոսքերի կրճատմանը: Հիմնականում շեշտադրվել է կառավարման մեխանիզմների ձևափոխման, արդիականացման, գործառույթների հստակեցման և սահմանափակման, ինչպես նաև ընթացող գործընթացների որակի բարձրացման խնդիրը: Բարելավվել է կրթական միջավայրը, կատարվել է ռեսուրսների վերաբաշխում, օգտագործման օպտիմալացում: Սակայն միշտ չէ, որ դրված խնդիրները լիովին իրագործվել են: Կա մարդկային ռեսուրսի խնդիր:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:	
Հիմքեր	Հաստատության մասնաշենքերը և դրանց օգտագործման նպատակները Լաբորատորիաները, ուսումնական կաբինետները, արվեստանոցները, արհեստանոցները և դրանց օգտագործման նպատակները



<p>Գրադարանների, պաշտոնական ինտերնետային կայքերի և գրականության հասանելի այլ աղբյուրների ցանկը Ռեսուրսներով ապահովվածության վերլուծությունը Գործընթացների բարելավմանն ուղղված միջոցառումները և մեխանիզմները ՎՊՀ զարգացման հայեցակարգ 2014-2018թթ. ՎՊՀ մասնաշենքերը և դրանցում տեղակայված ամբիոնները (Հավելված 7.1.1) ՎՊՀ մասնաշենքեր և դրանցում տեղակայված կաբինետներ և լաբորատորիաներ (Հավելված 7.1.2) Տեղեկանք ՏՎՊՀ առկա ուսումնական նպատակների ծառայող համակարգչային տեխնիկայի տեղակայման մասին առ 22.04.2019թ.: (Հավելված 7.1.3) Տեղեկանք ՏՎՊՀ ստորաբաժանումներում առկա թվանիշային տեղեկատվության պահպանման և փոխանակման նպատակներին ծառայող համակարգչային տեխնիկայի տեղակայման մասին առ 22.04.2019թ.: (Հավելված 7.1.4)</p>				
<p>Արդյո՞ք ուսումնառողները բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից: Արդյո՞ք դասավանդողները բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից:</p>	<table border="1"> <tr> <td data-bbox="1380 777 1526 819">%</td> </tr> <tr> <td data-bbox="1380 819 1526 861">64</td> </tr> <tr> <td data-bbox="1380 861 1526 913">56</td> </tr> </table>	%	64	56
%				
64				
56				
<p>ՎՊՀ-ի ռազմավարական զարգացման առաջնահերթություններից է կրթական ծառայությունների որակի բարելավման պահանջների բարձրացումը, միջազգային չափորոշիչներին համապատասխանեցումը:</p> <p>Համալսարանում կրթական կարիքներն ապահովելու և հագեցած կրթական միջավայր ստեղծելու համար առկա են 1 վարչական, 3 ուսումնական մասնաշենքեր, որոնցից մեկը գրանցված է Գր. Լուսավորիչի 47 հասցեում՝ Համալսարանի հիմնական տարածքից դուրս: Այդ մասնաշենքում հիմնականում ուսումնական պարապմունքներն են անցկացնում ՏԿերպարվեստ և զծագրություն, Տերաժշտական կրթություն՝ մասնագիտությունների ուսանողները: Այստեղ գործում է նաև ինքնգործության խմբակը: Ուսումնական (թիվ 1) և ուսումնալաբորատոր (թիվ 2) շենքերի ընդհանուր ներքին մակերեսը կազմում է 7434.34 քմ: Ուսումնական թիվ 1՝ գլխավոր մասնաշենքում են գտնվում հումանիտար մասնագիտությունների երեք ֆակուլտետները՝ բանասիրական, պատմաաշխարհագրական և մանկավարժության: Դասախոսությունները, սեմինար և լաբորատոր պարապմունքները կազմակերպվում են վերանորոգված և ուսումնական ժամանակակից գույքով համարված լսարաններում:</p> <p>Բնագիտական հոսքի ուսումնական գործընթացը անցկացվում է ուսումնական 2-րդ մասնաշենքում, որն էլ հիմնականում ներկայացվում է որպես ուսումնալաբորատոր մասնաշենք: Այս մասնաշենքում տեղակայված են ֆիզմաթ և կենսաբանաքիմիական ֆակուլտետները՝ համապատասխան ամբիոններով (ֆիզիկայի, մաթեմատիկայի, ինֆորմատիկայի ու տնտեսագիտամաթեմատիկական մեթոդների և մոդելավորման, կենսաբանության, քիմիայի, ընդհանուր ֆիզդաստիարակության և արտակարգ իրավիճակների հիմնահարցերի ամբիոնները: (Հավելված 7.1.1)</p> <p>Կենսաբանաքիմիական ֆակուլտետի մասնաշենքում ուսումնական գործընթացի կազմակերպման նպատակով գործում են կահավորված և հնարավորինս արդիականացված</p>				



լաբորատորիաներ: Պարբերաբար կատարվում են լաբորատոր սարքավորումների և սարքերի վերանորոգում և համալրում:

Համալսարանի լաբորատորիաները, կաբինետները, 10-ը լսարաններ հագեցված են համակարգիչներով և SS այլ սարքերով: Ընդհանուր առմամբ կրթական գործընթացի համար օգտագործվում է 176 համակարգիչ, 10-ը տեսապրոյեկտոր, 4 ինտերակտիվ գրատախտակ, 1 մուլտիմեդիա և 10-ը կախովի և տեղաշարժվող էկրան. Առկա է ևս 2 տեսապրոյեկտոր, որոնք ամրագրված են տարբեր կառույցներում, բայց անհրաժեշտության դեպքում օգտագործվում են նաև ուսումնական գործընթացում:

Ներդրված բոլոր մասնագիտությունների ուսանողությունը հավասարապես օգտվում է անհրաժեշտ լաբորատորիաներից և կաբինետներից. խնդիրը կարգավորվում է ուսումնամեթոդական վարչությանը հայտ ներկայացնելու միջոցով: Համահամալսարանական լաբորատորիաների օգտագործման դասացուցակը կազմվում է կիսամյակի դասընթացները սկսվելուց առաջ: Առանձին ՄԿԾ-ներ ունեն մասնագիտական դասընթացները սպասարկող սարքեր և հնարավորություններ (լրագրության կաբինետ):

Կրթական գործընթացի կազմակերպման համար օգտագործվում են նաև գիտական կաբինետի, փոքր դահլիճի հնարավորությունները:

Վերջին երկու տարվա ընթացքում բարելավվել են Ս.Մերգեյանի անվան համակարգչային կենտրոնի (25%), բուսաբանության և աշխարհագրության կաբինետների, թիվ 3 լաբորատորիայի հնարավորությունները, ստեղծվել է թիվ 8 համակարգչային լսարանը, որը ծառայում է «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» մասնագիտության կրթական գործընթացին: Վերազինվել և արդի սարքավորումներով հագեցվել է նաև կենսաբանության թիվ 48 լաբորատորիան, վերջին տարիներին այն հարստացվել է բնապահպանական ոլորտի դասընթացների համար օգտագործվող «Пчелка» համակարգով, որը նախատեսված է նաև դաշտային հետազոտությունների համար:

Համացանցի մատչելիությունը հասու է 24 լաբորատորիաներում և կաբինետներում, ինչպես նաև բոլոր մասնաշենքերի տարբեր ստորաբաժանումներում. օգտագործվում է 30 մեգաբայթ/վայրկյան արագությամբ առանձնացված կապ, առկա է wifi –ի 10 կետ: Չնայած տարեցտարի բարելավվում է կատարվում, սակայն դեռևս այն լիովին չի բավարարում ուսանողների պահանջները (սոցիոլոգիական վերջին՝ 2019 թ. հունվար հարցման ժամանակ խնդիրը ընդգծել է հարցվողների 55.4 %-ը):

Համակարգչային մեկական լսարաններ առկա են նաև վարժարանում և քոլեջում, ի լրումն դրանց՝ համակարգչային դասընթացները կազմակերպվում են նաև Մերգեյանի անվան և թիվ 3, 13, 14 լաբորատորիաներում: Նույն կերպ վարժարանը և քոլեջը կարողանում են իրենց բնագիտական դասընթացների համար օգտագործել ֆիզիկայի, կենսաբանության և քիմիայի լաբորատորիաները:

Շարունակական կրթության բաժինը ևս ունի SS սարքերով հագեցված 2 լսարան (12 համակարգիչ):

Կրթական (ֆորմալ և ոչ ֆորմալ) գործընթացների համար կրթական միջավայրի առաջնահերթությունը քաջ գիտակցելով, հաշվարկելով բյուջեի հնարավորությունները և միջոցներ տրամադրելով, նպատակայնորեն օգտագործելով Եվրամիության՝ MAHATMA, SSRULI, VERITAS, PRINTeL, BOOST դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռքբերած սարքավորումները՝



որոշակիորեն բարելավում կատարվել է: Այլ խնդիր է միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացումը, պրոֆեսորադասախոսական անձնակազմի մոտ պահանջվող ունակությունների և կարողությունների բարելավումը: Այստեղ դեռևս լուրջ անելիքներ կան, ինչը ուշադրության կենտրոնում է. Միայն 2019 թ.-ին համապատասխան դասընթացների են մասնակցել և ձեռքբերում ունեն ավելի քան 60 դասախոսներ:

Հետազոտական աշխատանքի բարելավմանն է ուղղված եղել գիտական կարիների վերազինումը 2017 թ.-ին. Այստեղ առկա են համացանցին միացված 9 համակարգիչներ (վերոնշյալ 176 թվի մեջ հաշվարկված չեն), որոնք օգտագործվում են պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողության կողմից:

Վարչական մասնաշենքում, որի մակերեսը 891.74 քմ է, բացի ռեկտորի, պրոռեկտորների և այլ բաժինների սենյակներից առկա են հանդիսությունների փոքր դահլիճը, Շախմատ առարկայի և ռիթմիկայի կարիները (Հավելված 7.1.2):

Ուսումնական գործընթացի և ազատ ժամերին հանգստի համար նպաստավոր միջավայրի կատարելագործման նպատակով բակային տարածքում կառուցվել է հանգստի գոտի ուսանողների և աշխատակիցների համար: Շենքերի ներսում կահավորվել են դասախոսների հանգստի սենյակներ: Բացի նշված մասնաշենքերից՝ համալսարանը Լոռու մարզի Բագում համայնքում ունի վերանորոգված և վերակառուցված 2 մասնաշենք՝ ընդհանուր 1000.1քմ մակերեսով և հողատարածք: Այստեղ են անցկացվում ուսումնամարզական, կազմակերպվում են համահամալսարանային միջոցառումներ, ամառային ճամբարներ՝ համալսարանի աշխատակիցների երեխաների համար, ինչպես նաև Արցախի Հանրապետության և Վրաստանի հայկական համայնքի դպրոցականներից կազմված խմբերի համար: Մասնաշենքերը ունեն մշտական ջուր, գազաֆիկացված են: Այդ տարածքում նախատեսված մարզադաշտի, լողավազանի կառուցման նախագծերը կատարված են, սակայն ֆինանսական հնարավորությունների սակավության պատճառով աշխատանքների կատարումը հետաձգվում է:

Համալսարանի բյուջեով ամեն տարի գումարներ են հատկացվում մասնաշենքերի, Բագում ուսումնամարզական բազայի ու այլ շինությունների վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար: Ընդլայնվել է արխիվի տարածքը: Արդյունքում՝ ՎՊՀ-ի մասնաշենքերում այսօր առկա են բարվոք պայմաններ, սակայն կահավորման և տեխնիկական հագեցվածության առումներով դեռ անելիքներ կան:

Քանի որ Համալսարանը չունի սեփական մեծ մարզադահլիճ՝ վարձակալած այլ մարզական տարածքներում են ընթանում մարմնակրթության հիմնական դասերը:

Ներկա ժամանակահատվածում Համալսարանի շինությունները գտնվում են լավ վիճակում:

ՎՊՀ-ի ներքին ցանցի ղեկավարումն իրականացվում է առանձին սերվերային ղեկավարող բլոկի միջոցով, որն ապահովում է նաև տեղեկատվության ֆայլերի և թղթապանակների փոխանակումը համալսարանի աշխատակիցների միջև:

Համալսարանի ուսումնական գործընթացը և փաստաթղթաշրջանառությունը ավելի կատարելագործելու նպատակով կազմակերպվել է սերվերային բլոկ (ռեգիստրար), որը էլեկտրոնային ebus համակարգ է: Այն ներդրվել է Եվրամիության Tempus GOVERN դրամաշնորհային ծրագրի և Համալսարանի միջոցներով: Համալսարանն ունեցել է նման համակարգ, որը թույլ է տվել պահպանել ուսանողությանը վերաբերող բոլոր տվյալները սկսած 2006 թ.-ից:



Համացանցի ռեսուրսները մատչելի դարձնելու նպատակով ստեղծված է բաշխիչ սերվերային բլոկ, որը նախատեսվում է այս տարի նորացնել, քանի որ արդեն մաշված է ֆիզիկապես և բարոյապես:

ՎՊՀ հեռավար ուսուցման համակարգի կազմակերպման նպատակով ստեղծված է սերվերային բլոկ՝ համապատասխան կրթական հարթակով Moodle ծրագրի հիմքի վրա:

Տեսադասերի և տեսակոնֆերանսների անցկացման համար կազմակերպված է առաձին սերվերային բլոկ, որը նախատեսվում է այս տարի նորացնել, քանի որ արդեն մաշված է ֆիզիկապես և բարոյապես:

Վերը նշված 5 բլոկները միավորված են սերվերային համակարգի մեջ:

Առայժմ դասախոսների շատ քիչ մասն են օգտվում հեռավար կրթական հարթակի հնարավորություններից, սակայն դրա հետ մեկտեղ՝ անհատ դասախոսներ կիրառում են նաև ամպային տեխնոլոգիաներ:

Որոշակի աշխատանքներ իրականացնելուց հետո կրթական էլեկտրոնային տեխնոլոգիական գործիքները կարող են լիարժեք օգտագործվել ուսուցման գործընթացում (Հավելված 7.1.3/ 7.1.4):

Մասնաշենքերը (բացի Գր. Լուսավորիչի 47 հասցեում գտնվողից) միացված են ներքին ցանցին: Համակարգիչների թվի անընդհատ աճի պայմաններում այսօր սերվերի հզորությունը թույլ է: Համալսարանում առկա է 5 սերվեր, որոնք իրականացնում են ներքին ցանցի ղեկավարում, Համացանցի ծառայությունների տրամադրում, ֆայլ-սերվերի, հեռավար ուսուցման հարթակի և տեսադասերի ծառայություններ:

ՎՊՀ-ի ներքին ցանցը ներառում է 300-ից ավել համակարգիչ, որոնց կապող մալուխային ցանցը ձգվում է 3 կմ: Ունենք wifi կապի տրամադրման 10 երթուղիչ, որոնց միջոցով բուհի տարածքով հնարավորություն է տրվում օգտվել Համացանցի ծառայություններից: Տաս երթուղիչից երկուսը տեղակայված են Գր. Լուսավորիչի 47 հասցեում գտնվող մասնաշենքում:

Գրադարանի զարգացումը ՎՊՀ-ի կարևոր ռազմավարական ուղղություններից է: 2010թ. ՎՊՀ-ի գիտական խորհրդի ընդունած գրադարանի զարգացման հայեցակարգի իրականացման շնորհիվ նկատելիորեն համալրվել է գրադարանի գրականությունը, բարելավվել է սպասարկումը: Բարձրացել է ուսանողների և գիտամանկավարժական կազմի մասնակցությունը տեղեկատվական ռեսուրսների պլանավորման և զարգացման աշխատանքներին: Համալսարանի բյուջեով ամեն տարի գումարներ են հատկացվում գրադարանի գրքային ֆոնդը համալրելու, տեղեկատվական հնարավորությունները մեծացնելու, տեխնիկական և շենքային պայմանները բարելավելու նպատակով:

ՎՊՀ գրադարանի հարկաբաժինն զբաղեցնում է 540 քմ մակերես: Ապահովված է լուսավորության, ջեռուցման և օդափոխության համակարգով: Նրա երեք գրապահոցներում առկա է 134 741 միավոր գիրք, որոնցից 2519՝ հնատիպ: Գրադարանը ունի մեկ ընթերցասրահ, որոնցում առկա է 2386 միավոր գրականություն: Համալսարանի հինգ ֆակուլտետներից երեքում առկա են թվով 5 մասնագիտական կաբինետ-ընթերցասրահներ՝ 3300 միավոր գրականությամբ: Գրադարանի ընթերցասրահը վեց կաբինետ-ընթերցասրահների հետ կարող է միաժամանակ սպասարկել 232 ընթերցողի:

Գրադարանի տարեկան համալրումը կազմում է 2000 միավոր գրականություն:

Գրադարանային ռեսուրսների համալրման և ծառայությունների արդիականացման ուղղությամբ կարևոր ձեռքբերումներից են լոկալ էլեկտրոնային գրադարանը և էլեկտրոնային



քարտադարանը:

Լոկալ էլեկտրոնային գրադարանը գործում է 2015 թ.-ից: Այն ներառում է 53 մասնագիտությունների հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն շուրջ 8000 գրքեր: Դրանց մեծագույն մասը 2010 թ. հետո հրատարակված գրքեր են, որոնք ուսումնագիտական գործընթացում պահանջված են, բայց տարբեր պատճառներով առարկայական գրադարանում չկան:

2017-2018 ուսումնական տարվանից գործում է էլեկտրոնային քարտադարանը:

Էլեկտրոնային քարտադարանի այս ծրագիրն արտացոլում է ողջ գրաֆոնդը, հնարավորություն է տալիս ընթերցողին՝

- հեռահար կերպով ճշտել որոշակի գրքի առկայությունը,
- կարճել գրքի փնտրտուքի ժամանակը,
- առարկայական գիրք պատվիրել համացանցի միջոցով,
- ծանոթանալ մասնագիտական գրականության համալիր ցանկին:

Չնայած կատարված աշխատանքներին՝ դեռևս շատ են նաև անելիքները: Թեպետ փորձի փոխանակման և այլ բնագավառներում գրադարանը համագործակցում է ՀՀ Ազգային գրադարանի, Վանաձորի քաղաքային գրադարանի, ՀՀ-ի բուհական գրադարանների հետ, այնուամենայնիվ նման շփումները կանոնավոր և պարբերական բնույթ չեն կրում:

Գրադարանի արդիականացման, գրացուցակների ու քարտարանների թվայնացման աշխատանքների կազմակերպումն ու իրագործումը իրենց հետ վեր են հանում գրադարանը նոր սարքավորումներով զինելու, ինչպես նաև, աշխատակիցների վերապատրաստելու խնդիրները՝ նոր տեխնոլոգիաներով նրանց աշխատելու կարողություններն ու հմտությունները զարգացնելու նպատակով:

Գրադարանի տնօրինության մշտական ուշադրության տակ է գրքի պահպանման համար համապատասխան պայմանների ապահովումը, աշխատակիցների և ընթերցողների համար աշխատասենյակների և ընթերցասրահի բարելավումը: Այս խնդիրների իրագործման համար անհրաժեշտ է պարբերաբար կատարել վերանորոգման և վերակահավորման աշխատանքներ: Գրաֆոնդի ավելացմանը զուգահեռ առաջիկայում հրամայական խնդիր կդառնա նաև գրապահոցների ընդարձակումը:

Գրադարանում ստեղծված է տերմինալ սերվերային համակարգ 8 հատ տերմինալով՝ ուսանողներին ուսումնական նյութերն ավելի մատչելի դարձնելու համար, իսկ թղթային տարբերակով գրքերի փնտրումը հեշտացնելու համար գրադարանը Համալսարանի կայքում տեղադրվել է էլեկտրոնային քարտարան, որտեղ ուսանողը կարող է փնտրել, գտնել և անմիջապես պատվիրել անհրաժեշտ գիրքն անգամ տնից և գիշերային ժամերին, որը պահանջելու դեպքում գրադարանի աշխատակիցների կողմից շատ արագ կտրամադրվի ուսանողին:

ՉԱՓՈՂՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն և նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Հիմքեր	Բյուջեի բաշխումը՝ ըստ մուտքերի և ծախսերի (Հավելված 7.2.1) Բյուջեի բաշխումը՝ ըստ ՄՈՒՀ-ի առաքելության հիմնական ուղղությունների (դասավանդում և ուսումնառություն, հետազոտություն և զարգացում, ծառայություն հասարակությանը) (Հավելված 7.2.1)
--------	--



	<p>Բյուջեի բաշխումը՝ ըստ ռազմավարական ուղղությունների</p> <p>Ուսումնական գործունեությունից ստացվող մուտքերի բաշխումը՝ պետական ֆինանսավորում, ուսման վճարներ, վերապատրաստումներ և այլն (արտահայտված տոկոսներով)</p> <p>Հետազոտական աշխատանքների, դասավանդման և ուսումնառության, մասնագիտական զարգացման, գրադարանների թարմացման և հարստացման, սարքավորումների, գույքի ձեռքբերման համար նախատեսված հատկացումները (արտահայտված տոկոսներով)</p> <p>Դրամաշնորհային ծրագրերով ստացված ֆինանսների բաշխումը</p> <p>Այլ աղբյուրներից ստացված ֆինանսների բաշխումը</p>
--	--

ՎՊՀ-ում ֆինանսական միջոցները գոյանում են բյուջետային և արտաբյուջետային մուտքերի հաշվին:

ՎՊՀ-ի բյուջետային մուտքերի և ելքերի տարեկան նախահաշիվը կազմվում է նախորդ տարիների փաստացի տվյալների վերլուծությունների հիման վրա և նպատակ է հետապնդում վերահսկողություն իրականացնելու ֆինանսական հոսքերի կառավարման և տնօրինման համար:

2018թ.-ին ՎՊՀ բյուջեի հիմնական եկամտային հոդվածներն ունեն հետևյալ բաշխվածությունը. Ուսման վճարները կազմում են ՎՊՀ բյուջեի մուտքային մասի գերակշիռ զանգվածը՝ շուրջ 73,8%-ը, պետական ֆինանսավորումը՝ 21,9%, այլ եկամուտները՝ 4,3%: Ընդհանրապես ՎՊՀ բյուջեի այլ եկամուտները կուտակվում են շնորհներից, ընդունելության հայտերի համար դիմորդի կողմից մուծվող գումարներ, բուհում գործող Շարունակական կրթության կենտրոնի վարձավճարներից, կրթության որակի բարձրացման դասընթացների վճարներից, ՎՊՀ ուսումնամարզաառողջարանային հանգրվանում կազմակերպվող ամառային ճամբարի վճարներից և վճարովի այլ ծառայություններից (պատճենահանում, դիմորդի վճարներ, բանկոմատի շահագործում և այլն): Պետական ֆինանսավորման կողմից տրամադրվող միջոցների տնօրինման ու ծախսման արդյունավետությունը մշտապես ստուգվում է համապատասխան կառույցների կողմից: Բուհում գործող դրամաշնորհային ծրագրերի միջոցների կիրառման արդյունավետությունը մշտադիտարկվում է համապատասխան կառույցների ու կորրեկցիանոզ կազմակերպությունների կողմից:

Վերջին տարիների ֆինանսական վերլուծությունները վկայում են, որ տարեցտարի ԲՈՒՀ-ի ֆինանսական մուտքերը սկսել են աստիճանաբար նվազել, դա պայմանավորված է նախ և առաջ դիմորդների թվաքանակի պակասով: Սակայն սրան զուգընթաց ավելացել են ծախսերը, ինչը բացատրվում է աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների, ձեռք բերվող ռեսուրսների և ուսումնական միջավայրի շարունակական բարելավման հետ կապված ծախսերի ավելացմամբ:

ՎՊՀ մուտքերը բաժանվում են 3 հիմնական ուղղությունների՝ ուսումնական վճարներ, պետական ֆինանսավորում և այլ մուտքեր (որի մեջ ներառվում է նաև արտաքին դրամաշնորհները): Ուսման վճարներից գոյացած մուտքը 2018թ. կազմել է ամբողջ մուտքերի 73,8 %-ը, պետական բյուջեից հատկացումը կազմել է 21,9 %, այլ մուտքերից՝ 4,3 %:

Աղյուսակ 7-1 ՎՊՀ բյուջեի եկամուտներն ըստ աղբյուրների 2015-2018թթ (հազ. դրամ)

Եկամուտներ	Տարիներ			
	2015	2016	2017	2018



Նախորդ տարվա մնացորդ	44686,9	83206	61154,5	40679,8
Ուսման վճարներ	551283,6	566200,5	555269,4	537570,1
Պետական ֆինանսավորում	162215	183431,5	194975,7	171788,2
Այլ եկամուտներ	34878,5	31711,4	23520,4	33150,1
Հենակետային վարժարան	74789,3	75231,5	78339,2	80024,2
Քուլեջ	14876,9	18170	26465,5	32008
Ընդամենը տարեկան եկամուտ	882730,2	957950,9	939724,7	895220,4

ՎՊՀ եկամուտները մեծապես կախված են ուսման վարձավճարներից, որոնց տեսակարար կշիռն ընդհանուր մուտքերում կազմում է մոտ 74%: Հետևաբար ՎՊՀ-ին եկամուտների բազմազանեցման կարիք ունի: Այդ նպատակի իրականացման համար հիմնադրամում աշխատանքներ են տարվում մատուցված ծառայությունների և իրականացվող ծրագրերի շուկայավարման և առևտրայինացման, ՎՊՀ ուսումնական ստորաբաժանումների սեփական արտաբյուջետային միջոցների ձևավորման, վճարովի ծառայությունների տեսականին ու ծավալներն ընդլայնելու և այդ ծառայությունների եկամտաբերությունը բարձրացնելու, կրթական, հետազոտական և հանրային ծառայությունների ոլորտում հայտարարվող միջազգային դրամաշնորհային ծրագրերին ԲՈՒՀ-ի մասնակցությունն ակտիվացնելու և այլ ուղղություններով:

ՎՊՀ-ի կարևորագույն ռազմավարական նպատակն է որակյալ կրթության ապահովումը, որի իրականացմանն են ուղղվում կուտակվող ֆինանսական միջոցների ավելի քան 2/3-ը:

ՎՊՀ ծախսերը ըստ ուղղությունների բաժանվում է 2 հիմնական խմբերի՝ ուսումնական և ուսումնաօժանդակ ծախսեր և այլ ծախսեր: 2018թ. Ուսումնական և ուսումնաօժանդակ ծախսերը կազմել են 709576.1 հազ. դրամ կամ ծախսերի 82,3%, այլ ծախսերը համապատասխանաբար՝ 152568,1 հազ. դրամ կամ 17,7%:

Աղյուսակ 7-2. Ուսումնական և ուսումնաօժանդակ ծախսերի հարաբերակցությունը տարեկան ընդհանուր ծախսերի համեմատությամբ

Ծախսեր	Տարիներ			
	2015	2016	2017	2018
Ընդհանուր տարեկան ծախսեր	799524,2	896796,4	899044,9	862144,2
Ուսումնական և ուսումնաօժանդակ ծախսեր	654506,8	750249,4	747599,7	709576,1
Ուսումնական և ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհ. Ծավալում (%)	81,7%	83,6%	83,1%	82,3%
Ուսանողի թիվ	2551	2374	2506	2124
Ուսանողին ընկնող տեսակարար ուսումնական և ուսումնաօժանդակ ծախսերի մեծությունը	256,5	316	298	344

Վերջին տարիներին ՎՊՀ բյուջեից ըստ ներքին դրամաշնորհների մասին ընդունված կարգի զգալի գումարներ են տրամադրվում գիտահետազոտական աշխատանքների համար: Գիտության համար հատկացվող գումարներ են համարվում նաև պրոֆետորադասախոսական անձնակազմին վճարվող աշխատավարձի 22,2%-ը: Հանրագումարում՝ 2018թ-ին տվյալ ուղղության համար հատկացվել է բյուջեի մոտ 12%-ը:



ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈԻՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Հիմքեր	<p>Հաստատության կրթական նպատակների իրականացման համար ֆինանսական միջոցները կառավարելու և դրանք նպատակներին համապատասխան բաշխելու մեխանիզմները (Հավելված 7.3.1)</p> <p>Ֆինանսական միջոցներին համապատասխան հաստատության գործունեության պլանավորման, կառավարման և մշտադիտարկման քաղաքականությունը</p> <p>Պետական, մասնավոր և միջազգային կազմակերպություններից ստացվող ֆինանսական և նյութական միջոցների օգտագործման ընթացակարգը</p> <p>Ֆինանսական միջոցների օգտագործման նպատակայնությունը</p>
--------	--



ՎՊՀ հիմնադրամի եկամուտների ու ծախսերի նախահաշիվը կազմվում է քայլերի հետևյալ հաջորդականությամբ.

1. բյուջեի նախագծի մուտքային մասը կազմվում է՝ հիմքում ունենալով ՖՌԿ բաժնի և ուսումնական մասի կողմից հաշվարկված եկամուտները, ելնելով հիմնականում ուսանողների թվի կանխատեսումից,

2. Ծախսային մասի համար հիմք են գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ըստ ընդունված կարգի պահանջվող, մշակվող գեկուցագրերը, ինչպես նաև այլ փաստաթղթեր: Գնումների գործընթացը կազմակերպվում է ըստ ՀՀ-ում գործող համապատասխան օրենքի:

3. ՎՊՀ-ում ֆինանսական ռեսուրսների կառավարումն ու օգտագործումը մշտապես գտնվում է կառավարման խորհրդի, ռեկտորատի և ստորաբաժանումների ղեկավարների ուշադրության կենտրոնում:

Բյուջեի նախագիծը ներկայացվում է ՎՊՀ ֆինանսատնտեսական հանձնաժողովի նիստում և Գիտական խորհրդում: Այնուհետև քննարկման ու հաստատման է դրվում ՎՊՀ հիմնադրամի կառավարման խորհրդում:

2018 թ.-ի սեպտեմբերից սկսած՝ ՖՌԿ-ն ռեկտորին է ներկայացնում բյուջեի նախահաշվի կատարողականը՝ ըստ ամիսների: 2019 թ.-ի ապրիլից եռամսյակի կտրվածքով հաշվետվությունը տեղադրվում է նաև Համալսարանի կայքում: Խնդիրը մեկն է. բոլոր շահառուներին հասանելի դարձնել ֆինանսական հոսքերի ճշմարիտ պատկերը, ըստ ռազմավարական առաջնահերթությունների ֆինանսների օգտագործումը օգտագործումը հնարավորինս թափանցիկ դարձնելը:

Յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում կատարվում է արտաքին աուդիտ՝ ըստ ՀՀ-ում գործող կարգի: Աուդիտի եզրակացությունը ներկայացվում է հոգաբարձուների խորհրդին, տեղադրվում կայքում, տրվում է պահանջվող հայտարարությունը:

2018 թ.-ի ֆինանսական տարվա աուդիտի եզրակացությունը խորհրդի կողմից ընդունվել է վերապահությամբ և նոր աուդիտի անցկացման որոշում է կայացվել (մինչև 2018 թ. մայիսի վերջը): Որոշումը բխում էր ֆինանսական հոսքերի օգտագործման նպատակայնության (ըստ ոլորտների) ամբողջական և խորը ուսումնասիրության, դրանից բխող բացահայտումների հուսալիության պահանջից:

ԶՍՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Հիմքեր	Ռեսուրսների ժամանակին բաշխելու մեխանիզմները, գործընթացները և ընթացակարգերը Ուսուցման գործընթացների որակի ապահովման համար դասավանդողների և ուսումնառողների կարիքների բավարարման մեխանիզմները
--------	--

ՎՊՀ-ում կրթական գործընթացի կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների բաշխումը կատարվում է կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի պահանջի համաձայն: Նախապես բոլոր ստորաբաժանումները ներկայացնում են հայտեր: Գնումների մասին ՀՀ օրենքի պահանջի համաձայն գնումների պատասխանատու



ստարաբաժանման մասնագետը խմբավորում է ըստ ապրանքատեսակների, ապա գնման համար նախատեսված միջոցների առկայության սահմաններում որոշվում են գնման ենթակա ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ծավալները: Գնումը իրականացվում է ըստ օրենքի՝ սահմանված ժամկետներում՝ ապահովելով բոլոր անհրաժեշտ ապրանքատեսակների ձեռքբերումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Հիմքեր	<p>Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման կանոնակարգերը</p> <p>Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման մեխանիզմները և /կամ համակարգը</p> <p>Գործընթացի վերանայման արդյունքները վերջին 5 տարիների համար</p> <p>Գործընթացների բարելավմանն ուղղված միջոցառումները</p>
--------	---

ՎՊՀ-ի համար տեղեկատվության և փաստաշրջանառության բարելավումը կարևոր խնդիր է: Ներկայումս տեղեկատվությունը և փաստաշրջանառությունն իրականացվում են կայք էջով, ներքին ցանցով, վերջինով կարգավորվում է վարչական և ուսումնական ստորաբաժանումների աշխատանքի համակարգումը: Ցանցը հնարավորություն է տալիս ամբողջական տեղեկություններ ստանալ ուսանողների առաջադիմության, ուսումնական պլանների, աշխատանքային պլանների, զեղչերի, կրթաթոշակների, փոխատեղման վերաբերյալ. ցանցում տեղադրված են նաև դասընթացների դասախոսական տեքստերը, ԱՌՄՓ-ները, ամբիոններին բաշխվող ժամաքանակը:

Փաստաթղթաշրջանառությունը կատարվում է գործավարության կարգով և «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի ընդհանուր բաժնի կանոնակարգով: Վերջինս կարգավորում է ստացված թղթակցության ընդունումը, գրանցումն ու շարժը, դիմումների և գրությունների քննարկման ժամկետների պահպանումը, էլից թղթակցության ձևակերպումը, փաստաթղթերի պահպանման կարգը: Գործավարության կարգով հստակեցված են նաև կազմակերպության իրավական ակտերի ձևակերպումը, քաղաքացիների դիմումների, առաջարկությունների և բողոքների քննարկումը և դրանց ընթացք տալու գործընթացը:

Ներքին ցանցը բարելավման կարիք ունի և՛ ծավալի, և՛ որակի, և՛ հզորության առումներով. սերվերի հզորությունն այսօր բավարար չէ:

Վերջին տարիներին մեծացել է թափանցիկությունը՝ առանձին ստորաբաժանումների կողմից տրամադրվող նյութերի միջոցով: Ներկայումս Համալսարանի կայքում տեղադրված են 2018-19 թթ. բոլոր ստորաբաժանումների հաշվետվությունները:

Ուսումնամեթոդական վարչության ներքին ցանցային համակարգի միջոցով իրականացվում է նաև հաստիքների հաշվառումը, դասախոսների բեռնվածքի կազմումը:

2017թ.-ից GOVERN դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարվում են eBus համալսարանի կառավարման համակարգի ներդրման աշխատանքներ (ուսումնական և աշխատանքային պլաններ, դասացուցակ, ուսանողների տվյալներ, առաջադիմության հաշվառում և այլն), ինչը ենթադրում է ողջ ուսումնական գործընթացի կառավարման և կազմակերպման ավտոմատացված համակարգ:

Կայքում տեղադրվում են (ռեկտորի հրամանով վավերացումից հետո) բոլոր կարգերը,



կանոնակարգերը, ընթացակարգերը, ինչպես նաև ՎՊՀ կանոնադրությունը, ռազմավարական պլանըն այլ հիմնարար փաստաթղթեր: Կայքի հնարավորությունները նաև օգտագործվում են թափուր տեղերի մրցույթների հայտարարության համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

<p>Հիմքեր</p>	<p>Առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների ենթակառուցվածքները (Հավելված 7.6.1)</p> <p>Առողջության և անվտանգության (հաշվի առնելով առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսումնառողներին) պահպանմանն ուղղված ծառայությունների քաղաքականությունն ու ընթացակարգերը https://www.vsu.am/ayl-karuycner/arhkom</p> <p>Առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայություններին հատկացված ֆինանսական միջոցների բաշխումը վերջին 5 տարվա համար</p> <p>Առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայություններն ապահովող անձնակազմը և դրա անդամների աշխատանքային նկարագրերը https://www.vsu.am/rektor/tntesakan-varch/bujket</p> <p>Մատուցվող ծառայությունների արդյունավետությունը արտահայտող այլ հիմքեր և վերլուծություններ</p>
---------------	--

Առողջապահական և անվտանգության, սանիտարահիգիենիկ պայմանների ապահովումը ԻՉՀ-ի ռազմավարական ուղղություններից է :

Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների մասնավորապես հենաշարժողական խնդիրներ ունեցողների համար բոլոր մասնաշենքերն ունեն մուտքերում թեքահարթակներ, որոնց միջոցով հնարավոր է մուտք գործել միայն առաջին հարկերը: Վերելակների բացակայությունը չի տալիս հնարավորություն վերահիշյալ ուսանողներին անհրաժեշտության դեպքում բարձրանան 2-րդ և ավելի հարկեր: Սա հիմնականում պայմանավորված է համալսարանի շենքերի՝ խորհրդային տարիներին կառուցված լինելով:

ՎՊՀ-ն ունի բուժկետ, որի միջոցով իրականացնում է կոլեկտիվի անդամներին ցույց տրվող առաջին բուժօգնությունը (աշխատում է 1 բուժքույր): Բոլոր առաջին կուրսեցիներն անցնում են պարտադիր բուժզննում, այն կիրառվում է նաև ողջ աշխատակազմի համար: Յուրաքանչյուր բյուջետային տարի առանձին տողով ֆինանսական միջոցներ են տրամադրվում և՛ բուժկետը առաջին անհրաժեշտության դեղորայքով ապահովելու, և՛ բուժզննումները կազմակերպելու համար: Թեպետ բուժկետը 2017 թ.-ից տեղափոխվել է այլ տարածք, սակայն դեռ բարելավման կարիք կա:

«ՖԴ և ԱԻՀ» ամբիոնի հիմնական խնդիրներից է կոլեկտիվի առողջության և անվտանգության ապահովումը: Ամբիոնի աշխատակիցները վարում են պարապմունքներ, ինչի արդյունքում հանրապետական ուսանողական մրցումների ժամանակ մի շարք մարզաձևերից (սեղանի թենիս, աթլետիկա և կրոսավազք, ձեռքի գնդակ, ֆուտզալ, վոլեյբոլ մարզաձևերից) գրավում են մրցանակային տեղեր:



Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար «ԸՖ և ԱԻՀ» ամբիոնին հատկացվում է բուժական խմբերի համար ժամաքանակ, յուրաքանչյուր տարի ձևավորվում են 5-7 խմբեր:

Բակալավրի կրթական ծրագրերի ուսումնական պլաններում պարտադիր է «Քաղաքաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» դասընթացը, իսկ կամընտրական են «Բժշկագիտություն և առողջության պահպանում», «Արտակարգ իրավիճակներում առաջին բուժօգնություն» դասընթացները (վերջին երկուսից մեկն անպայմանորեն ուսումնասիրվում է): Համապատասխան ամբիոնի կողմից յուրաքանչյուր տարի ուսանողների համար կազմակերպում են դասախոսություններ, լրացուցիչ պարապմունքներ:

ՎՊՀ-ն իր ունեցած շենքային պայմանների պատճառով դեռևս չի կարողանում հիմնարար քայլեր ձեռնարկել աշխատակիցների առողջության պահպանման համար, սակայն օգտագործում է ունեցած հնարավորությունները:

Արտակարգ իրավիճակների Լոռու մարզի հատուկ ջոկատի հետ համատեղ ՎՊՀ-ի քաղաքաշտպանության շտաբը տարեկան 2 անգամ՝ ուսանողների, դասախոսների և համալսարանի մնացած աշխատակիցների մասնակցությամբ անցկացնում են ուսուցողական միջոցառումներ թե՛ փրկարարական տարբեր տիպի տարհանումների, թե՛ հրդեհի և արտակարգ վիճակի տագնապների դեպքերի հաշվառմամբ:

Քաղաքաշտպանության շտաբի կառուցվածքային հիմնական կազմում պարբերաբար կատարվում են թարմացումներ՝ մասնավորապես ջոկատների կազմերում ակտիվ ուսանողների ներգրավման նպատակով:

2018 թ.-ի դեկտեմբերին Սպիտակի երկրաշարժի 30-ամյա տարելիցի միջոցառումների հանրապետական ցանկում ընդգրկված էր նաև ՎՊՀ-ն: Արտակարգ իրավիճակների նախարարության Լոռու մարզի տարածքային շտաբի հետ կազմակերպվեց աշխատակիցների և ուսանողների, վիրավորների տարհանում երկու մասնաշենքերից, հրդեհի մարում, առաջին բուժօգնության ցուցաբերում: Նշված գործողությունները ցույց տվեցին մեր կարողությունները, շեշտադրվեց նաև բուհական շտաբի վերականգնման խնդիրը, ինչը կարճ ժամանակում կատարվեց:

ՎՊՀ աշխատակիցների սոցիալական քաղաքականությանն ուղղված աշխատանքները մշտապես գտնվել են ռեկտորատի և արհեստակցական կազմակերպության ուշադրության կենտրոնում՝ կարևորելով աշխատակիցների հանգստի, առողջության պահպանման և սոցիալական այլ խնդիրների լուծմանն ուղղված խմբագրերի իրականացմանը:

Մասնավորապես, 2016-2018թթ. ընթացքում ձեռք են բերվել առողջարանային ուղեգրեր, որից օգտվել են Համալսարանի աշխատակիցները:

Առողջարանային ուղեգրերի ձեռքբերման համար փոխանցվել է ընդհանուր 2.430.000 (երկու միլիոն չորս հարյուր երեսուն հազար) դրամ:

Ուշադրության կենտրոնում են նաև աշխատակիցների երեխաների հանգստի և առողջության խնդիրները: Այդ նպատակով հունիս-հուլիս ամիսներին «Բազում» հանգրվանում կազմակերպվում է ճամբար:

Առողջության, հատկապես ճիշտ սնվելու համար շատ կարևոր է սննդի կետի առկայությունը: 2018 թ.-ից այս խնդիրը լուծվել է. Համալսարանի տարածքում բացվել է ճաշարան, որի ծառայությունից ուսանողության հիմնական մասը գոհ է, թեպետ կան նաև պայմանները, սննդակարգը ավելի բարելավելու առանձին առաջարկություններ, ինչպես փաստում են



անցկացված հարցումները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Հիմքեր	Կրթական գործընթացների կարգավորմանն ուղղված ծրագրերը Կրթական գործընթացների իրականացման արդյունքների վերլուծությունը (նշելով արդյունավետությունը) Գործընթացի նպատակների իրականացումն ու ձեռքբերումների գնահատման գործիքները
--------	---

Ուսանողներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատումը կատարվում է հիմնականում տարբեր սոցիոլոգիական հարցումների միջոցով. մասնավորապես «ՎՊՀ-ի կրթության որակի գնահատման» սոցիոլոգիական հարցման հարցաթերթերի 62 հարցերից 18-ում գնահատվել են վերոնշյալ հարցերը: Ստացված պատասխանների մեջ ամենացածրը (53%) 26-րդ հարցի գնահատականն է (ըստ մասնագիտացումների անհրաժեշտ կաբինետների հագեցվածություն), 18-ը (գրադարանի հագեցվածությունն անհրաժեշտ գրականությամբ), ամենաբարձրը՝ 67 (22. Համակարգչային կենտրոնի որակական ներմուծված ծրագրեր):

Գնահատում ուսանողների կողմից կատարվել է նաև «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցիալական թերթիկների «Առաջարկություններ» բաժնում:

Դասավանդողների շրջանում գնահատում չի կատարվել. նման գնահատում նախատեսվում է նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

7-ԸՂ ՉԱՓԱՆԻՇԻ SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Համալսարանի տարածքի, շենքերի, շինությունների շարունակական բարեկարգում, լսարանային պայմանների բարելավում, 2. Ուսումնական և գիտահետազոտական լաբորատորիաների սարքավորումների գույքի հարստացում, SS տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունների ընդլայնում, 3. Ենթակառուցվածքների վերակառուցման գործընթացի առկայություն, 4. Համալսարանի գրադարանի արդիականացում, 5. Բյուջեի նպատակային օգտագործում՝ Համալսարանի ռազմավարական առաջնահերթ խնդիրների լուծման համար: 6. Գնումների գործընթացի կազմակերպում ՀՀ-ում գործող օրենքի սահմաններում՝ համաձայն Համալսարանի ստորաբաժանումների կողմից	1. Սահմանափակ ֆինանսական հնարավորություններ 2. Սահմանափակ հնարավորությունների պատճառով պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ, վարչական, վարչատնտեսական անձնակազմի անդամների ցածր աշխատավարձ, 3. Լսարանների, լաբորատորիաների, այլ ուսումնական ենթակառուցվածքների արդիականացման դեռևս ոչ բավարար մակարդակ, 4. Ներառական (հենաշարժողական խնդիրներ ունեցող) անձանց կրթության կազմակերպման սահմանափակ հնարավորություններ,



<p>ներկայացված հայտերի: 7. Համալսարանի ուսանողության և աշխատակիցների առողջության պահպանման, սննդի կազմակերպման, սոցիալական այլ խնդիրների լուծմանն ողղված ֆինանսական միջոցների ավելացում:</p>	<p>5. Սոցիալական ուղղվածության ծախսերի ոչ բավարար մակարդակ:</p>
Հնարավորություններ	Վտանգներ
<p>1. Ֆինանսական մուտքերի ավելացում այլ աղբյուրների ներգրավման հաշվին (գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերի իրականացում, վճարովի ծառայությունների տրամադրման ընդլայնում, հիմնադրամի հնարավորությունների շրջանակներում թույլատրելի առևտրային գործունեության իրականացում), 2. ՖՌԿ ռազմավարության գործուն մեխանիզմի մշակում և ներդրում, 4 Համալսարանի ֆինանսական գործունեության ամենամյա անկախ վերլուծության իրականացում:</p>	<p>1. Ժողովրդագրական ներկա իրավիճակի պատճառով ուսանողների թվի նվազման արդյունքում ֆինանսական մուտքերի նվազում, 2. Սահմանափակ բյուջեի պատճառով ռազմավարական որոշ խնդիրների լուծման դանդաղում: 3. Սերնդափոխության դանդաղում:</p>
<ul style="list-style-type: none"> • Մշակել և ներդնել ՖՌԿ բաժնի ռազմավարությունը, վերանայել աշխատակիցների գործառնությունները՝ Համալսարանի ռազմավարության կարևորագույն խնդիրների իրականացման տեսակետից • Վերանայել ֆինանսական մուտքերի քաղաքականությունը • Նպաստել ֆոնդիայթայթման մեխանիզմների ներդրմանը • Հզորացնել և ժամանակակից պահանջներին համապատասխան զարգացնել կրթական և գիտատեխնիկական աշխատանքների համար նախատեսված նյութատեխնիկական բազան: 	

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Ը

ԶՍՓՍՆԻՇ: *ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:*

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի՝ հասարակական պատասխանատվության ոլորտում իրականացվող գիտակրթական քաղաքականության հիմքում ընկած են Համալսարանի կրթական, գիտական և այլ գործընթացների վերաբերյալ հանրությանը հնարավորինս սպառիչ և համակողմանի տեղեկատվության տրամադրումը, թափանցիկության ապահովումը, ինչպես նաև հասարակության հետ կապի միջոցով հանրային նոր կրթական պահանջների արձանագրումը՝ միտված կրթական գործընթացներն առավել նպատակային դարձնելուն: Հասարակական պատասխանատվության աստիճանական բարձրացումը Համալսարանին հնարավորություն է տալիս ձեռքբազատվել գործունեության ներփակ և ինքնաբավ վիճակից, ինչպես նաև նպաստում



Է ժամանակակից հարավփոփոխ աշխարհին ու մարտահրավերներին համահունչ նոր լուծումների, նոր ուղիների որոնմանը, միջազգային կրթական նոր իրականության մեջ սեփական տեղի և դերի ճշգրտմանն ու ամրագրմանը: Հետևաբար միանգամայն օրինաչափ է համալսարանի կրթագիտական քաղաքականության գլխավոր նպատակը՝ դառնալ ՀՀ բուհական համակարգի առաջատարներից մեկը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

Շահակիցների առջև հաշվետվողականությունն ապահովող քաղաքականությունը, քննադատարարները և մեխանիզմները

Հասարակությանը տրամադրվող ծառայությունների ռազմավարական նպատակները և քաղաքականությունը (օր.՝ մասնագիտական զարգացման/վերապատրաստման դասընթացներ, խորհրդատվական ծառայություններ, օժանդակում հանրակրթական հաստատություններին, միջավայրի բարելավմանը միտված գործունեություններ և այլն)

Հասարակությանը տրամադրվող ծառայությունների իրականացման հիմնավորումները

Հասարակության զարգացմանը միտված ՄՈՒՀ-ի իրականացրած այլ աշխատանքները

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի» զարգացման հայեցակարգ 2014-2018

ՎՊՀ հաշվետվողականության գործընթացը կանոնակարգվում է «բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով, իսկ իրականացվող գործընթացների թափանցիկության և հասանելիության մեխանիզմներն ամրագրված են ներբուհական մի շարք իրավական փաստաթղթերում (ՎՊՀ կանոնադրություն V, 2, 5, ինչպես նաև մի շարք այլ նորմատիվ փաստաթղթերում:

Համալսարանում գործում է հաշվետվողականության աստիճանակարգային (ներքևից՝ վերև, վերևից՝ ներքև) սկզբունքը, որն իր արտացոլումն է գտել բոլոր ստորաբաժանումների համար մշակված կանոնադրություններում ու կանոնակարգերում:

Սահմանված կարգի համաձայն՝ հիմնադրամի տնօրենը (ռեկտորը) յուրաքանչյուր օրացուցային տարվա վերջում հաշվետվություն է ներկայացնում կառավարման բարձրագույն մարմնին՝ ՎՊՀ հոգաբարձուների խորհրդին: Հաշվետվությունը կազմվում է Համալսարանի գործունեության բոլոր ոլորտները ներկայացնող կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների առանձին տարեկան հաշվետվությունների հիման վրա՝ ապահովելով ամփոփիչ հաշվետվության լիակատարությունը, համակողմանիությունը և համընդգրկունությունը: Հաշվետվությունը ներառում է հետևյալ ոլորտները՝ ներքին իրավական դաշտ, տարբեր կառուցվածքային փոփոխություններ, կրթական գործընթաց, ուսանողական համակազմ, առաջադիմություն, պետական որակավորում, պրոֆեսորադասախոսական կազմ, բարեփոխումներ և կրթության որակի ապահովում, գիտահետազոտական աշխատանքներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, արտաքին քաղաքականություն, իրազեկման աշխատանքներ, սոցիալ-մշակութային և դաստիարակչական գործունեություն:



Հաշվետվությունը ներառում է ոչ միայն առանձին ստորաբաժանումների և ընդհանուր բուհական գործունեության արդյունքների, այլև չիրականացված աշխատանքների, դրանց պատճառների վերլուծություն և առաջիկա անելիքների ներկայացում:

Հոգաբարձուների խորհրդի՝ ռեկտորի տարեկան գործունեության հաշվետվությունը քննարկող նիստից 10 օր առաջ հաշվետվությունը ամբողջությամբ (գրքի տեսքով) և խտասալիկով ներկայացվում է խորհրդի անդամներին, զեկուցումից հետո տեղադրվում է Համալսարանի պաշտոնական կայքէջում:

Հոգաբարձուների խորհրդի այդ նիստում ներկայացվում են նաև նախորդ ֆինանսական տարվա բյուջեի կատարման վերլուծությունը և նոր ֆինանսական տարվա նախագծի հաստատումը:

Այնուհետև ռեկտորը հաշվետվությունը ներկայացնում է նաև աշխատակազմի ընդհանուր ժողովին, որին հրավիրվում են Համալսարանի բոլոր ստորաբաժանումները և ուսանողությունը:

Բուհի ներքին հաշվետվողականությունը կատարվում է ժամանակային երկու կտրվածքով. ստորաբաժանումների (ոչ ուսումնագիտական) ղեկավարները ներկայացնում են օրացուցային տարվա վերջում, ուսումնագիտական ստորաբաժանումները և դասախոսները՝ ուսումնական տարվա վերջում. ֆակուլտետների ղեկանները ներկայացնում են ուստարվա վերջում և օրացուցային տարվա վերջում: Ուսումնագիտական և վարչատնտեսական ստորաբաժանումների հաշվետվությունները տրվում են ըստ Համալսարանի կառուցվածքի: Սակայն վերջինների համար հստակ ժամանակացույց և մեխանիզմ մշակված չէ:

Գիտական խորհրդին և ֆակուլտետների ուսումնամեթոդական խորհուրդներին ամենամյա հաշվետվություններ են ներկայացնում ղեկանները: Ամբիոնների վարիչները գիտական խորհրդին հաշվետվություն են ներկայացնում՝ համաձայն գիտական խորհրդի նիստերի աշխատանքային պլանի: Արտալսարանական աշխատանքների հաշվետվությունները ներկայացվում են տեսանյութերով:

Դեկանները և ամբիոնների վարիչները հաշվետվությունները ներկայացնում են ըստ մշակված փաթեթի: Վերջիններս տեղեկատվական են (փաստական), ինչպես նաև վերլուծական: Դեկանների հաշվետվությունները ներկայացվում են ֆակուլտետի կոլեկտիվի տարեվերջյան հաշվետու ընդլայնված նիստի ընթացքում:

Համալսարանի հոգաբարձուների խորհրդում ընդգրկված են պետական լիազոր մարմնի, կառավարության, մարզային կրթական կառույցների ներկայացուցիչներ և ուսանողներ. այս իրողությունն ապահովում է ն՝ ներքին, և՛ արտաքին հաշվետվողականություն:

Պետության և հասարակության առջև ներկայացվում են սահմանված կարգով պահանջվող բոլոր հաշվետվությունները (ուսանողի առաջադիմության ձև 1, պետական քննությունների և ավարտական որակավորման աշխատանքների (բակալավրիատի համար) և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների, ձև 3-ԳՄ, ուսանողների շարժ): Դրանք ներկայացվում են ՀՀ ԿԳ նախարարություն, վիճակագրական վարչություն: Պահպանված է նաև պետեկամուտների կոմիտեին ներկայացվող հաշվետվությունների կարգը:

ՉՍՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:



Հիմքեր	ՄՈՒՀ-ի հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմները Հաշվետվությունները, զեկույցները, վերլուծությունները վերջին 5 տարվա ընթացքում https://www.vsu.am/vph/iravakan-pastatxter/hashvetvutyunner
--------	---

Հաշվետվողականության ապահովման կարևորագույն գործիք է մնում, ինչպես վերը նշվեց, Համալսարանի պաշտոնական կայքէջը. ամենօրյա ռեժիմով ներկայացվում են ուսումնական, գիտական, այլ նորությունները: Կայքում ներկայացվում են տվյալ ուսումնական տարվա ընդունելության (առկա և հեռակա ուսուցման համակարգ) կրթական ծրագրերը, ընդունելության տեղերը, վճարի չափը, շնորհվող որակավորումները, ընդունելության քննությունները:

Համալսարանի պաշտոնական կայքէջի համապատասխան բաժիններում ներկայացված են Համալսարանի ուսումնական, գիտական, ինչպես նաև ֆինանսական գործունեությանը վերաբերող՝ վերջին տարիների հաշվետվությունները, ինքնավերլուծությունները, զեկույցները:

Կայքում տեղադրված են գիտական հրատարակությունների («Բանբեր», ապա՝ գիտական հոդվածների ժողովածու-տարեգրքեր, միջազգային և հանրապետական գիտաժողովների նյութերի ժողովածուներ) 35-ից ավելի ժողովածուները: Այժմ աշխատանքներ են տարվում այդ գիտական հրատարակություններում զետեղված նյութերի ոչ միայն ընդհանուր, այլև անհատական (հեղինակային) արագ հասանելիության խնդրի լուծման ուղղությամբ. 2019 թ. մայիսի սկզբին կայքի ընթերցողը կկարողանա գտնել առանձին հեղինակի որոնելի գիտական նյութը՝ անհատական պատուհանով: Կայքում նաև տարբեր տիպի տեղեկատվություն է տրամադրվում Համալսարանի գիտական ներուժի, գիտնականների ուսումնասիրությունների վերաբերյալ:

Հաշվետվողականության ապահովման կարևորագույն գործիք է մնում, ինչպես արդեն նշվեց, բուհի պաշտոնական կայքէջը. ամենօրյա ռեժիմով ներկայացվում են ուսումնական, գիտական, այլ նորությունները: Կայքում ներկայացվում են տվյալ ուսումնական տարվա ընդունելության (առկա և հեռակա ուսուցման համակարգ) կրթական ծրագրերը, ընդունելության տեղերը, վճարի չափը, շնորհվող որակավորումները, ընդունելության քննությունները:

2015 թվականին ներկայացված համանման ինքնավերլուծության մեջ ներկայացված էին ՎՊՀ հասարակական պատասխանատվության բարելավմանն ուղղված քայլերը: Դրանք էին՝ ա) լրատվության և տպագրության բաժինն անհրաժեշտ կադրերով և անհրաժեշտ դրույքաչափերով համալրում, բ) գովազդի վերաբերյալ առանձին կարգի և ընթացակարգի մշակում և ներդրում, գ) համալսարանի կայքէջի գործունեության կարգի և ընթացակարգի մշակում և ներդրում, դ) ՋԼՄ-ների հետ համագործակցության վերաբերյալ առանձին կարգի մշակում, ե) պաշտոնական կայքէջի այլալեզու տարբերակների գործարկում: Նշված 5 քայլերից 3-ն այսօրվա դրությամբ իրագործված է՝ ա), գ), ե), որի արդյունքում նկատելիորեն բարձրացել է կայքէջի աշխատանքի արդյունավետությունը. վերջինս ավելի և ավելի հասակորեն է արտացոլում ներբուհական իրողություններն ու նպաստում համալսարանի հաշվետվողականության բարձրացմանը: (Նկատենք, որ 2018 թվականի ամբողջ ընթացքում ՎՊՀ պաշտոնական կայքէջը մի շարք ցուցանիշներով դասվել է հայաստանյան բուհերի լավագույն կայքէջերի շարքում):

Ներքին և արտաքին շահակիցներին տեղեկատվություն է տրամադրվում «Վանաձորի



պետական համալսարան» երկշաբաթաթերթի, տեղական «Ֆորտունա» հեռուստաալիքի, «Լոռու մարզ» մարզային թերթի և, բնականաբար, պաշտոնական կայքէջի միջոցով:

Համացանցի պաշտոնական կայքէջում տեղադրվում են համալսարանի մշակութային, գիտագործնական գործունեությունը լուսաբանող նյութեր (<https://www.vsu.am/news-am>):

Պաշտոնական կայքէջում տեղադրված են գործող կանոնադրությունները, կանոնակարգերը, մասնագիտության տեղեկագրքերը:

Գովազդի, ինչպես նաև տեղեկատվության նպատակով ստեղծվել են մի շարք հոլովակներ, գովազդային գրքուկներ (նաև օտարալեզու), սակայն այս ուղղությամբ աշխատանքները դեռևս բավարար չեն: Անընդհատ և արագ զարգացող հաղորդակցական հնարավորությունների ընդլայնմամբ պայմանավորված՝ պարբերական վերակառուցման կարիք ունի համացանցային էջը: Այս նպատակով 2018 թվականի մայիս ամսին գործարկվել է կայքէջի արդիական՝ ցանցահեններին կողմից խոցելիության առումով առավել ապահովված նոր կայք: 2019 թ. ապրիլ ամսին կայքի պաշտպանվածության մակարդակը բարձրացնելու նպատակով ձեռք է բերվել սերտիֆիկացված համապատասխան ծրագրային փաթեթ:

Համացանցային ռեսուրսների անընդհատ զարգացումը լուրջ խթան է ՎՊՀ գործունեության և ընթացակարգերի թափանցիկության ու հասանելիության ապահովման համար:

Առանձին ուշադրություն է դարձվում համացանցային սոցիալական կայքերի օգտագործմանը Համալսարանի նպատակների համար: Մասնավորապես ակտիվ գործում են Facebook-յան մի քանի խմբեր: Համալսարանի բոլոր ֆակուլտետները, մասնագիտություններն ունեն իրենց FB խմբերը, դրանց օգտատերերի թիվը գերազանցում է սահմանված առավելագույնը՝ 5000-ը:

Համալսարանն ունի ֆեյսբուքյան 2 նույնանուն էջ՝ «Վանաձորի պետական համալսարան». առաջինը գրանցված է որպես անհատ օգտատեր, երկրորդը՝ կազմակերպություն: Առաջին էջի ընկերների թիվը թույլատրված առավելագույնն է՝ 5000, այն անընդհատ թարմացվում է պակաս ակտիվ ընկերներին նորերով փոխարինելու հաշվին: Երկրորդ էջն ունի 4759 ակտիվ հետևորդ: Ֆեյսբուքյան էջերի միջոցով տարածվում են vsu.am պաշտոնական կայքում զետեղված բոլոր նորություններն ու հայտարարությունները՝ հնարավորություն տալով նաև մեկնաբանել դրանք: Հաշվետու ժամանակաշրջանում ֆեյսբուքյան էջերով ապահովվել է նաև նամակագրություն շուրջ 1500 օգտատիրոջ հետ. պատասխաններ են տրվել հետաքրքրող հարցերին: Ֆեյսբուքում տեղադրված ՎՊՀ կայքի նորություններից առավելագույն դիտումների թիվը 12.310 է, իսկ ընդունելության քննությունների հայտարարության դիտումների թիվն անցել է 20.000-ից: Ֆեյսբուքը համացանցային զանազան ծրագրերի միջոցով հնարավորություն է տալիս արձանագրել տարածվող հայտարարությունների ոչ միայն դիտումների թիվը, այլև ստանալ խիստ կարևոր տեղեկություններ այցելուների բնակության վայրի (Հայաստանում և նրա սահմաններից դուրս), սեռի, տարիքի վերաբերյալ: Դա բացառիկ հնարավորություն է՝ մոտավոր արձանագրելու համապատասխան տարիքի անձանց՝ բուհում կրթություն ստանալու հավանականության աստիճանը:

Բնականաբար, այս ամենի արդյունքում ապահովվում է Համալսարանի գործունեության թափանցիկությունը: Համացանցային ռեսուրսը Համալսարանի գործունեության



թափանցիկության ապահովմանն ի սպաս դնելու կարևորագույն գործիք է ֆեյսբուքի միջոցով բուհական կյանքի կարևորագույն իրադարձությունների ուղիղ եթերով հեռարձակումը, որի պրակտիկան գնալով ավելի է արմատավորվում բուհում: Մասնավորապես, 2019 թվականի հունվարի 26-ին «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստը, որի ընթացքում ընտրվեց խորհրդի նոր նախագահ, ինչպես նաև ներկայացվեցին Համալսարանի գործունեության հաշվետվությունը (նաև՝ ֆինանսական), սկզբից մինչև վերջ հասու էր ֆեյսբուքյան օգտատերերին բոլոր մանրամասներով: Այնուամենայնիվ նկատենք, որ ֆեյսբուքն իբրև տեղեկատվության փոխանցման ամենամեծ սոցիալական հարթակ և հասարակական պատասխանատվության ժամանակակից արդյունավետ գործիք անհրաժեշտ ծավալներով չի օգտագործվում (մասնավորապես այս գործիքը նպատակամետորեն չի կիրառվում համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և վարչական աշխատակիցների կողմից, թեև ՀՀ ԿԳ նախարարությունը, անձամբ նախարարը բոլորովին հակառակ օրինակներ են տալիս):

Համալսարանն իր համացանցային տիրույթն ունի նաև Twitter-ում <https://twitter.com/vsu2015>, ինչպես նաև Youtube-ում <https://www.youtube.com/user/VanPetManInst?feature=mhee> որտեղ տեղեկատվությունը նաև տեսանյութերի եղանակով է հասանելի դառնում օգտատերերին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Հիմքեր	<p>Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի հաստատման քաղաքականությունը և ընթացակարգերը</p> <p>Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի գործիքները</p> <p>Ամփոփված արդյունքները և վերլուծությունները</p>
--------	--

Բարելավման կարիք ունի բուհ-հասարակություն կապը՝ հատկապես վերջինիս ակնկալիքների բավարարման առումով: Շահառուները, տվյալ դեպքում՝ հասարակությունը, կարիք ունի ոչ միայն գովազդային կամ տեղեկատվական, այլ նաև (առավելապես) վերլուծական նյութերի, որոնք կփաստեին, որ բուհը գնում է ինքնակատարելագործման ճանապարհով՝ չերկնչելով այդ ճանապարհին եղած թերություններն ու բացթողումները մատնանշելուց: Այս առումով հասարակության ակնկալիքներն ուսումնասիրելու լուրջ անհրաժեշտություն կա, որին, սակայն, խանգարում է նախաձեռնողականության և հատկապես համապատասխան մասնագետների բացակայությունը:

Որոշակի բացթողում է նաև համալսարանում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարը համակարգող հանձնաժողովի, ըստ առանձին ուղղությունների («Գիտելիքների գնահատում, ուսումնական գործընթացի վերահսկում, փոխատեղում և տեղափոխություններ», «Քարոզչական և նախագուշակական աշխատանքների իրականացում, տեղեկացվածության մակարդակիչ բարձրացում», «Ուսանողական հարցումներ», «Ներքին իրավական ակտեր», «Անձնակազմի կառավարում և գնումների գործընթաց» և այլ) հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի և դրա կատարողականի վերաբերյալ գիտական խորհրդում անհրաժեշտ քննարկումների սակավությունը:



Բուհի ուսումնագիտական գործունեության լուսաբանման թերի կողմերից է քննադատական նյութերի անհամեմատ փոքր թիվը. գերակշռում են տեղեկատվական նյութերը, որոնք թեև ներկայացնում են բուհի ներքին (ուսանողական, գիտական, մարզական, մշակութային) կյանքի նաև թերի կողմերը, այնուամենայնիվ ինքնաբավության որոշակի միտում ունեն, ինչը մտահոգիչ է: Սակավ են Համալսարանի տարբեր ստորաբաժանումներից ստացվող ինքնավերլուծական, ինքնաքննադատական նյութերը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

Հիմքեր	<p>Հաստատության կողմից լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման քաղաքականությունն ու ընթացակարգերը</p> <p>Հասարակությանը մատուցվող լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների ներքին և արտաքին գնահատման գործիքները</p> <p>Հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման հիմնական գործառնությունների ներքին գնահատման գործընթացները և հիմքերը</p>
--------	---

Համալսարանն առաջնորդվում է իր գործունեության վերաբերյալ հանրությանը մշտապես իրազեկ և տեղեկացված պահելու քաղաքականությամբ, ինչի արդյունքում պարբերաբար իրականացվում է լրատվամիջոցների, մասնավորապես մարզային հեռուստաընկերությունների հետ նպատակասլաց համագործակցության քաղաքականություն: Համալսարանը համագործակցում է Հ1, «Երկիր», «Շողակաթ» հանրապետական և «Ֆորտունա» մարզային հեռուստաընկերությունների հետ: Համալսարանի ղեկավար կազմը մասնակցում է հեռուստատեսային կլոր սեղանների, բանավեճ-քննարկումների, մամլո ասուլիսների:

Ընդունելության օրեր և ժամեր են սահմանված ռեկտորի, պրոռեկտորների, դեկանների համար, սակայն արձանագրման, հերթագրման ընթացակարգ մշակված չէ:

Տեղեկատվության տրամադրման և հասարակության հետ կապի միջոց է նաև քաղաքացիների դիմումների ընդունումը և դրանց արձագանքումը: Դիմումներն ընդունվում են ընդհանուր բաժնում և դրվում շրջանառության մեջ:

Այնուամենայնիվ, պետք է արձանագրել, որ ՎՊՀ-ում հասարակության հետ կապերի ձևավորման, հետադարձ կապի ապահովման մեխանիզմները դեռևս բավարար չափով ձևավորված և կատարելագործված չեն:

8-րդ չափանիշի SWOT վերլուծություն	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>1. Հասարակությանը, արտաքին և ներքին շահակիցներին ներկայացվող հաշվետվողականության բարձր որակ:</p> <p>2. Ավելի դինամիկ դարձող համացանցային կայքի առկայություն:</p> <p>3. Համացանցային կայքի եռալեզվություն:</p> <p>4. Facebook սոցիալական ցանցի</p>	<p>1. Լրատվության և տպագրության բաժինը համապատասխան կադրերով լիարժեքորեն ապահովելու ճանապարհին խոչընդոտների առկայություն (կես դրույքով աշխատող կայքավար, թերթի պատասխանատու քարտուղար և այլք):</p> <p>2. Հաշվետվողականության</p>



<p>արդյունավետ օգտագործում՝ Համալսարանի գովազդի, Համալսարանի վերաբերյալ գանազան իրազեկումների և այլ առումներով:</p> <p>5. Բարձր որակավորմամբ կադրերով կայքի աշխատակազմի համալրում (ռուսերեն և անգլերեն լեզուների թարգմանիչներ):</p>	<p>համակարգի գործիքների ոչ լիարժեքություն:</p> <p>3. Հետադարձ կապի հստակ մեխանիզմների բացակայություն:</p>
Արտաքին հնարավորություններ	Սպառնալիքներ
<p>1. Հետադարձ կապի ապահովման համար սոցիալական ցանցերի օգտագործման հետագա ընդլայնում և խորացում:</p> <p>2. Համալսարանի կայքի օտարալեզու հատվածի (ռուսերեն, անգլերեն) որակի բարձրացում:</p> <p>3. Համալսարանի գովազդի ընդլայնում, գովազդային նյութերի, միջոցների և ձևերի արդիականացում:</p>	<p>1. Համալսարանին վերաբերող բացասական տեղեկություններին ոչ արագ և տեղին արձագանքի պատճառով Համալսարանի դրական պատկերի խաթարում:</p> <p>2. Ինքնաքննադատական նյութերի պակասի պատճառով Համալսարանի նկատմամբ հետաքրքրության նվազում:</p>
<ul style="list-style-type: none"> • Կանոնակարգել տեղեկատվության հաշվետվողականության մեխանիզմները • Ընդլայնել և խորացնել հետադարձ կապի ապահովման համար սոցիալական ցանցերի օգտագործման հնարավորությունները: • Կատարելագործել հասարակությանը տեղեկատվության փոխանցման մեխանիզմներ: 	

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: *Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը*

ՎՊՀ-ի միջազգայնացման ռազմավարությունը բխում է Համալսարանի առաքելությունից և կանխորոշվում է հետևյալ գերակա ուղղություններով.

- Ակտիվ մասնակցություն՝ համաեվրոպական ընդհանուր կրթական տարածք ներգրավվելու նպատակով,
- ՎՊՀ միջազգային հարաբերությունների ընդլայնում և բազմազանեցում,
- Եվրոպական բուհերի և կրթության և գիտության բնագավառում այլ միջազգային հաստատությունների հետ համագործակցության խթանում,
- ՎՊՀ-ի միջազգային գործունեության տեղեկատվության տարածում,
- Դրամաշնորհային (գրանտային) նախագծերի որոնում և մշակում, տեղեկատվության տրամադրման նպատակով խորհրդատվական ծառայությունների բարելավում,
- Միջառարկայական գիտակարգերի շրջանակում մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ծրագրերի, ինչպես նաև համատեղ/կրկնակի կրթական ծրագրերի մշակում և ներդրում,



- Հրավիրվող աշխատակազմի և ուսանողների կարճաժամկետ և երկարաժամկետ կեցության նպատակով բարենպաստ պայմանների ստեղծում,
- Ուսումնամեթոդական բաժինների, ամբիոնների, ֆակուլտետների և անհատական փորձագետների ակտիվ ներգրավվածություն գիտական և կրթական նախագծերին և դրամաշնորհներին (կրկնակի/ համատեղ դիպլոմ, աշխատակազմի և ուսանողների շարժունություն):

<p>ԶԱՓՈՐՈՇԻՉ ա. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:</p>	
Հիմքեր	<p>Արտաքին կապերի և միջազգայնացման ռազմավարությունը (Հավելված 9.1.1, 9.1.2),</p> <p>Արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները (Հավելված 9.1.1, 9.1.2),</p> <p>Արտաքին կապերի և միջազգայնացման տարեկան գործողությունների ծրագրերը (վերջին 3 տարվա համար) (Հավելված 9.1.3),</p> <p>Արտաքին կապերի և միջազգայնացման տարեկան հաշվետվությունները (վերջին 3 տարվա համար) (Հավելված 9.1.4):</p>
<p>ՎՊՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացը համակարգում է Համագործակցության և կապերի բաժինը, որը գործում է 2013 թ-ից: Բաժնի հիմնադրման և դրամաշնորհներին դիմելու նպատակաուղղված աշխատանքների շնորհիվ 2013-14 թթ բուհին հաջողվեց ներգրավվել Տեմպուս ծրագրի հինգ և Էրազմուս Մունդուս ծրագրի շարժունության չորս նախագծերին, որոնք մեծապես նպաստեցին բուհի կառուցվածքային փոփոխություններին, աշխատակազմի կարողությունների, միջմշակութային հմտությունների կատարելագործմանը և միջազգային կապերի ամրապնդմանը: Տեմպուս ծրագրի GOVERN նախագծի ներդրումը նպաստել է բուհական կառավարման գործընթացի բարելավմանը, ստեղծվել է մարդկային ռեսուրսների կառավարման բաժին, մշակվել են պաշտոնի նկարագրեր, կատարելագործվել է ուսանողակենտրոն ուսուցման համակարգը: LeAGUe և SSRILLI նախագծերի շնորհիվ հիմնադրվել է շարունակական (հարատև) կրթության կենտրոնը, որն ապահովում է բուհի ոչ ֆորմալ կրթության և հեռավար ուսուցման գործընթացը: MAHATMA նախագծի շնորհիվ ԵՍ և Արևելյան գործընկեր բուհերի հետ համատեղ մշակվել և ներդրվել է «Կրթության կառավարում» մագիստրոսական կրթական ծրագիրը, որը բավականին մեծ հետաքրքրություն է վայելում բուհի շահակիցների շրջանում: VERITAS նախագիծը մեծապես նպաստել է զայլբերգյան սկզբունքներին համապատասխան ասպիրանտական կրթական համակարգի ներդրմանը: ՎՊՀ-ի միջազգայնացման գործընթացին մեծապես նպաստեց 2016 թ-ին մեկնարկած BOOST /Հայաստանյան համալսարանների միջազգայնացման ռազմավարության և մարքետինգի խթանում/ նախագիծը, որի շնորհիվ Համագործակցության և կապերի բաժնի և բուհի այլ աշխատակիցներ անցան վերապատրաստումներ ինստիտուցիոնալ միջազգայնացման</p>	



ռազմավարական պլանի, բուհական մարքեթինգային ռազմավարության մշակման վերաբերյալ հետազայում տարածելով իրենց փորձը Հայաստանի այլ բուհերում: Հայաստանյան բուհերին հնարավորություն տրվեց ծանոթանալու սկանդինավյան, իսպանական, նախկին ՍՄՀՄ-ի բուհական համակարգից եվրոպական համակարգի անցած բուհերի միջազգայնացման գործընթացներին, ինչն առավել լայն հարթակ ստեղծեց բենչմարքինգի համար: Այդ վերապատրաստումները նպաստեցին այն հանգամանքին, որ բուհի ռազմավարական քայլերն առավել ընդգրկուն բնույթ ստանան: Ձևավորվեց ամբիոնների միջազգային գործունեության համար պատասխանատու մարմին, որը բուհի միջազգայնացմանը նպաստող միջնորդ օղակ է բուհի ամբիոնների և Համագործակցության և կապերի բաժնի միջև: Ամբիոնների միջազգային գործունեության պատասխանատուների հետ բաժինը անցկացրել է հաճախակի հանդիպումներ, որի արդյունքում առավել կարևորվել է բուհերի բոլոր ստորաբաժանումների միջազգայնացման գործընթացին ներգրավումը, քննարկվել են միջազգայնացմանը նպաստող կարևոր գործընթացները, կատարվել է բուհի միջազգայնացման վերաբերյալ SWOT վերլուծություն, քննարկվել են Բուսթ նախագծի կողմից մշակված միջազգայնացման ցուցիչները և այլ խնդիրներ: Ամբիոնների միջազգայնացման պատասխանատուների մեծ մասը տիրապետում է օտար լեզուների և շատերն արդեն ներգրավված են բուհի շարժունության և կարողությունների ձևավորման նախագծերում: Պատասխանատուների հետ հանդիպումները շարունակական բնույթի են, սակայն ամբիոնների պատասխանատուների գործունեությունն առավել խթանելու նպատակով՝ բուհը կնախաձեռնի առավել խրախուսող քայլեր:

Բուհի ստորաբաժանումների ղեկավարների և ամբիոնների միջազգայնացման պատասխանատուների հետ անցկացված SWOT վերլուծության հիման վրա այժմ մշակման փուլում է ՎՊՀ-ի միջազգայնացման ռազմավարությունը, որը պետք է հետազայում փորձագիտական քննություն անցնի BOOST նախագծի կոնստրցիումի անդամների կողմից:

Նույն նախագծի շրջանակներում ՎՊՀ-ի թիմը պատասխանատու է մշակելու կրթական ծրագրի ազգային մոդել և կրեդիտների փոխանցման և փոխձանաչման ուղեցույց, որը կտեղադրվի նախարարության կողմից կառավարվող հարթակում: Այս ուղեցույցը կօգնի հայաստանյան բուհերին իրենց կայք-էջերում տեղադրելու կրթական ծրագրերի մասին անհրաժեշտ տեղեկատվություն, ինչը կնպաստի օտարերկրա ուսանողների ներգրավմանը: Ուղեցույցը դեռևս մշակման փուլում է և շուտով կներկայացվի նախագծի անդամների փորձագիտական քննությանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Բ. ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

Հիմքեր	<p>Արտաքին կապերի և միջազգայնացման համար պատասխանատու ենթակառուցվածքը և դրա գործառույթները (Հավելված 9.2.1), Ենթակառուցվածքի գործունեությունը կարգավորող ընթացակարգերը , Ենթակառուցվածքի որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը, Ենթակառուցվածքի արդյունավետ գործունեության այլ հիմքեր և վերլուծություններ վերջին 3 տարիների կտրվածքով:</p>
--------	--



ՎՊՀ-ի Համագործակցության և կապերի բաժնի գործունեությունը ունի երկու ուղղություն՝ միջազգային և ներպետական համագործակցություն և բուհ-դպրոց կապերի ամրապնդում: Բաժնի աշխատակիցներն են բաժնի վարիչը, միջազգային համագործակցության աշխատանքները խթանող ավագ մասնագետը և բուհ-դպրոց կապի մասնագետը: Բաժնին անմիջականորեն ենթարկվում է գիտական աշխատանքների գծով պրոռեկտորին:

Բաժնի գործառույթները բավականին ավելացել են Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ձևաչափի փոփոխման և միջազգայնացման գործընթացով պայմանավորված առավել մեծ մարտահրավերների պատճառով:

Միջազգային համագործակցության բնագավառում բաժինը կատարում է հետևյալ գործառույթները.

- Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության շրջանակներում գործընկեր բուհերի հետ կապի ապահովում, հայտադիմումների ընդունելության մեկնարկի համար հայտարարությունների հրապարակում, դիմորդների ընտրության գործընթացի կազմակերպում, ուսանողների ուսումնառության համաձայնագրերի կազմման աջակցություն, տեղեկատվական հանդիպումների կազմակերպում (անհատական կամ խմբային), վիզայի, կեցության, հայտադիմումների լրացման գործընթացի աջակցություն, ուսանողների վերադարձից հետո հետադարձ կապի նպատակով հանդիպումների կազմակերպում, դասավանդող կամ վերապատրաստվող աշխատակազմին տեղեկատվության տրամադրում, շարժունության աշխատանքային պլանների կազմման և այլ գործընթացների աջակցություն:
- Գործընկեր բուհերի ներկայացուցիչների հետ պաշտոնական հանդիպումների, կոնֆերանսների (նաև առցանց) կազմակերպում, ամբիոնների միջազգային գործունեության աջակցություն, ամբիոնների միջազգային պատասխանատուների հետ տեղեկատվական և բուհի միջազգայնացման ռազմավարական պլանի իրականացման նպատակով հանդիպումների կազմակերպում:
- Ֆանդերեյզինգի նպատակով նոր դրամաշնորհների որոնում և հայտադիմումների լրացում, ամբիոնի դասախոսների հետ համագործակցություն և աջակցություն հայտադիմումների ճիշտ լրացման գործում:
- Բուհի գործընկեր բուհերի հետ համագործակցության խթանում, հյուրընկալվող աշխատակիցների ընդունելություն, տեղեկատվական հանդիպումների, կլոր սեղանների կազմակերպում:

Հարկ է նշել, որ բաժնի աշխատակիցների գերձանրաբեռնվածության պատճառով հետագայում նախատեսվում է շարժունության որոշ պարտականություններ, մասնավորապես՝ ուսումնառության համաձայնագրերի կազմումը, կրթական ծրագրերի համատեղելիությունը, հանձնել համապատասխան ամբիոնների պատասխանատվությանը, որի համար ամբիոններին կտրամադրվի անհրաժեշտ տեղեկատվություն նշված գործընթացը ճիշտ իրականացնելու համար:



BOOST նախագծին անդամակցելու շնորհիվ բուհը համալրել է բաժինը արդի սարքավորումներով՝ նման սարքավորումների ձեռքբերման արդյունքում մեծանում են բաժնի հնարավորությունները և ավելանում են գործառույթները: Նախատեսվում է ստեղծել ծառայութենամետ կենտրոն, որը կարող է նպաստել բուհի միջազգայնացման գործընթացին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

Արտաքին կապերի և միջազգայնացմանը վերաբերող բոլոր համաձայնագրերը Հիմքեր [\(Հավելված 9.3.1\)](#),

Արտաքին կապերը և միջազգայնացումը արտացոլող այլ հիմքերը:

Վերջին տարիներին բուհը բավականին ընդլայնել է իր համագործակցության շրջանակները՝ պայմանագրեր կնքելով ԵՄ, ՌԴ, և այլ արտասահմանյան բուհերի հետ:

Բուհի միջազգային գործունեությունը կարելի է բնութագրել մի քանի ուղղություններով.

- Էրազմուս+ կարողությունների զարգացման նախագծեր
- Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունություն (գործող պայմանագրեր ԵՄ 7 բուհերի հետ)
- Համագործակցություն այլ միջազգային դրամաշնորհային կազմակերպությունների հետ (DAAD, UGRAD, IREX, Գյոթեի ինստիտուտ և այլն)
- Գիտահետազոտական պայմանագրեր ԵՄ, ԱՊՀ երկրների և Չինաստանի բուհերի հետ (17 պայմանագրեր)

Հաշվի առնելով ՎՊՀ-ի մասնակցությունը Tempus ծրագրի նախկին 5 նախագծերին (MAHATMA, SSRULLI, LeAGUe, GOVERN, VERITAS), հարկ է նշել, որ բուհն ունեցել է մեծ առաջընթաց բարձրագույն կրթության բնագավառում կարողությունների ձևավորման տեսանկյունից: Այդ նախագծերը մասնավորապես նպաստել են շարունակական, ասպիրատական կրթության, բուհական կառավարման զարգացման և «Կրթության կառավարում» նոր կրթական ծրագրի ներդրման գործում:

Էրազմուս+ կարողությունների զարգացման BOOST և PRINTeL նախագծերը կարևոր ռազմավարական նշանակություն ունեն բուհի միջազգայնացման համար: Այս նախագծերում ընդգրկվելու շնորհիվ բուհը նախաձեռնեց մի շարք գործընթացներ՝ ուղղված միջազգայնացմանը, դասավանդման նորարարական մեթոդների կիրառմանը և գործարկմանը: Այս նախագծերի շնորհիվ բավականին սերտացել է համագործակցությունը ոչ միայն ԵՄ բուհերի, այլ նաև ՀՀ Կրթության և գիտության նախարարության, հայկական համալսարանների ու կազմակերպությունների հետ, որոնք նպաստում են երկրի ներսում բարձրագույն կրթության բնագավառում կառուցողական փոփոխություններ մտցնելու գործընթացին, միջազգայնացման, դասավանդման և ուսումնառության մեթոդների ներդրմանը:

2017 թ-ից բուհն անդամակցում է Էրազմուս+ ծրագրի մեկ այլ կարևոր դրամաշնորհի՝ PRINTeL նախագծին. **«Փոփոխություն լսարանում. նորարարական դասավանդման և ուսումնառության օժանդակում՝ Արևելյան գործընկերության երկրներում ուսանողի**



ուսումնական փորձառության բարելավման նպատակով»:

Նախագիծը նպատակաուղղված է բարձրագույն կրթության հիմնական մարտահրավերներից մեկի լուծմանը, այն է՝ դասավանդման և ուսումնառության մեթոդների զարգացմանը և նորարարությանը, ինչպես նաև դասավանդման գործընթացում նորագույն տեխնոլոգիաների ներդրմանը: Նախագծի նպատակն է գործընկեր բուհերի դասախոսական կազմի կարողությունների բարձրացումը՝ զարգացնելով նրանց դասավանդման նորարարական հմտությունները: Նախագծի շրջանակներում պետք է նաև հիմնադրվի դասավանդման և ուսումնառության վիրտուալ ակադեմիա՝ որպես դասախոսների և ուսանողների կարողությունների զարգացման վիրտուալ հարթակ:

Նախագծի 7 աշխատանքային փաթեթներում ներառված են եվրոպական լավագույն փորձի ուսումնասիրություն, տարածքային բուհերում կարիքների վերլուծություն, վերապատրաստումների պլանի կազմում, դասախոսական կազմի կարողությունների զարգացում, էլեկտրոնային ուսուցման և դասավանդման ենթակառուցվածքի ստեղծում, նորարարական դասավանդման համար ուսումնական պլանների ստեղծում և նոր մեթոդների կիրառություն, ուսանողներից հետադարձ կապի ստացում, VATL պորտալի համար գործառնությունների սահմանումը և հայեցակարգային մոդելի ձևավորում, նոր սարքավորումների ձեռքբերում, ուսուցման համար ձեռնարկների հրատարակում, VATL ֆորումի և համագործակցային ցանցի ստեղծում, որակի ապահովում և տարածում:

Եվրոպական համալսարանների մասնագետների կողմից կազմակերպված դասընթացներին մասնակցել են մեր բուհի երիտասարդ 6 դասախոսներ, որոնք կարողացան շատ բարձր մակարդակով իրականացնել փորձի փոխանակումը ՎՊՀ-ում ավելի քան 60 դասախոսների շրջանում: Վերոնշյալ համալսարանների հետ համատեղ աշխատանքները շարունակական են, և առաջիկայում պետք է ստեղծվի վիրտուալ ակադեմիա՝ VATL (Virtual Academy of T&L):

Ոչ պակաս կարևոր է բուհի համար ուսանողների և աշխատակիցների շարժունությունը: Այս գործընթացը սկսվել է 2013 թ-ից Էրազմուս Մոնդուս 4 նախագծերին անդամակցելու շնորհիվ, որը հետագայում վերածվելով երկկողմանի շարժունության՝ պահանջում է առավել բարդ և պատասխանատու մոտեցում հայաստանյան բուհերի կողմից: Այժմ բուհն ունի ԵՄ 7 բուհերի հետ համագործակցության պայմանագրեր: 2013 թ-ից սկսած բուհն ունեցել է թվով 77 արտագնա ուսանողներ: Վարչական և դասախոսական աշխատակազմի 31 ներկայացուցիչներ վերապատրաստվել են և դասավանդել ԵՄ բուհերում:

Ստորև բերված տրամագիրն արտահայտում է ներգնա և արտագնա ուսանողների և աշխատակիցների շարժունությունն ըստ տարիների:

Աղյուսակ 1. Ուսանողների և աշխատակազմի շարժունություն

	ուսանողների շարժունություն	աշխատակիցների շարժունություն
2013-14 ուստարի	12	0



2014-15 ուստարի	15	2
2015-16 ուստարի	14	9
2016-17 ուստարի	17	6
2017-18 ուստարի	10	15
2018-19 ուստարի	10	13

Այն փաստը, որ վերջին տարիներին ներգնա և արտագնա աշխատակիցների քանակը գերազանցում է ուսանողների քանակին, բացատրվում է նրանով, որ բուհի համար հատկապես այս շրջանում կարևոր է աշխատակիցների հմտությունների բարելավումը, դասավանդման մեթոդների կատարելագործումը, շարժունության և օտարալեզու դասընթացների մշակման և կազմակերպման համար անհրաժեշտ հմտությունների ձեռքբերումը, ինչի շնորհիվ բուհը հնարավորություն կունենա ընդլայնելու իր միջազգային գործունեությունը:

Վերջին տարիներին մեծացել է արտագնա դասավանդող աշխատակազմի քանակը (տե՛ս Տրամագիր 2), ինչը կարելի է որպես դրական քայլ արձանագրել: Դասավանդման նպատակով ԵՄ բուհերում իրենց դասընթացներն են առաջարկել ոչ միայն օտար լեզուների ամբիոնի դասախոսները, այլ նաև փիլիսոփայության, պատմության ամբիոնների դասախոսները, որոնք միաժամանակ այցելում են անգլերենի վերապատրաստման դասընթաց և մշակել են կարճ մասնագիտական դասընթացներ անգլերեն լեզվով:

Աղյուսակ 2. Արտագնա աշխատակազմի անդամներ

	Դասավանդող աշխատակազմ	Վերապատրաստվող աշխատակազմ
2014-15 ուստարի	0	1
2015-16 ուստարի	3	3
2016-17 ուստարի	0	3
2017-18 ուստարի	2	5
2018-19 ուստարի	5	9

Վերջին երկու տարում աճել է նաև ներգնա դասավանդողների քանակը (տե՛ս Տրամագիր 3), ինչը վկայում է արտասահմանյան բուհերի կողմից ՎՊՀ-ի հանդեպ ունեցած հետաքրքրության և վստահության մասին:

Տրամագիր 3. Ներգնա աշխատակազմի անդամներ

	Դասավանդող աշխատակազմ	Վերապատրաստվող աշխատակազմ
2013-14 ուստարի	0	1
2014-15 ուստարի	1	1
2015-16 ուստարի	0	2
2016-17 ուստարի	0	1
2017-18 ուստարի	4	3



2018-19 ուստարի	6	5
-----------------	---	---

Ցավոք բուհում դեռևս ցածր է ներգնա շարժունության ուսանողների քանակը, ինչը պայմանավորված է մի շարք սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառներով: Բուհն այդ ուղղությամբ լուրջ քայլեր է ձեռնարկում՝ կատարելագործելու բուհի աշխատակիցների անգլերենի իմացությունը, ընդլայնելու օտար լեզվով դասավանդվող առարկաների ցանկը, համալրելու կայքի տեղեկատվությունը, ընդլայնելու մարքեթինգային գործունեությունը և այլն:

Ստորև բերված տրամագրում ներկայացված են այն երկրները, որտեղ արտագնա ուսանողներին տրվել է ուսումնառության հնարավորություն (տե՛ս Տրամագիր 4):

Աղյասակ 4. Արտագնա ուսանողների և աշխատակազմի շարժունությունն ըստ երկրների

Երկիր	Արտագնա ուսանողների և աշխատակազմի շարժունություն
Լեհաստան	32
Ռումինիա	23
Պորտուգալիա	22
Շվեդիա	10
Իսպանիա	11
Բուլղարիա	5
Էստոնիա	2
Գերմանիա	2
Հոլանդիա	1
Ֆրանսիա	1
ԱՄՆ	1

Տրամագիրը վկայում է, որ առավել արդյունավետ է համագործակցությունը լեհական, ռումինական, պորտուգալական, շվեդական բուհերի հետ: Այս փաստը կարելի է բացատրել հանգամանքով, որ առավել արդյունավետ և երկարատև է այդ երկրների բուհերի հետ եղած համագործակցությունը, առավել ճկուն է կրթական համակարգը, և որ նշված երկրների գործընկեր բուհերն առաջարկում են անգլերենով դասավանդվող բավականին մեծ քանակով դասընթացներ:

Պոզնանի Ադամ Միցկևիչի համալսարանի (Լեհաստան) հետ տևական և վստահելի համագործակցության շնորհիվ վերջին երկու տարիներին բուհին հնարավորություն ընձեռնվեց կազմակերպելու երկկողմ աստիճանաշնորհման ծրագիր լեհական բուհի դասական բանասիրության ֆակուլտետի հետ: Ծրագրի շրջանակներում բուհի 8 ուսանողներ մեկ տարի ուսումնառեցին հյուրընկալող համալսարանում և անգլիական բանասիրական առարկաներից բացի ուսումնասիրեցին նաև զբոսաշրջություն, առասպելաբանություն: Լեհաստանում զբոսաշրջության բնագավառում ձեռք բերած մասնագիտացման շնորհիվ այժմ այդ ծրագրի երկու շրջանավարտներ աշխատում են ՄԱԿ-ի գրասենյակի կողմից հիմնադրված զբոսաշրջիկների տեղեկատվական կենտրոնում, իսկ նրանցից մեկը՝ նաև ՎՊՀ-ում՝ որպես



օտար լեզուների ամբիոնի դասախոս:

Բաժինը համագործակցում է նաև Գերմանական ակադեմիական փոխանակման գործակալության (DAAD) հետ՝ գերմաներեն ուսումնասիրող ուսանողների համար սեմինարների կազմակերպման նպատակով: Վերջին տարիներին այդ կազմակերպության համագործակցությունը Լոռվա մարզի հետ առավել ակտիվացել է: ՎՊՀ-ի «Անգլերեն լեզու և գրականություն» բաժնի երեք ուսանողուհու տրվել է դրամաշնորհ՝ Գերմանիայում մասնակցելու գերմաներենի ամառային դասընթացին: UGRAD նախագծի կողմից բուհի մեկ ուսանողուհու տրամադրվել է կրթաթոշակ մեկ կիսամյակ ուսումնառություն ստանալու Այովա նահանգի Ուեսլեյի համալսարանում:

Ակտիվացել է համագործակցությունը Գյոթեի Ինստիտուտի հետ (գերմաներենի դասախոսների վերապատրաստում): 2018 թ-ի հուլիս ամսին օտար լեզուների ամբիոնի գերմաներենի մեկ դասախոսի հնարավորություն է ընձեռնվել մասնագիտական վերապատրաստում անցնելու Գերմանիայի Շվեբիշ Հալլ քաղաքում:

Վերջին տարիներին ավելացել է բուհի հետ գիտահետազոտական նպատակով համագործակցող բուհերի քանակը: ՎՊՀ-ն համագործակցում է ԵՄ, ԱՊՀ երկրների, Չինաստանի և ՀՀ 17 բուհերի հետ:

Հարկ է նշել, որ 2010 թ-ից բուհն անդամակցում է Միջազգային միջմշակութային լաբորատորիային, որի կոնսորցիումի կազմում են Գերմանիայի Դարմշտադտի կիրառական գիտությունների ավետարանչական, Ֆեխտայի համալսարանները, Ցիտաու-Գյորլիցի ինստիտուտը, Մինսկի պետական լեզվաբանական և Բալառուսի պետական համալսարանները (Բելառուս), Մագադանի Հյուսիսարևելյան և Կուրսկի պետական համալսարանները (ՌԴ) և Խարկովի Կարազինի անվան պետական համալսարանը (Ուկրաինա): Այդ լաբորատորիայի շրջանակներում ՎՊՀ-ի աշխատակիցները և ուսանողները մասնակցել են տարբեր երկրներում իրականացված բազում սեմինարներին, գիտաժողովներին, որոնց շնորհիվ առավել բարձրացել է բուհի տեսանելությունը:

2017թ-ի սեպտեմբերին լաբորատորիայի աշխատանքներն անցկացվեցին Վանաձորում: Նիստերի ընթացքում ներկայացվեցին Գերմանիայից, ՌԴ-ից, Բելառուսից և Ուկրաինայից ժամանած գործընկերների, ինչպես նաև ՎՊՀ-ի ուսանողների և դասախոսների զեկուցումները՝ նվիրված սոցիալական աշխատանքի, միջմշակութային հաղորդակցության բնագավառի տարբեր խնդիրներին: Նշված բուհերի աշխատակիցները հաճախ ակտիվ մասնակցություն են ունենում ՎՊՀ-ում կազմակերպվող միջազգային գիտաժողովներին:

Բուհն ամեն տարի ձեռնամուխ է լինում միջազգային գիտաժողովների կազմակերպմանը: Գործընկեր և արտասահմանյան այլ բուհերի 14 աշխատակիցներ ընդգրկված են գիտաժողովների կազմակերպման և խմբագրակազմում:

Նորարարական մեթոդների կիրառմանն ուղղված ձեռքբերումներից մեկը 2018 թ-ի



փետրվարին բուհի մասնակցությունն էր Վոլգոգրադի պետական համալսարանի հետ անցկացված առցանց կոնֆերանսին՝ նվիրված Ստալինգրադի ճակատամարտին: Այդ միջոցառման շնորհիվ առավել սերտացան գործընկեր համալսարանի կողմից համագործակցության առաջարկները և նույն համալսարանից ՎՊՀ-ում հյուրընկալվեց կենսաբանության ամբիոնի դոցենտ Դմիտրի Աստախովը, որը հանդես եկավ հետաքրքիր դասախոսությամբ: Այժմ կենսաբանաքիմիական ֆակուլտետի հետ քննարկվում է երկակի աստիճանաշնորհման ծրագրի մշակման հարցը: 2018 թ-ի հոկտեմբերի 17-ից 21-ը ՎՊՀ-ի «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» և «Կառավարում» բաժնի ուսանողները մասնակցել են «Ժամանակը փող է» խորագրով ֆինանսական գրագիտության միջազգային գիտագործնական ֆորումին, որտեղ ՎՊՀ-ի թիմը զբաղեցրել է 3-րդ տեղը, իսկ «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» բաժնի 3-րդ կուրսի ուսանող Գևորգ Հախվերդյանն արժանացել է առաջին մրցանակին:

Հետամուտ լինելով զարգացման առանցքային ուղղությանը, Եվրոպայի ընդհանուր կրթական տարածքին ընդգրկվելուն՝ ՎՊՀ-ի ներկայացուցիչները պարբերաբար մասնակցում են Եվրամիության կրթական, աուդիովիզուալ և մշակութային գործակալության Էրազմուս+ հայաստանյան գրասենյակի (EACEA) կողմից կազմակերպվող սեմինարներին՝ բարձրագույն կրթության ոլորտում գործակալության կողմից առաջարկվող Էրազմուս+ բարձրագույն կրթության բարեփոխումների, կարողությունների զարգացման և շարժունության ապահովման դրամաշնորհային ծրագրերին մասնակցելու նպատակով:

Այս ամենն ամփոփելով՝ կարելի է փաստել, որ բուհում ձեռնարկվում են միջազգայնացմանն ուղղված որոշակի քայլեր, որոնք հետագայում կարող են ուղղված լինել բուհի ֆինանսական վիճակի բարելավմանը և դառնալ շահութաբեր և արդյունավետ ռազմավարական տեսանկյունից: Դրական առաջընթացը գնահատելով՝ այնուամենայնիվ հարկ է նշել, որ բուհի ոչ բոլոր ամբիոններն են մեծ հետաքրքրվածություն ցուցաբերում միջազգայնացմանն ուղղված աշխատանքների կատարմանը: Գործընթացի զարգացմանը խոչընդոտում են մի շարք այլ հանգամանքներ, որոնցից կարելի է նշել ոչ բավարար ֆինանսական ռեսուրսները, սակավաթիվ աշխատակազմը, ոչ բոլոր աշխատակիցների օտար լեզուների իմացության բարձր մակարդակը, և այլն:

ԶԱՓՈՐՈՇԻՉ Պ. ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Ուսումնառողների և դասավանդողների օտար լեզուների մասնագիտական մակարդակի իմացությանը նպաստող մեխանիզմները,
 Աշխատակազմի համար նախատեսված օտար լեզվի դասընթացների ցանկը և ժամանակացույցը ([Հավելված 9.4.1](#)),
 Օտար լեզուներով տեղեկատվական նյութերը ([Հավելված 9.4.2](#)),
 Միջազգայնացումը խթանող այլ մեխանիզմներ:

Օտար լեզուներին տիրապետող դասավանդողների, վարչական աշխատողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիների համար: Ստորև ներկայացված է անգլերենի A1-ից C1 մակարդակին տիրապետող աշխատակիցների քանակը:



Աշխատակիցներ	2016		2017		2018	
	Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%
Դասավանդող	59	23	66	27	66	29
Վարչական աշխատող	39	24.3	46	27.8	51	30.7

Քանի որ վերջին տարիների ընթացքում չի անցկացվել ամբողջ դասախոսական և վարչական կազմի գիտելիքների ստուգում ըստ լեզվական մակարդակների, ներկայումս հնարավոր չէ առանձնացնել անգլերենին տիրապետող աշխատակիցների քանակն ըստ առանձին մակարդակների: 2019 թ-ից սկսած բաժինը կիրականացնի աշխատակիցների թեստավորում ըստ լեզվական մակարդակների, որի արդյունքում կներկայացվի նաև աշխատակիցների լեզվական գիտելիքների մակարդակի բարձրացումը:

Օտար լեզուներին տիրապետող ուսանողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիների համար: Ուսանողերը տիրապետում են նշված լեզուներին A1 մակարդակից սկսած մինչև B2 մակարդակը:

Ուսանողներ	2016		2017		2018	
	Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%
Բակալավր	2232	100	2330	100	1974	98
Մագիստրոս	124	100	164	100	138	99
Հետազոտող	5	100	12	100	11	100

Օտարերկրյա ուսումնառողներին առաջարկվող օտար լեզուներով դասավանդվող դասընթացներ/ՄԿԾ-ներ և օտարերկրյա ուսանողների թիվ ըստ տարիների

Դասընթացի կամ ՄԿԾ-ի անվանումը	2015	2016	2017	2018
Անգլերեն լեզու և գրականություն, պատմություն (որոշ առարկաներ) Դասավանդման լեզուն՝ անգլերեն, ռուսերեն	1			
«Բիզնեսի հիմունքներ», «Ինչպես վաճառել ՝ ինչպես ներկայացնել ձեր բիզնեսը», «Մեփական բիզնեսի գաղափարը», «Փաստարկը միջանձնային հարաբերություններում», «Ստերոտիպերը հաղորդակցման մեջ», «Ընկերությունների անունները. անհրաժեշտությունն է, թե՞ մոդա» Դասավանդման լեզուն՝ անգլերեն			10	

Օտար լեզուներով դասավանդվող դասընթացներում/ՄԿԾ-ներում ներգրավված ուսանողների թիվը ըստ երկրների

Երկրներ	2015	2016	2017	2018
Լեհաստան	1		10	



ՎՊՀ-ն հանդիսանալով BOOST /Հայաստանյան համալսարանների միջազգայնացման ռազմավարության և մարքեթինգի խթանում/ նախագծի անդամ, միջազգայնացման բնագավառում կատարել է միջազգայնացման բենչմարքինգ՝ հիմնվելով շվեդական, իսպանական, էստոնական և պորտուգալական բուհերի միջազգայնացման գործընթացների վրա:

Համեմատական վերլուծություն է կատարվել կարողությունների ձևավորման և միջազգային կրեդիտային շարժունության շրջանակներում ՎՊՀ-ի հետ համագործակցող բուհերի միջազգային գործունեության հիման վրա.

1. Թագավորական տեխնոլոգիական ինստիտուտ, Ստոքհոլմ, Շվեդիա
2. Լինչյոպինգի համալսարան, Շվեդիա
3. Բարսելոնայի պոլիտեխնիկ համալսարան, Իսպանիա
4. Ռովիրայի և Վերգլիոսի համալսարան, Տարագոնա, Իսպանիա
5. Գրանադայի համալսարան, Իսպանիա
6. Տալինի տեխնոլոգիական համալսարան, Էստոնիա
7. Լիսաբոնի տեխնոլոգիական համալսարան, Պորտուգալիա
8. Պորտուի համալսարան, Պորտուգալիա

Վերոնշյալ բուհերում միջազգայնացման գործընթացը բավականին շուտ է սկսվել և բոլոր երկրները, բացի Շվեդիայից ունեն ազգային միջազգայնացման ռազմավարություն: Շվեդական բուհերի ազգային միջազգայնացման ռազմավարության բացակայությունը կարող է բացատրվել շվեդական բուհերի ինքնավարությամբ: Փոխարենը մշակվել է շվեդական վարկանշավորման մեթոդաբանություն (STINT methodology), որով առաջնորդվում են շվեդական բուհերը:

Նշված բուհերում առավել կարևորվում են ներգնա և արտագնա ուսանողների և աշխատակիցների շարժունությունը, որը հասնում է կամ գերազանցում 20%-ը, մեծ ուշադրություն է դարձվում հետազոտության միջազգայնացմանը, գործատուների հետ կապի ամրապնդմանը, օտարալեզու կրթական ծրագրերի ներդրմանը, կրթության և հետազոտության որակի բարելավմանը, SS տեխնոլոգիաների կատարելագործմանը, ազգային և միջազգային ցանցերին անդամակցությանը, միջազգային դեսպանների ծրագրի զարգացմանը, և այլն:

ՎՊՀ-ում, ինչպես նաև ՀՀ-ի շատ բուհերում, միջազգայնացման գործընթացը դեռևս անկատար է, և նշված քայլերն իրականացնելու համար անհրաժեշտ է երկարատև և համակարգված գործունեություն: Նշված համալսարանների հետ համագործակցությունը բավականին խթանի միջազգայնացման քայլերը ճիշտ կազմակերպելու գործում:

9-ԲԴ ԶԱՓԱՆԻՇԻ SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Բարձրագույն կրթության ոլորտում կարողությունների զարգացմանն ուղղված միջազգային նախագծերին մասնակցության փորձ:	1. Սահմանափակ ֆինանսական միջոցներ բուհի միջազգայնացման գործընթացին՝ համակողմանիորեն նպաստելու համար: 2. Օտար լեզվով առաջարկվող սակավաթիվ



<p>2. Միջազգային մագիստրոսական կրթական ծրագրի իրականացման փորձ (MAHATMA):</p> <p>3. Շարունակական կրթության համակարգի առկայություն:</p> <p>4. Անգլերենի կատարելագործման նպատակով աշխատակիցների համար կազմակերպվող դասընթացներ:</p> <p>5. Միջազգային փորձ շարժունության նախագծերում, ուսանողների (արտագնա) և աշխատակազմի շարժունություն:</p> <p>6. Վերջնարդյունքների վրա հիմնված կրթական ծրագրերի իրականացում:</p> <p>7. Բուհում ամենամյա միջազգային գիտաժողովների կազմակերպում:</p> <p>8. Փոխանակման ծրագրերում ECTS կրեդիտների փոխանցման և փոխճանաչման համակարգի կիրառում:</p> <p>9. Բուհի ներգրավվածություն միջազգայնացման գործընթացին:</p> <p>10. Հեռավար դասընթացների համակարգի մեկնարկ:</p>	<p>դասընթացներ՝ պայմանավորված լեզվի մասին օրենքի սահմանափակումով և այլ հանգամանքներով:</p> <p>3. Արտասահմանյան բուհերի հետ գիտահետազոտական համատեղ ծրագրերի բացակայություն:</p> <p>4. Աշխատակազմի և ուսանողների միջմշակութային հաղորդակցության փորձի պակաս:</p> <p>5. Շարժունությանը նպաստող ենթակառուցվածքների բարելավման անհրաժեշտություն:</p> <p>6. Բուհական մարկետինգի անկատարություն:</p> <p>7. Կայքի օտարալեզու տեղեկատվության անկատարություն:</p> <p>8. Շարժունության ծրագրերի շրջանակներում ՎՊՀ-ում ուսումնառություն ստացող միջազգային ուսանողների բացակայություն:</p> <p>9. Բուհական ցանցերում ներգրավվածության բացակայություն:</p>
<p>Արտաքին հնարավորություններ</p>	<p>Վտանգներ</p>
<p>1. Շարունակական կրթության համակարգի հնարավորությունների ընդլայնում միջազգային հարթակում:</p> <p>2. Արտասահմանյան բուհերի հետ համագործակցության շրջանակների ընդլայնում:</p> <p>3. Կրկնակի աստիճանաշնորհման ծրագրերի ավելացում աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:</p> <p>4. Համատեղ գիտահետազոտական նախագծերի և ծրագրերի իրականացում:</p> <p>5. Անդամակցություն բուհական ցանցերին:</p>	<p>1. Ֆինանսական միջոցների ոչ արդյունավետ բաշխում և տեսլականի կատարողականի արդյունավետության նվազում:</p> <p>2. Միջազգային ծրագրերի մասնակցության ցուցանիշների նվազում:</p> <p>3. Միջազգայնացման ընդլայնման և տարածման արդյունքում ուղեղների արտահոսքի ավելացում:</p> <p>4. Ոչ բոլոր մասնագիտությունների գծով շարժունության իրականացում:</p> <p>5. Միջազգային աշխատաշուկայի պահանջների նկատմամբ ոչ համարժեք կողմնորոշում:</p> <p>6. Գիտական համատեղ ծրագրերի իրականացման ցածր մակարդակ:</p>



Վերոնշյալ թույլ կողմերի հաղթահարման ուղիներն են՝

- օտարալեզու կրթական ծրագրերի (դասընթաների) գործարկում,
- դասավանդման նորարարական մեթոդների և որակի բարելավում բուհում վերջերս հիմնադրված Ռեսուրս կենտրոնի աշխատանքների միջոցով,
- եվրոպական բուհերի հետ համագործակցության ընդլայնում և ընդգրկում բուհական ցանցային գործակցություններում,
- ուսանողական ծառայությունների բարելավում,
- գործընկեր բուհերի հետ համատեղ գիտահետազոտական աշխատանքների համակարգում:



X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

ՎՊՀ-ի ՈԱԿ-ը գործում է ՈԱԿ-ի կանոնակարգին համապատասխան, որը կարգավորում է Կենտրոնի կազմակերպչական և մեթոդական հիմքը, նրա հիմնական խնդիրները, գործառույթները, կառուցվածքը, կազմը, աշխատանքի ուղղությունները, ինչպես նաև Համալսարանի ստորաբաժանումների և այլ կազմակերպությունների հետ փոխհարաբերությունները: Որակի ապահովման ներքին համակարգը նպաստում է համալսարանի կրթական, գիտական և մեթոդական գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը: Ներկա փուլում որակի ներքին համակարգի խնդիրները կենտրոնացված են Համալսարանի որակի ապահովման կառավարման և որակի մշակույթի տարածման համակարգի զարգացմանը և բարելավմանն ուղղված գործողությունների արդյունավետության բարձրացման վրա:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:	
Հիմքեր	Որակի ապահովման ներքին համակարգի ձեռնարկը
	Որակի ապահովման ձեռնարկ
	Որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը
	Որակի ապահովման հայեցակարգ
	Այլ փաստաթղթեր
<p>ՎՊՀ-ի որակի ապահովման քաղաքականությունը միտված է Համալսարանի առաքելության նպատակների իրականացման գործընթացների որակի ապահովմանը և շարունակական բարելավմանը: ՎՊՀ-ի որակի ապահովման քաղաքականությունը իրականացվում է ըստ Համալսարանի որակի ապահովման ռազմավարական պլանի՝ որակի ապահովման համակարգում մշակված կանոնակարգերին համապատասխան ընթացակարգերով: Համալսարանի որակի ապահովման և զարգացման ռազմավարությունը ներկա փուլում նպատակաուղղված է Համալսարանի գործունեության բոլոր ոլորտներում որակի գործընթացների արդյունավետության բարձրացմանը, որակի մշակույթի զարգացմանը՝ բոլոր շահակիցների ներգրավմամբ և մասնակցության շարժառիթների և արդյունավետության բարձրացմամբ:</p> <p>Համալսարանի ՈԱԿ-ի գործընթացները և որակի ապահովման քաղաքականությունն իրականացնող սուբյեկտների աշխատանքները համակարգվում են Որակի ապահովման կենտրոնի կողմից հստակ քաղաքականությամբ՝ ՎՊՀ-ի որակի ապահովման ռազմավարությանը համապատասխան և շահակիցներին հասանելի ընթացակարգերով, մեխանիզմներով, գործիքներով: Որակի ապահովման գործընթացներին մասնակցում են բոլոր շահակիցները՝ հնարավորություն ունենալով ազատ բարձրաձայնելու իրենց խնդիրները և առաջարկությունները: Ուսանողները, շրջանավարտները և գործատուների</p>	



ներկայացուցիչները մասնակցում են կրթական ծրագրերի մշտադիտարկման, աուդիտի, վերանայման, վերամշակման աշխատանքներին: Գործատուների ներկայացուցիչները պաշտոնական կարգավիճակով մասնակցում են բակալավրի ավարտական աշխատանքների և մագիստրոսների ավարտական թեզերի պաշտպանությանը: Ուսանողները ներգրավված են նաև քննությունների բողոքարկման աշխատանքներում: Համալսարանի ՈԱ-ի կենտրոնը որակի ապահովման շարունակական բարելավման և համակարգի զարգացման նպատակով մշտադիտարկման, աուդիտի, հարցումների, ֆոկուս-խմբերի, վերլուծությունների, քննարկումների, ստորաբաժանումների ինքնագնահատման գործընթացներին աջակցման և այլ մեխանիզմներով գործընթացների պարբերաբար ստուգումներ է անցկացնում և խորհրդատվություններ տրամադրում, առաջարկություններ անում:

Համալսարանի ստորաբաժանումներում ՈԱ-ի քաղաքականությունը իրականացվում է Որակի ապահովման ֆակուլտետային աշխատախմբերի (ՈԱՖԱ) համար մշակված կանոնակարգին համապատասխան ընթացակարգով: ՈԱՖԱ-ի կողմից կրթական գործընթացի պարբերաբար անցկացվող մշտադիտարկումների, ուսանողների և դասախոսների, այլ շահակիցների շրջանում անցկացվող հարցումների, վերլուծությունների տվյալները քննարկվում են տեղերում և ամփոփվում ՈԱ-ի կենտրոնում: Արդյունքում ձևավորված առաջարկությունները և երաշխավորությունները ստորաբաժանումներ են ներկայացվում գործընթացների պարբերաբար վերանայման, բարելավման և զարգացման ծրագրերի կազմման ու իրականացման համար: ՈԱ-ի բոլոր գործընթացները կրում են պաշտոնական բնույթ և մատչելի ու հասանելի են շահակիցներին, ինչը նպաստում է գործընթացների նկատմամբ հանրային վստահության ամրապնդմանը:

Որակի ապահովման գործընթացները մշտական են, դրանք շարունակական բնույթ են կրում, որոնց իրական արդյունքները ի հայտ են գալիս աստիճանաբար և արդեն էականորեն դրսևորվում են ինչպես կրթական, հետազոտական, այնպես էլ դաստիարակչական, կազմակերպական և տեղեկատվական ոլորտներում: Չնայած այդ ուղղությամբ կատարված մեծածավալ աշխատանքներին՝ այնուամենայնիվ, դեռևս անելիքներ շատ կան, և գործընթացը շարունակվում է:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Բ. Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈԻՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Որակի ապահովման գործընթացներում մարդկային ռեսուրսների ներգրավվածությունը կարգավորող փաստաթղթերը ([Հավելված 10.2.1](#))
 Որակի ապահովման գործընթացների իրականացումը երաշխավորող ֆինանսական ռեսուրսների բաշխումը կարգավորող փաստաթղթերը ([Հավելված 10.2.3](#))
 Որակի ապահովման գործընթացների իրականացումը երաշխավորող նյութական ռեսուրսների բաշխումը կարգավորող փաստաթղթերը ([Հավելված 10.2.2](#))
 Որակի ապահովման ենթակառուցվածքը՝ ներառյալ մարդկային ռեսուրսները և նրանց աշխատանքային նկարագրերը ([Հավելված 10.2.3](#))

ՈԱ համակարգի՝ սահմանված առաքելության և նպատակների իրականացման համար, ինչպես նաև որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման



նպատակով Համալսարանը տրամադրում է ժամանակ, նյութական, մարդկային և ֆինանսական բավարար ռեսուրսներ: Վերջին տարիներին տարբեր ծրագրերի շրջանակում կենտրոնի կողմից ապահովվել են ֆինանսական լրացուցիչ մուտքեր, որոնց հաշվին կենտրոնը համալրվել է տեխնիկական միջոցներով ու սարքավորումներով:

ՈԱ-ի գործընթացները համակարգվում են Համալսարանի որակի ապահովման կենտրոնի, ֆակուլտետային աշխատախմբերի կողմից և կազմակերպվում ու իրականացվում են ներքին և արտաքին շահակիցների կողմից՝ ըստ ժամանակացույցի, որը համաձայնեցվում է Համալսարանի ենթակառուցվածքների աշխատանքների հետ: Որակի ապահովման համակարգի հաստիքների համար մշակված են պաշտոնի նկարագրերը: ՈԱ-ի ֆակուլտետային աշխատախմբերը ձևավորվում են ֆակուլտետներում, որոնց գործունեությունը իրականացվում է ֆակուլտետների որակի ապահովման ծրագրերին համապատասխան:

ՈԱ մշակույթի ձևավորման, որակի կառավարման, որակի մշակույթի զարգացման նպատակով Համալսարանում իրականացվել են կրթության որակի բարելավմանը միտված ծրագրեր և աշխատակիցների վերապատրաստումներ: Ուսանողների, դասախոսների և այլ շահակիցների հետ պարբերաբար կազմակերպվում են որակի ապահովման վերաբերյալ քննարկումներ, վերապատրաստումներ: Չնայած իրականացված աշխատանքներին՝ այնուամենայնիվ, դժվար է շահակիցների տարբեր խմբերի մշտական ակտիվություն ապահովել, ինչը հիմնականում պայմանավորված է ցածր մոտիվացիոն գործոններով:

ՈԱ գործընթացների իրականացման համար ֆինանսական ռեսուրսների բաշխումը կատարվում է աշխատավարձի և խրախուսման ձևերով: Նյութական ռեսուրսների ձեռքբերումը կատարվում է կենտրոնի կողմից վերհանված կարիքների հիման վրա՝ ըստ տվյալ տարվա համար բուհի կողմից նախատեսվող ֆինանսական հնարավորությունների: Օրինակ՝ 2017թ. ուսումնասիրվել են որակի ապահովմանը տրամադրվող ռեսուրսները, իրականացվել է համեմատական վերլուծություն մյուս ստորաբաժանումների հետ և առաջարկվել է.

- ՈԱԿ-ի ֆակուլտետային աշխատախմբերի անդամների գործառնությունները ամրագրել ստորաբաժանման համապատասխան փաստաթղթերում: Բուհի իրավական և կազմակերպչական փաստաթղթերում ներառել Համալսարանի ստորաբաժանումներին համապատասխան ռեսուրսների բաշխման մեխանիզմներ:
- Տրամադրել ռեսուրսներ և ավելացնել որակի ապահովման և կառավարման գործընթացի որոշակի պատասխանատվություն՝ ներկայացնելով նրանց դերը:
- Ապահովել լրացուցիչ ֆինանսական մուտքեր դեպի ՈԱ-ի համակարգ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

Որակի ապահովման գործընթացներում ուսումնասողների և այլ շահակիցների Հիմքեր ներգրավվածությունը հաստատող հիմքերը
<https://www.vsu.am/rektor/vorakiapahovmankentron>

ՈԱ-ի կենտրոնը կարևորում է մասնակցային սկզբունքով բոլոր շահակիցների



ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում:

ՈԱԿ-ը, համագործակցելով Ֆակուլտետային ՈԱ-ի աշխատախմբերի հետ, պարբերաբար համատեղ հետազոտություններ, վերլուծություններ, ուսումնասիրություններ և քննարկումներ է իրականացնում արտաքին և ներքին շահակիցների հետ /պրոֆեսորադասախոսական կազմ, վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ, ուսանողներ և ուսխորհրուրդ, շրջանավարտներ, գործատուներ/: Աշխատանքների արդյունքները ամփոփվում են տարեկան հաշվետվություններում:

ՈԱԿ-ի կողմից ուսանողներին տրամադրվում է համապատասխան խորհրդատվություն՝ կրթական միջավայրին դյուրին և արդյունավետ ինտեգրվելու համար:

Ներքին և արտաքին շահակիցների կարիքների ուսումնասիրման, վերհանման և վերլուծման համար կիրառվում են տվյալների հավաքագրման քանակական և որակական մեթոդներ:

Իրականացված հետազոտությունների և վերլուծությունների արդյունքները ներկայացվում են Համալսարանի գիտխորհրդի նիստերին և ընդունվում ի գիտություն:

Արտաքին և ներքին շահակիցները ընդգրկված են բուհի որակի ապահովման, մշտադիտարկման, աուդիտի, արտադրական պրակտիկայի, ամփոփիչ ատեստավորման, ինչպես նաև ՄԿԾ-ների մշակման և վերանայման գործընթացներում:

Չնայած ներքին և արտաքին շահակիցների կարիքները պարբերաբար վերհանվում են, այնուամենայնիվ, խնդիրների լուծման գործընթացը որոշակիորեն դանդաղ է ընթանում:

Ուսանողների հետ հանդիպումների և քննարկումների ժամանակ օգտագործվում են kahoot.it-ի միջոցով կազմված հարցումները, որոնք հնարավորություն են տալիս անմիջապես արձագանքելու բարձրացված հարցերին, «լսելի» դառնալ ավելի լայն շահակիցների խմբերում: Սակայն ՏՏ-ի կիրառության աստիճանը կարիքների վերհանման գործընթացում դեռևս ցածր է (սակավաթիվ են առցանց հարցումները):

Չնայած առկա են ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմներ, բայց վերջիններս համակարգման և կատարելագործման կարիք ունեն: Այդ իսկ պատճառով փորձարկվում են ՈԱ-ի գործընթացների գնահատման և տեղեկատվության ապահովման ԳԱՑ և CALS տեխնոլոգիաները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Հիմքեր	<p>Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականությունը և ընթացակարգերը</p> <p>Որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմները և գործիքները</p> <p>Համապատասխան այլ հիմքեր և վերլուծություններ</p>
--------	---



Բարձրագույն մասնագիտական կրթության արդի մարտահրավերներին ընդառաջ և հետապնդելով ուսանողների հետազոտական գործունեությունը և ուսումնառության արդյունավետ զուգակցումը բարձրացնելու, որակի բարձրացման, ուսանողների և դասախոսների շարժունության մեխանիզմների որակի ապահովման, Համալսարանի կողմից շնորհվող որակավորումների միջազգային ճանաչման գործընթացների արդյունավետությունը ապահովելու նպատակ ` 2017-2019թթ-ին վերանայվել է ՈԱ-ի համակարգի փաստաթղթային փաթեթը: Գործընթացի արդյունավետությանը նպաստել է նաև ՄԿԾ-ների մշակման և վերանայման հիմքում դրված բենչմարքինգի մեխանիզմը:

Որակի ներքին ապահովման համակարգի գործունեության շարունակական բարելավման նպատակով շահակիցների ձեռքբերումների և անցկացված ուսումնասիրությունների հիման վրա վերանայվել, վերամշակվել և 2019 թ-ին վերահաստատվել է «ՎՊՀ-ի ՈԱ հայեցակարգը», որակի ապահովման և կառավարման քաղաքականությունները, բարելավման մեխանիզմները և գործիքակազմը:

Համալսարանի որակի ապահովման համակարգի վերանայման ու բարելավման քաղաքականությունը իրականացվում է կրթական, հետազոտական ու կազմակերպական ոլորտներում տարբեր մեխանիզմներով ու գործիքակազմով.

ա) 2016 թ-ին ՎՊՀ-ի ստորաբաժանումների ռազմավարական ծրագրերի ու պլանների իրականացման գործընթացի ուսումնասիրություն, որի արդյունքների ուսումնասիրության հիման վրա.

- ✓ վերանայվել, հստակեցվել և կոնկրետացվել են ֆակուլտետների ու ամբիոնների առաքելության ու տեսլականի ձևակերպումները Համալսարանի զարգացման հայեցակարգին համապատասխան,

- ✓ ռազմավարական պլաններում նշված նպատակներն ու խնդիրները հստակեցվել են ըստ առաքելության և գործունեության ոլորտների, տարանջատվել են իրարից, որոշվել ակնկալվող արդյունքների գնահատման ցուցիչները,

- ✓ ռազմավարական պլաններում ներկայացվել են Համալսարանի զարգացման հայեցակարգում ձևակերպված խնդիրները և գործառույթները ըստ գործունեության ուղղությունների:

բ) 2016-2017 թթ-ին` դիմորդների հավաքագրման մեխանիզմների արդյունավետության գնահատում,

գ) 2016թ-ին ` ՎՊՀ պրոդեստրադասախոսական կազմի համալրման մեխանիզմների ուսումնասիրություն և կարգի վերլուծություն,

դ) 2017թ-ին` երիտասարդ դասախոսների հավաքագրման և խրախուսման քաղաքականության ուսումնասիրություն,

ե) ՎՊՀ որակի կառավարման համակարգի քաղաքականության համեմատական վերլուծություն Երևանի Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի հետ` ՊԻԳԲ սխեմայով որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթացի ուսումնասիրության նպատակով,

զ) 2017թ-ին` ստորաբաժանումների, արտաքին և ներքին շահակիցների հետ փոխհարաբերություններում կոնֆլիկտային միջադեպերից խուսափելու նպատակով անցկացված ուսումնասիրություն ՎՊՀ-ում` էթիկայի կանոնների ներդրման



առաջարկությամբ,

է) 2017թ-ին՝ ՎՊՀ որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականության ուսումնասիրություն՝ հետադարձ կապի կատարելագործման և որակի ներքին ապահովման համակարգի վերանայման գործընթացի փաստաթղթային հիմքի բարելավման նպատակով,

ը) Որակի ներքին ապահովման գործընթացի կառավարման նպատակով տրամադրվող ռեսուրսների ուսումնասիրություն,

թ) Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցված մեխանիզմների ուսումնասիրության անձնագրի մշակում,

ժ) ՎՊՀ-ում գիտահետազոտական ոլորտի քաղաքականության իրականանացման մեխանիզմների ուսումնասիրություն (ՈԱԿ-ի զեկուցում համալսարանի գիտխորհրդում),

ի) ՎՊՀ արտաքին կապերի իրականացումը խրախուսող քաղաքականության ուսումնասիրություն:

Համալսարանի ուսանողների համար նախատեսված որակի ապահովման ձեռնարկը մշակվել է նրանց կողմից բարձրացրած հարցերի, խնդիրների, կարիքների հիման վրա, որոնք կարևորվում են որակի ապահովման համապատասխան մշակույթի ձևավորման, զարգացման գործընթացներում՝ միաժամանակ նպատակ հետապնդելով ավելացնելու ուսանողների ներգրավվածությունը և բարձրացնելու նրանց ակտիվությունը գործընթացներում:

Մասնավորապես, մարդկային ռեսուրսների աուդիտի արդյունքներից ելնելով, առաջարկություններ են ներկայացվել՝ վերանայելու և բարձացնելու մարդկային, ֆինանսական ռեսուրսների կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինների և գրադարանի գործունեության արդյունավետությունը:

ՄԿԾ-ների մշակման և վերանայման հիմքում դրված է ընդհանուր, ֆունկցիոնալ և մրցունակային բենչմարքինգի մեխանիզմ, որը կիրառվում է ըստ ՎՊՀ –ում մասնագիտական կրթական ծրագրի համար առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման քաղաքականության և ընթացակարգի:

Ներկայացնել այն կազմակերպությունների ցանկը (նշելով երկիրը), որոնց օրինակով ՄՈՒՀ-ը կատարել է որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ (առաջավոր փորձի համեմատական վերլուծություն):

- Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,
- Հայաստանի Հյուսիսային Համալսարան,
- Երևանի Պետական Համալսարան,
- Ռուսիի Անգլի Կենտրոնի Համալսարան, Բուլղարիա,
- Տվերի Պետական Համալսարան,
- Բաթ Սպա համալսարան:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:



Հիմքեր	Տարեկան ինքնավերլուծությունները և հաշվետվությունները ըստ ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների: https://www.vsu.am/rektor/vorakiapahovmankentron
<p>ՎՊՀ-ի որակի ապահովման ներքին գնահատման գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով պարբերաբար իրականացվում են Համալսարանի գործունեության տարբեր ենթակառուցվածքների ինքնագնահատում՝ ըստ ՈԱԿ-ի կողմից մշակված ձևաչափերի: Վերջինս հիմք է արտաքին գնահատման համար:</p> <p>ՈԱԿ-ի ուսումնասիրությունների արդյունքում վերհանված խնդիրների լուծման նպատակով իրականացվել են քննարկումներ, ներկայացվել են առաջարկություններ, որոնք հնարավորություն են տվել բարելավելու գործող կարգերը, ձեռնարկելու քայլեր՝ ռիսկերի նվազեցման ուղղությամբ:</p> <p>Որակի համակարգի գործընթացները պարբերաբար վերանայվում են արդյունավետության, արտաքին գնահատման գործընթացների համար բավարար հիմքեր ապահովելու նպատակով:</p> <p>Ինքնավերլուծության զեկույցը նախապատրաստվում է Համալսարանում ստեղծված աշխատանքային խմբի կողմից՝ համաձայն Որակի ապահովման համակարգի ինքնագնահատման և վերանայման կանոնակարգի /որի նախագիծը ոչ պաշտոնական շրջանառության մեջ էր դրվել դեռ 2018 թ-ին/: Յուրաքանչյուր չափորոշիչի վերլուծության պատասխանատվությունը դրված է կոնկրետ անձի վրա: Ինքնագնահատման զեկույցը պարբերաբար քննարկման է ենթարկվում վերոնշյալ խմբի կողմից, այնուհետև ներկայացվում ստորաբաժանումներին: Գործընթացը համակարգվում է Համալսարանի ռեկտորի կողմից:</p>	
<p>ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:</p>	
Հիմքեր	<p>Շահակիցների տեղեկացվածությունն ապահովող մեխանիզմները և համապատասխան փաստաթղթերը (Հավելված 10.6.1)</p> <p>Շահակիցների տեղեկացվածության աստիճանի գնահատման/ վերլուծության արդյունքները մակարդակը (Հավելված 10.6.2)</p>
<p>ՎՊՀ-ի գործունեության արդյունքների վերաբերյալ Համալսարանում գործող տեղեկատվության հավաքագրումից, ռեկտորի ամենամյա հաշվետվություններից և ՎՊՀ-ի կայք-էջից բացի ներդրված են հաշվետվողականության և տեղեկատվության թափանցիկությունն ապահովող նոր մոտեցումներ: Դրանցից են.</p> <p>Որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվողականության և թափանցիկության ապահովման նպատակով մշակվող տվյալները, որոնք հնարավորություն են տալիս ոչ միայն հետևել իրականացված աշխատանքների գրաֆիկին, այլև ծանոթանալ արդյունքներին և անմիջապես կիրառել այն (դրանք պարբերաբար տեղադրվում են ներքին ցանցում և հասանելի են ներքին շահակիցների համար տվյալների բազայում):</p>	



Որակի ապահովման սոցիալական ցանցի միջոցով, որում գրանցված է շուրջ երկու հազար հետևորդ, տեղեկատվություն է տարածվում իրականացված աշխատանքների վերաբերյալ: Այն արդյունավետ է արտաքին շահակիցներին իրագեկելու և ուշադրություն գրավելու տեսանկյունից:

ՈԱԿ-ը պարբերաբար տեղեկատվություն է տրամադրում լրատվության և կապերի բաժնին:

Իրականացված աշխատանքների և վերհանված խնդիրների վերաբերյալ յուրաքանչյուր ամիս հաշվետվություն է ներկայացվում Համալսարանի գիտխորհրդին:

Ցավոք, եթե պլանավորման, իրականացման և ստուգման գործընթացների վերաբերյալ տրամադրվող տեղեկատվությունը հասանելի և թափանցիկ է, ապա երբեմն բարելավման ծրագրերի իրականացման վերաբերյալ կատարողականի հետ կապված դանդաղեցումները խնդիրներ է առաջացնում, որն ավելի հաճախ պայմանավորված է հետադարձ կապի և տեղեկատվության թափանցիկության ապահովման ֆորմալ մեխանիզմների անկատարությամբ:

10-ԲԴ ՉԱՓԱՆԻՇԻ SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ol style="list-style-type: none"> 1. Որակի ապահովման ՊԻԳԲ մոտեցում: 2. Համալսարանի կողմից ՈԱ-ի համակարգի կառավարման մարդկային, նյութական ֆինանսական և ժամանակային ռեսուրսների տրամադրում: 3. ՈԱ մեխանիզմների արդյունավետության շարունակական բարելավում, նոր մեխանիզմների ներդրում: 4. Բոլոր շահակիցների հետ համագործակցային բաց դաշտի ապահովում: 5. ՈԱ-ի գործունեության թափանցիկություն: 6. Աշխատանքային կոմպետենտ և բարենպաստ միջավայր: 	<ol style="list-style-type: none"> 1. Ինքնաֆինանսավորման անբավարար ռեսուրսներ՝ գործընթացների կազմակերպման արդյունավետության շարունակական բարձրացման համար: 2. Նոր ֆինանսական հոսքերի սահմանափակություն պետական և միջազգային ծրագրերի շրջանակներում: 3. ՈԱ-ի գործընթացներում ներգրավված ներքին և արտաքին շահակիցների ակտիվության ցածր մակարդակ և առաջարկներին արձագանքելու դանդաղեցումներ: 4. Առցանց ռեսուրսների /գործիքակազմի/ սահմանափակ կիրառում:
Արտաքին հնարավորություններ	Վտանգներ
<ol style="list-style-type: none"> 1. Որակի ապահովման փորձագիտական շրջանների հետ համագործակցության ընդլայնում: 2. ՈԱ-ի համակարգի կառավարման կատարելագործում, արդյունավետ մոդելների կիրառում, արտաքին նոր շահառուների ներգրավում: 3. Որակավորման բարձրացման նոր ծրագրերում ընդգրկվածության շրջանակի 	<ol style="list-style-type: none"> 1. Սահմանափակ և անկայուն աշխատաշուկա: 2. Ժողովրդագրական անբարենպաստ գործընթացներ: 3. Ուսանողների թվաքանակի շարունակական նվազում: 4. Համալսարանական կրթության բարձր մրցակցային դաշտ: 5. Կրթության ոլորտի օրենսդրական դաշտի



<p>ընդլայնում:</p> <p>4. Մասնագիտական վերապատրաստումներ՝ գործընթացի նկատմամբ կոմպետենտության բարձրացման և ՈԱ-ի մշակույթի զարգացման նպատակով:</p> <p>5. ՈԱ-ի գործընթացների նկատմամբ շահակիցների մոտիվացիայի բարձրացում: Խրախուսման արդյունավետ մեխանիզմների կիրառում:</p> <p>6. Առցանց ռեսուրսների կիրառման հնարավորությունների ընդլայնում:</p>	<p>անկատարություն:</p>
<p><i>Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:</i></p>	
<ul style="list-style-type: none"> • Որակի ապահովման լրացուցիչ ծառայությունների մատուցում: • Ֆինանսական ռեսուրսների կառավարման մեխանիզմների կատարելագործման աջակցություն: • Շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմների կատարելագործում և արդյունավետության բարձրացում: • 2019-2023 թթ. ՎՊՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման աջակցություն՝ մարզի զարգացման ծրագրին համահունչ: • ՈԱ-ի թափանցիկության ապահովման մեխանիզմների և PR-ի կատարելագործում, շահակիցների շրջանում տեղեկատվության տարածման առավել արդյունավետ միջոցների կիրառում: 	



ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿ

N	Հավելվածի N	Անվանում
1.	1.1.1	Հաստատության որակավորումների շրջանակը
2.	1.1.2	ՎՊՀ 2014-2018 ռազմավարական ծրագիրը
3.	1.1.3	ՎՊՀ Բարելավման ծրագիրը
4.	1.2.1	ՎՊՀ-ի առաքելության, սահմանած նպատակների և խնդիրների վերանայման քաղաքականությունը
5.	1.2.2	ՎՊՀ-ի առաքելության վերանայումն արտահայտող որոշումներ (փաստաթղթեր)
6.	1.3.1	Առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման քաղաքականությունն ու ընթացակարգերը
7.	1.3.2	Շահակիցների (դասավանդողների, ուսումնառողների) ներգրավվածությունն արտացոլող հիմքեր
8.	1.3.3	Շահակիցներից ստացված արձագանքները առաքելության մասին
9.	1.3.4	Ռազմավարական ծրագրի իրականացման գնահատմանը նպաստող այլ հիմքեր
10.	2.3.1	Գործողությունների կարճաժամկետ ծրագիրը և իրականացման հիմքերը
11.	2.3.2	Գործողությունների միջնաժամկետ ծրագիրը և իրականացման հիմքերը
12.	2.3.3	Գործողությունների երկարաժամկետ ծրագիրը և իրականացման հիմքերը
13.	2.5.1	CALS
14.	2.6.1	Տվյալների բազայի համակարգ
15.	3.1.1	Քաղաքականություն և ընթացակարգ «Մասնագիտական կրթական ծրագրի համար առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման»
16.	3.2.1	Ուսումնառության արդյունքները և նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումները և մեթոդները
17.	3.3.1	ՄԿԾ-ների մոնիտորինգի արդյունքների վերլուծություն
18.	4.1.1	Յուրաքանչյուր մասնագիտության կրթական ծրագրում ընդգրկված ուսանողների թիվը
19.	4.1.2	Բուհ-դպրոց կապին վերաբերող փաստաթղթեր
20.	4.2.1	Ուսանողների կարիքների վերհանման քաղաքականությունը և ընթացակարգերը
21.	4.2.2	Վերհանված կարիքները փաստող հիմքերը և վերջին 3 տարիների վերլուծությունները
22.	4.2.3	Վերհանված խնդիրների լուծումները և նրանց արտահայտումը ՄՈՒՀ-ի քաղաքականության մեջ



23.	4.3.1	Կանոնակարգ «Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման ու հաշվառման»
24.	4.3.2	Կարգ «Ուսանողների արտալսարանային ինքնուրույն աշխատանքների կազմակերպման և կատարման»
25.	4.3.3	Կարգ «ՎՊՀ-ում ուսանողների գիտելիքների գնահատման արդյունքների բողոքարկման»
26.	4.3.4	Կանոնակարգ «Վանաձորի Հ. Թումանյան անվան պետական համալսարանում ակադեմիական խորհրդատուների գործունեության»
27.	4.3.5	Կարգ «ՎՊՀ կրթական ծրագրերում ընդգրկված կամրնտրական դասընթացների ընտրության»
28.	4.3.6	Ռեկտորի հրաման «Չառաջադիմող ուսանողների հետ աշխատանքի կազմակերպման ժամանակացույցերի ներկայացման/հաստատման ժամկետները»
29.	4.3.7	Խորհրդատուի աշխատանքային տետր
30.	4.7.1	Ուսանողի հետ կնքվող պայմանագրի օրինակ
31.	4.8.1	Ուսումնական գործընթացների վերաբերյալ ուսումնառողների արձագանքի օրինակները
32.	5.1.1	«Հիմնական և համատեղությամբ դասավանդողների կազմը ըստ ամբիոնների և որակավորումների՝ ներառյալ գիտական աստիճանները և կոչումները, աշխատանքային ստաժը բուհում, նրա կողմից վարվող հիմնական դասընթացները» (հաստիքային ցուցակ)
33.	5.7.1	Վարչական աշխատակազմի ցանկը՝ ըստ հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների
34.	6.1.1	ՎՊՀ գիտխորհրդի՝ 28/04/2016թ. թիվ 4 նիստի արձանագրություն
35.	6.2.1	ՎՊՀ գիտխորհրդի՝ 22/02/2018թ. թիվ 2 նիստի, 29/03/2018թ. թիվ 3 նիստի, 31/05/2018թ. թիվ 5 նիստի արձանագրություններ
36.	6.2.2	2016թ. ներհամալսարանական դրամաշնորհ
37.	6.2.3	2017թ. ներհամալսարանական դրամաշնորհ
38.	6.2.4	ՎՊՀ-ի գիտաժողովներ
39.	6.2.5	ՎՊՀ-ի դասախոսների՝ գիտաժողովների նյութերի ժողովածուներում տպագրած գիտական հոդվածների ցանկ 2015-2018թթ.
40.	6.2.6	ՎՊՀ ամբիոնների 2015-2016թթ. գիտահետազոտական աշխ. արդյունավետության վերլուծություն
41.	6.2.7	ՎՊՀ ամբիոնների 2016-2017թթ. գիտահետազոտական աշխ. արդյունավետության վերլուծություն
42.	6.2.8	ՎՊՀ ամբիոնների 2017-2018թթ. գիտահետազոտական աշխ. արդյունավետության վերլուծություն
43.	6.3.1	Ռեկտորի հրաման թիվ 652 Լ/Կ



44.	6.3.2	Ռեկտորի հրաման թիվ 852 Լ/
45.	6.3.3	Գրագործության պատճառով մերժված աշխատանքներ
46.	6.4.1	Միջազգային (ԱՊՀ և օտարերկրյա) և հայաստանյան գրախոսվող ամսագրերում հրապարակումների ցանկը
47.	6.5.1	Ուսանողների հետ համատեղ հրատարակված գիտական աշխատանքների ցուցակ
48.	6.5.2	Գիտահետազոտական աշխատանքների ներդրումը ուսուցման գործընթացում
49.	7.1.1	ՎՊՀ մասնաշենքերը և դրանցում տեղակայված ամբիոնները
50.	7.1.2	ՎՊՀ մասնաշենքեր և դրանցում տեղակայված կաբինետներ և լաբորատորիաներ
51.	7.1.3	Տեղեկանք ՎՊՀ արկա ուսումնական նպատակներին ծառայող համակարգչային տեխնիկայի տեղակայման մասին առ 22.04.2019թ.
52.	7.1.4	Տեղեկանք ՎՊՀ ստորաբաժանումներում արկա թվանիշային տեղեկատվության պահպանման և փոխանակման նպատակներին ծառայող համակարգչային տեխնիկայի տեղակայման մասին առ 22.04.2019թ.
53.	7.2.1	Բյուջեի բաշխումը՝ ըստ մուտքերի և ծախսերի
54.	7.2.2	Բյուջեի բաշխումը՝ ըստ ՄՈՒՀ-ի առաքելության հիմնական ուղղությունների
55.	7.3.1	Հաստատության կրթական նպատակների իրականացման համար ֆինանսական միջոցները կառավարելու և դրանք նպատակներին համապատասխան բաշխելու մեխանիզմները
56.	7.6.1	Առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների ենթակառուցվածքները
57.	9.1.1	Արտաքին կապերի և միջազգայնացման ռազմավարությունը
58.	9.1.2	Արտաքին կապերի և միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները
59.	9.1.3	Արտաքին կապերի և միջազգայնացման տարեկան գործողությունների ծրագրերը
60.	9.1.4	Արտաքին կապերի և միջազգայնացման տարեկան հաշվետվությունները
61.	9.2.1	Արտաքին կապերի և միջազգայնացման համար պատասխանատու ենթակառուցվածքը և դրա գործառույթները
62.	9.3.1	Արտաքին կապերի և միջազգայնացմանը վերաբերող բոլոր համաձայնագրերը
63.	9.4.1	Աշխատակազմի համար նախատեսված օտար լեզվի դասընթացների ցանկը և ժամանակացույցը
64.	9.4.2	Օտար լեզուներով տեղեկատվական նյութերը
65.	10.2.1	Որակի ապահովման գործընթացներում մարդկային ռեսուրսների



		<u>ներգրավվածությունը կարգավորող փաստաթղթերը</u>
66.	10.2.2	<u>Որակի ապահովման գործընթացների իրականացումը երաշխավորող նյութական ռեսուրսների բաշխումը կարգավորող փաստաթղթերը</u>
67.	10.2.3	<u>Որակի ապահովման գործընթացների իրականացումը երաշխավորող ֆինանսական ռեսուրսների բաշխումը կարգավորող փաստաթղթերը</u>
68.	10.6.1	<u>Շահակիցների տեղեկացվածությունն ապահովող մեխանիզմները և համապատասխան փաստաթղթերը</u>
69.	10.6.2	<u>Շահակիցների տեղեկացվածության աստիճանի գնահատման/ վերլուծության արդյունքները մակարդակը</u>
70.	3	<u>«Կենսաբանության», « Բնֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի» բակալավրի և մագիստրատուրայի ՄԿԾ-ների, «Կառավարում» ՄԿԾ-ների բակալավրի, «Կրթության կառավարման» մագիստրատուրայի ՄԿԾ-ի ինքնավերլուծություններ</u>